

ԹՈՐՈՆԹՈՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԱՆԴԱՍԱԿԱՆ 73-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ



Շաբաթ, 28 Փետրուար, 2026
Թորոնթօ - Գանատա

ՀՐԱԲԷՐ | ԱՆՂԱՍԱԿԱՆ 73-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Շաբաթ, 28 Փետրուար, 2026 | 5:30կ.ե.

Սիրելի անդամ-անդամուհիներ թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաք. Եկեղեցւոյ. Այսու գրով, սիրով կը հրաւիրենք ձեզ ներկայ գտնուելու Եկեղեցւոյս տարեկան 73-րդ Անդամական Ընդհանուր Ժողովին, որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, 28 Փետրուար, 2026, երեկոյեան ժամը 5:30-ին, Եկեղեցւոյս «Յովնանեան» ներքնասրահին մէջ: Եթէ վերոյիշեալ ժամուն մեծամասնութիւն չունենալու պարագային, ներկաները մեծամասնութիւնը նկատուելով, ժողովը պիտի շարունակուի նոյն ընթացքով:

Սիրելիներ, իւրաքանչիւրիդ ներկայութիւնն ու մասնակցութիւնը այս ժողովին, պիտի ունենայ իր դրական եւ շինիչ տեղն ու դերը, մեր եկեղեցւոյ առաքելութեան եւ պայծառութեանի խնդիր: Հետեւաբար, կը խնդրենք, որ ձեր ներկայութեամբ եւ մասնակցութեամբ առաւել իմաստ եւ խորք տաք մեր հաւաքական առաքելութեան եւ աշխատանքին:

ՀՈՎԻԷՔ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

ՕՐԱԿԱՐԳ

- 1.-Աղօթք եւ ժողովի բացում
- 2.-Ընտրութիւն ժամանակաւոր դիւանի
- 3.-Ընտրութիւն մնայուն դիւանի
- 4.-Օրակարգի հաստատում
- 5.-Ընտրութիւն Բանաձեւի Յանձնախումբի
- 6.-Խօսք՝ ի դիմաց Առաջնորդ Սրբազան Հօր
- 7.-Ընթերցում եւ վաւերացում նախորդ (72-րդ) կիսամեայ անդամական ժողովի ատենագրութեան
- 8.-Միամեայ Բարոյական տեղեկագրի ամփոփ ներկայացում եւ քննարկում
- 9.-Միամեայ նիւթական տեղեկագրի ներկայացում եւ քննարկում
- 10.-Չեկոյցներ 71-րդ անդամական ժողովին Ընտրուած Յանձնախումբերու. -
ա- Հաշուեքննիչ Յանձնախումբի-
բ-Արխիւային Յանձնախումբի
գ- Ընտրողական Յանձնախումբի
- 11.-Նիւթաբարոյական տեղեկագիրներու քննարկում եւ արժեւորում
- 12.- Շինարարութեան եւ Հանգանակութեան Տեղեկութիւն
- 13.-Ծրագիր՝ Նոր Գերեզմանի Հողաշերտ ունենալու
- 14.-Յառաջիկայ տարեշրջանի նախահաշիւի քննարկում եւ վաւերացում
(Հաստատում ու վաւերացում նախատեսուած նորոգութեան նախահաշիւի)
- 15.-Ընտրութիւն.-
ա- Հոգաբարձական լրացուցիչ անդամներու
բ.- Երեսփոխանական լրացուցիչ անդամներու
գ- Արխիւային Յանձնախումբի
դ- Հաշուեքննիչ Յանձնախումբի
ե- Ընտրողական Յանձնախումբի
- 16.-Բանաձեւի Յանձնախումբի Չեկոյց եւ Բանաձեւերու Վաւերացում
- 17.-Չանագանք
- 18.-Աղօթք եւ ժողովի փակում

ՀԱՃԵՅԷՔ ԺՈՂՈՎԻ ԹՈՒՎԿԱՆԷՆ ԱՌԱՋ ՎՃԱՐԵԼ ԶԵՐ ՅԵՏՆԵԱԼԱՆՂԱՍԱԿՈՒՐԵՐԸ

Ծանօթ.- Կարող էք ձեր յուսարանական հարցումները եւ քննարկումները ուղղակիել

ե-նամակով հետեւեալ հասցէին.- office@stmarytoronto.ca

ՀՈԳԵԻՈՐ ՀՈՎԻՆԵՐՈՒ ԵՒ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՄԻԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
(Մարտ 2025- Փետրուար 2026)

Նախաբան

2025-2026 տարեշրջանի Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ շրջանաւարտ հոգաբարձութեան գործունէութիւնը կարելի է բնութագրել որպէս աշխոյժ ու բազմաբնոյթ ծրագիրներով օժտուած բեղուն տարեշրջան մը:

Այս տարեշրջանի ընթացքին զանազան նոր նախաձեռնութիւններ լոյս տեսան, որոնք աշխատանքի նոր հորիզոններ բացին մեր եկեղեցւոյ առաջ: Անոնց կարգին կարելի է թուարկել՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա-ի գահակալութեան 30-ամեակի առիթով Վեհափառ Հայրապետի մեծաշուք ընդունելութիւնը, Երիտասարդներու եւ մանուկներու Քրիստոնէական դաստիարակութեան մշակում եւ գործերու ընդլայնում, Եկեղեցւոյ համալսարանական կրթաթոշակներու ընդլայնում, Եկեղեցւոյ կենսական նորոգութիւններու շարքին՝ նոր ջերուցման եւ զովացուցիչ օդափոխիչ մեքենաներու զետեղում եւ նորոգութիւն, Եկեղեցւոյ տանիքի ամբողջական նորոգութիւն եւ վերապատում հերձաքարով, գերեզմաններու հողաշերտերու մեծաթիւ քանակութեամբ ապահովումը ...եւ այլն:

Արդ, սոյն տեղեկագրով կը ներկայացնենք 2025-2026 տարեշրջանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձութեան գործունէութեան մանրամասնութիւնները:

1. Հոգեւոր Հովիւներու Զեկոյց

Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւները, թելադրութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր, ինչ պէս նաեւ եկեղեցւոյ անդամական ժողովէն բխած առաջարկներուն, (կայացած Շաբաթ 1 Մարտ, 2025)-ի, առաջնահերթութիւն նկատեցին զբաղուիլ, Ս. Գիրքի սերտողութեան, կրօնական եւ քրիստոնէական, դաստիարակչական, ուսուցողական, կիրականօրեայ դպրոց, ծիսական, քարոզչական, հովուական, հիւանդաց եւ ծերանոցներու այցելութեան եւ ընկերային հարցերով: Հովիւներս միշտ ջանացինք բարձր պահել հայ եկեղեցւոյ եւ եկեղեցականութեան արժանապատուութիւնն ու վարկը: Աստուծոյ ապաւինելով կարողացանք յաղթահարել բոլոր խոչընդոտները, ըստ կարելոյն:

Այս առթիւ խորին շնորհակալութիւն կը յատնենք Առաջնորդ Սրբազան Հօր, որ իր Հայրական հովանաւորութիւնը կը վայելենք, եկեղեցւոյ Հոգաբարձութեան, Մարկաւագաց եւ Դպրաց դասերուն, յանձնախումբերու անդամներուն, որոնք ամբողջ տարին նեցուկ կանգնեցան մեր գործունէութեան հեզասահ ընթանալուն: Թող Աստուած օրհնէ եւ հովանաւորը մեր բոլորի ծառայութիւնը:

- Առաջաւորաց Պահք Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցիէն ներս: Չորեքշաբթի, 12 Փետրուար 2025-ին, Առաջաւորաց Պահքի եռօրեայ ծումապահութեան աւարտին, Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ վաղ առաւօտեան ժամը 6-ին, խաչահանգիստ-Ջրօրհնէք, կարգ ապաշխարութեան եւ Ս. Հաղորդութեան մատակարարում կատարուեցաւ: Արարողութեան ներկայ էին, եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գերպ.Տէր Գարեգին Ծ. Վրդ. Շիրսմեան, Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տէր Տաթև Ա. Քհնյ. Միքայէլեան, Սարկաւագաց դասը, ինչպէս նաեւ հոծ բազմութեամբ ուխտաւոր հաւատացեալներ: Աւարտին, եկեղեցւոյ տիկնանց յանձնախումբի կողմէ սարքուած նախաճաշի հիւրասիրութիւն տեղի ունեցաւ:

- Հինգշաբթի, 13 Փետրուար 2025-ի երեկոյեան, Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցիներէն ներս յիշատակուեցաւ քառասնօրեայ Մանուկ Յիսուսի տաճար ընծայմանի նախատօնակը: Արարողութեան ներկայ գտնուեցան եկեղեցւոյ Հոգեւորականաց եւ Սարկաւագաց դասը, ինչպէս նաեւ հոծ բազմութեամբ հաւատացեալներ: Եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գերպ. Տէր Գարեգին Ծ. Վրդ. Շիրսմեանի գլխաւորութեամբ, Սարկաւագաց եւ Դպրաց դասերը թափօր կազմած շրջեցան եկեղեցւոյ մէջ՝ օրհնութիւն բաշխելով հաւատացեալներուն: Այնուհետեւ, դպրաց դասի հոգեպարար երգեցողութեամբ Անդաստանի արարողութիւն կատարուեցաւ: Հայ Սուրբը իր պատգամին մէջ, պարզաբանեց Տեառնընդառաջի ճամբով մեզի փոխանցուած խորհուրդը, ուր կը հրաւիրեն մեզ Տիրոջ ընդ առաջ երթալու: Արարողութեան աւարտին, եկեղեցւոյ մայր խորանի կանթեղէն առնուած լոյսով հաւատացեալներուն լապտերները լուսաւորուեցան եւ խարոյկի աւանդական հրավառութիւն կատարուեցաւ, որպէս խորհրդանիշ աստուածային կենդանի լոյսին՝ Քրիստոսին: «Փառաց Թագաւոր» մեղեդիի երգեցողութեան ընթացքին, ծնողները իրենց փոքրիկ զաւակները ընծայաբերեցին սուրբ խորանին: Եկեղեցւոյ Մեղրիկ Բարիքեան կրտսերաց դպրաց դասի ծնողաց յանձնախումբը այս առթիւ լապտերներ պատրաստած էր: Աւարտին, հայկական ճոխ երգացանկով մը հայկական պարերով հանդէս եկան երիտասարդները, ապա յատուկէն պատրաստուած հիւրասիրութիւն տեղի ունեցաւ:

- Կիրակի, 16 Փետրուար 2025-ին, Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ Գանատայի հայոց թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տէր Բարգէն Ս. Արք. Չարեանի հոգեհանգստեան կարգ կատարուեցաւ Կիլիկիոյ երանաշնորհ Հայրապետներու եւ Գանատայի Հայոց Թեմէն ներս ծառայած լուսահոգի եկեղեցականներու հոգիներուն ի հանգիստ: Ս. եւ Անմահ Պատարագը մատոյց եւ յաւուր պատշաճի քարոզեց Հոգշ. Տէր Յակոբ Վրդ. Եագուպեան: Պատարագի երգեցողութիւնը կատարեց Մեղրիկ Բարիքեան Կրտսերաց Դպրաց Դասը, իսկ Ս. Մեղանին սպասարկեցին Սարկաւագաց դասը:

- Ուրբաթ 21 Փետր.2025-ին, Եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ Գերպտ. Տէր Գարեգին Ծ. Վրդ. Շիրսմեան, ընկերակցութեամբ Հոգեւոր Հովիւ Տէր Հօր եւ Հոգաբարձու Գարոլ

Գոլեագեանի եւ Միզի Նագարեանի, այցելեցին հետ մահու իր բնակարանը Թոչնոց Բոյնին կտակած Տիկ. Շողիկ Գանձապետեանին: Հոգեւորականաց դասը նախ շնորհակալութիւն յայտնեցին Տիկ. Շողիկին բարերարութեան, աւարտին տնօրինէր կատարեցին:

- Կիրակի 23 Փետր.2025-ին, յաւարտ Ս. Պատարագի, հոգեհանգիստեան կարգ կատարուեցաւ Ս. Աստուածածին եկեղեցոյ ննջեցեալ կտակարարներուն, ինչպէս նաեւ Հ.Օ.Մ.-ի հիմնադիրներու, բարերարներու եւ հին ու նոր ննջեցեալներու յիշատակին:
- Կիրակի 23 Փետր. 2025-ի կէսօրին, Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցոյ գրասենեակ այցելեցին խումբ մը նորագիր անդամներ: Անոնք դիմաւորուեցան եկեղեցոյ Հոգեւորականաց դասուն եւ Հոգաբարձութեան կողմէ: Հոգեւոր Տեսուչ Հայր Սուրբը բարի գալստեան խօսքով հանդէս եկաւ եւ ողջունեց զիրենք: Աւարտին, եկեղեցոյ անդամագրութեան յատուկ վկայագրեր յանձնուեցան նորագիրներուն:
- Երկուշաբթի 24 Փետր. 2025-ի առաւօտեան, Հայր Գարեգին Ծ. Վրդ. Մոնթրեալ մեկնեցաւ: Ան հանդիպում պիտի ունենայ Առաջնորդ Սրբազան Հօր հետ, եւ նոյն օրը երեկոյեան, Լաւալի Ս. Գեորգ եկեղեցիէն ներս «Սրբոց Ղեւոնդեանց Քահանայից» տօնին առթիւ երեկոյեան նախատօնակի արարողութեան պիտի մասնակցի: Հայր Սուրբը Չորեքշաբթի կը վերադառնայ Թորոնթօ:
- Երկուշաբթի 24 Փետրուար 2025-ի առաւօտեան, Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տէր Տաթեւ Ա. Քհնյ. Միքայէլեան զօրակցական այցելութիւն կատարեց Scarborough տարածաշրջանի Երեսփոխանական թեկնածու հայազգի նուիրեալ զաւակ՝ Տիար Արիս Պապիկեանի ընտրարշաւի գրասենեակը: Քահանայ Հայրը դիմաւորուեցաւ Տիար Արիս Պապիկեանի եւ գրասենեակի կամաւոր աշխատակազմին կողմէ: Տէր Հայրը, յանուն Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տէր Բաբգէն Ս. Արք. Չարեանի, Ս. Աստուածածին եկեղեցոյ Հոգեւոր Տեսչութեան, Հոգաբարձութեան եւ հայ համայնքի զաւակներուն, զօրակցութիւն յայտնեց, յառաջիկայ օրերու ընտրութիւնները հեզասահ ընթանալու համար: Ան աղօթք բարձրացուց առ Աստուած, որ ընտրութիւնները ընթանան, «Արդարութեան» եւ «Խաղաղութեան» հաստատման համար:
- Թորոնթոյի Միջ-Յարանուանական Մարմինին Կազմակերպութեամբ, Հինգշաբթի 27 Փետրուար 2025-ի երեկոյեան ժամը 7:30-ին, տեղի ունեցաւ Սրբոց Վարդանանց նուիրուած հանդիսութիւնը: Ձեռնարկը կայացաւ Թորոնթոյի Հայ Աւետարանական եկեղեցոյ մէջ եւ սկսաւ հաւաքական աղօթքով: Հիւրընկալ եկեղեցոյ հովիւ՝ Պատուելի Զօհրապ Սարգիսեանի բացման խօսքէն ետք Հոգեւոր Հայրերը ընթերցեցին Աստուածաշնչական հատուածներ: Այնուհետեւ, խումբ մը հայորդիներ հանդէս եկան բանաստեղծական եւ երաժշտական կտորներով: Օրուան պատգամը

փոխանցեց Եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գերպ. Տ. Գարեգին Ծ. Վրդ. Շխրտմեան, որ իր խօսքը աւարտեց հետեւեալ տողերով. «Աստուածասիրութեան եւ ազգասիրութեան կենդանի օրինակներ են Վարդանանք: Այսօր բոլորս կանգ որովհետեւ անոնք մեր գոյերթը երաշխաւորեցին: Իրենց զոհողութեամբ մենք կանգնած ենք մեր հաւատքին եւ ինքնութեան լուսաւոր կամարներուն տակ: Սորվեցուցին մեզի, թէ մեզմէ զօրաւորները երեւի կրնան մեզ գրկել աշխարհի մեր իրաւունքներէն, բայց չեն կրնար խլել մեր հաւատքն ու հայրենասիրութեան ջերմութիւնը: Թող անոնց խաչի դրոշը առաջնորդէ մեր ազգը համայն, այն երկնային իմաստութեամբ, որ կ'ուսուցանէ միայն ի Տէր պարծիլ, եւ անմահական հաւատքով ջերմանայ մեր սիրտը, որուն դէմ անզօր ըլլան հրեշտակներ ու մարդիկ, հուր եւ սուր եւ ամենայն դառն հարուածք: Դաւանինք կրօնքը, որուն համար զոհուեցան: Ապրինք բարոյականը, որուն կառչած մնացին: Պահենք մշակոյթը, զոր աւանդ թողուցին: Չմոռնանք, ապա թէ ոչ կը մոռցուինք»: Հաւաքական աղօթքներու ընթերցումէն ետք, ձեռնարկը իր աւարտին հասաւ Տ. Զարեհ Աւագ Քահանայ Զարգարեանի փակման խօսքով, որուն յաջորդեց հիւրասիրութիւն:

- ԹՈՐՈՆԹՈՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆԴԱՄԱԿԱՆ 71-ՐԴ ԺՈՂՈՎՈՎՈՒԹՅԱՆ: Շաբաթ 1 Մարտ 2025-ի երեկոյեան, Թորոնթոյի Ս. Աստուածաին Եկեղեցւոյ անդամական 71-րդ ժողովը կայացաւ, Հովանաւորութեամբ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տէր Բարբէն Ս. Արք. Զարեանի, նախագահութեամբ Եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ Գերպտ. Տէր Գարեգին Ծ. Վրդ. Շխրտմեանի: Ժողովին բացումը Աղօթքով կատարեց Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Արժ. Տէր Տաթև Ա. Քինյ.Սիքայէլեան, Տէր Հայրը բարի երթ մաղթեց ժողովականներուն եւ թելադրեց, որ շինիչ առաջարկներով հարստացնեն ժողովի ընթացքը, որմէ ետք Առաջնորդ Սրբազան Հօր ողջոյնի խօսքը արտասանեց, Ազգ.Վարչութեան անդամ Տիար Յարութ Գասապեան: Ժողովը իր կանոնագրային ընթացքը ստացաւ դիւանի ընտրութեամբ: Ժողովի ատենապետ ընտրուեցաւ Տիար Յարութ Մաթոսեան, իսկ ատենադպիր՝ Տիկ. Աննա Տէր Յակոբեան: Եկեղեցւոյ անդամական ժողովը, լսելէ ետք նիւթաբարոյական տեղեկագրերը, յոյժ գնահատեց կատարուած հոգեւոր եւ վարչական գործունէութիւնը, յատկապէս արարողական, քարոզախօսական, «Եկեղեցի» եւ «Հովիւի Չայն» շաբաթական պարբերաթերթի հրատարակումի, կիրակնօրեայ դպրոցի «Նորածիլ Հաւատք» երկամսեայ թերթի 6 թիւերու անխափան հրատարակումը, «Ամառնային Ս. Գրքի» ճամբարի իրագործումը, Մարկաւագաց եւ դպրաց դասերու թիւի աճումը, Զարեհ Ազնաւորեան եւ կրտսերաց Մեղրիկ բարիքեան դպրաց դասերու Ս. Պատարագի եւ այլ առիթներով կատարած ելոյթները, եւ ընդհանրապէս կամաւորներու կատարած ծառայութիւնները: Ժողովը գնահատեց նաեւ Հոգաբարձութեան գործունէութիւնը, կատարուած շինարարական կարգ մը աշխատանքները, յառաջիկայ ամիսներու ծրագրուած եկեղեցւոյ երթիքի, ջերուցումի շարժակի, կատարուելիք նորոգութեանց, ինչպէս նաեւ Հոգաբարձութեան անսակարկ եւ աշխոյժ գործունէութիւնը զանազան մակարդակներու վրայ:

- Երկուշաբթի, 10 Մարտ 2025-ի առաւօտեան, Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցի, Նարեկացի եւ Կոմիտաս դասարանները, Օնթարիոյ նահանգի դպրոցական կիսամեայ արձակուրդին առիթով, ներկայութեամբ դպրոցի ուսուցչական կազմին, արտադասարանային միօրեայ գործունէութիւն ունեցան եկեղեցւոյ Յովնանեան սրահէն ներս: Աշակերտները հետեւեցան ուսուցիչներու խորհուրդներուն, ապա անոնք հաւաքաբար ներկայ գտնուեցան բարոյալից «Wonder» ֆիլմի ցուցադրութեան: Կէսօրին, Արժ. Տէր Տաթև Ա. Քհնյ-ի առաջնորդութեամբ, հաւաքական աղօթքէ ետք ճաշեցին. աւարտին, բարձր տրամադրութեամբ բոլորը վերադարձան իրենց տուները:
- Հինգշաբթի 20 Մարտ 2025-ի կէսօրին, եկեղեցւոյս Հոգևոր Տեսուչ Հայր Գարեգինն ու Հոգևոր Հովիւ Տէր Հայրը բարի ապաքինում մաղթելու համար այցելեցին Թորոնթոյի Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Հովիւ՝ Գերայ.Տէր Եղիա Ծ. Վրդ. Քիրէճեանին: Հոգևոր Հայրերը բժշկութեան աւետարան եւ աղօթք արտասանեցին, ինչպէս նաեւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ ընտանիքի անունով բարի ապաքինում մաղթեցին Հայր սուրբին:
- Ուրբաթ 21 Մարտ 2025-ին, եկեղեցւոյս Հոգևոր Տեսուչ Հայր Գարեգին, Առաջնորդ Սրբազան Հօր թելադրութեամբ Մոնթրէալ մեկնեցաւ, մասնակցելու Առաջնորդարանի կողմէ կազմակերպուած միօրեայ սիմինարին: Հայր Սուրբը երկուշաբթի 24 Մարտին վերադարձաւ Թորոնթօ:
- Երկուշաբթի 24 Մարտ 2025-ին, Օնթարիոյ Նահանգի հայազգի զաւակ, երեսփոխան Տիար Արիս Պապիկեան կատարեց իր երդման արարողութիւնը: Տիար Արիս Պապիկեան, եզակի այն երեսփոխաններէն է, որ երրորդ անգամ ըլլալով կը շահի ժողովուրդին վստահութիւնը: Իր յաղթական երթով, ան կը նպաստէ թէ՛ Օնթարիոյ Նահանգին ընդհանրապէս եւ թէ՛ Թորոնթոհայութեան մասնաւորաբար: Երդման արարողութեան ներկայ էին Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հոգևոր Հովիւ՝ Արժ. Տէր Տաթև Ա. Քհնյ. Միքայէլեան, Հոգաբարձու Բրշ. Սարգիս Սրկ. Կիտանեան, Բրշ. Մանօ Սրկ. Ճենանեան, Հ.Յ.Դ. Գանատայի Կեդրոնական Կոմիտէութեան անդամ, ինչպէս նաեւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Հովիւ՝ Արժ. Տէր Հայարի Քհնյ. Թանաշեան եւ կարգ մը հայորդիներ, որոնք կամաւորաբար օժանդակած էին երեսփոխանական ընտրարշաւին: Արժ. Տէր Հայրը, յանուն Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տէր Բաբգէն Ս. Արք. Չարեանի, եկեղեցւոյ Հոգևոր Տեսուչ՝ Տ. Գարեգին Ծ. Վարդապետին, Հոգաբարձութեան եւ հայ համայնքին, շնորհաւորեց յարգարժան երեսփոխանին վերընտրութիւնը եւ մաղթեց որ ան շարունակէ իր հայավայել ընթացքը միշտ բարձր պահելով հայու նկարագիրն ու անունը:
- Երեքշաբթի, 25 Մարտ 2025-ին, Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցի այցելեցին Թորոնթոյի մէջ Զէյթունցիներու համախմբումի պատասխանատուները, որոնք եկած էին ծանօթանալու եւ շնորհաւորելու եկեղեցւոյս Հոգևոր Տեսուչ Հայր Սուրբին

նշանակումը եւ Ծայրագոյն Վարդապետութեան աստիճանի տուչութիւնը: Գերապատիւ Հայր Սուրբը տեղեկանալէ ետք, համախմբումին կատարած աստուածահաճոյ գործունէութեան, գնահատեց զիրենք եւ օրհնեց անոնց կատարած բարեգործութիւնը՝ Հալէպ բնակող իրենց հայրենակիցներուն հանդէպ: Հայր Սուրբին կողքին ներկայ էին, Արժ. Տէր Տաթեւ Ա. Քահանան եւ Հոգաբարձութեան ներկայացուցիչները: Անոնք Հայր Սուրբին նուիրեցին Զէյթունի բարբառով հիւսուած Տէրունական Աղօթքէն օրինակ մը: Հայր Սուրբը իր կարգին շնորհակալութիւն յայտնեց հիւրերուն:

- Կիրակի 6 Ապրիլ 2025-ի կէսօրին, Եկեղեցոյս Հոգեւոր Տեսուչ Հայր Գարեգին, Հոգեւոր Հովիւ Տէր Տաթեւ, Հոգաբարձուներ Սիլվանա Պապիկեան եւ Գարոլ Խանամիրեան, ներկայ գտնուեցան Թորոնթոյի Ռուբինա մասնաճիւղի հիմնադրութեան 62-ամեակի եւ Հ.Օ.Մ.-ի Օրուան միջոցառման, օրուան սեղանի օրհնութիւնը կատարեց Տէր Հայրը, իսկ փակման խօսք եւ Պահպանիչ արտասանեց Հայր Սուրբը:
- Երեքշաբթի 8 Ապրիլ 2025-ին, Ս. Աստուածածին Եկեղեցոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գերպ. Տէր Գարեգին Ծ. Վրդ. Շիրսմեան, ընկերակցութեամբ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տէր Տաթեւ Ա.Քհնյ.Միքայէլեանի զօրակցական այցելութիւն կատարեցին ՍՔԱՐՊՈՐՕ-ԷՅՃԻՆՔՈՐԹ շրջանի դաշնակցային թեկնածու հայազգի զաւակ ԱՐԻՍ ՄՈՎՍԷՍԵԱՆԻ ընտրաբշաւի կեդրոնը: Հայր Սուրբը յանուն Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տէր Բարգէն Ս. Արք Չարեանի եւ համայնքի զաւակներուն, յաջողութեան լաւագոյն բարեմադրութիւններ եւ աղօթք կատարեց:
- Ուրբաթ 11 Ապրիլ 2025-ի երեկոյեան, Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցոյ մէջ, ձեռամբ Եկեղեցոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գերպ. Տէր Գարեգին Ծ. Վրդ. Շիրսմեանի եւ մասնակցութեամբ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տէր Տաթեւ Ա. Քհնյ. Միքայէլեանի, Սարկաւազաց դասի եւ «Մեղրիկ Բարիքեան» երգեցիկ խումբի ծնողաց ու փոքրիկներուն, Օրհնուեցան «Մեղրիկ Բարիքեան» կրտսերաց դպրաց դասի նոր շապիկները: Տեսուչ Հայր Սուրբը իր հայրական օրհնութիւնը տուաւ փոքրիկներուն, գնահատեց անոնց կապուածութիւնը հայ եկեղեցոյ ու ազգային արժէքներուն նկատմամբ:
- Տիրոջ Յաղթական Մուտքը Երուսաղէմ՝ Ծաղկազարդի Տօնակատարութիւնը Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցոյ մէջ: Ծաղկազարդի յաղթական խանդավառութեամբ, Կիրակի, 13 Ապրիլ 2025-ին, Սուրբ եւ Անմահ խումբն հաւատացեալներու մասնակցութեամբ մատուցուեցաւ սուրբ եւ անմահ պատարագը: Սուրբ Պատարագը մատուցեց եւ օրուան քարոզը փոխանցեց եկեղեցոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գերպ. Տէր Գարեգին Ծ. Վրդ. Շիրսմեան: Իր քարոզին մէջ, Հայր Սուրբը հաւատացեալ ժողովուրդը կոչ ուղղեց արժանաւոր կերպով մասնակցելու օրուան խորհրդին եւ կեանքի բոլոր օրերուն մէջ Քրիստոսը Տէր դաւանիլ: Հոգեւոր եւ

տօնական բարձր տրամադրութեամբ, եկեղեցականաց, սարկաւագաց, «Բարիքեան» կրտսերաց դպրաց դասին, ինչպէս նաեւ հոծ թիւով հաւատացեալներու մասնակցութեամբ նշուեցաւ Տիրոջ յաղթական մուտքը Երուսաղէմ: Առանձնակի խանդավառութիւն կը ներշնչէր մանուկներու ու երիտասարդներու մասնակցութիւնը՝ գոյնզգոյն հանդերձներով, որոնք մասնակցեցան աւանդական թափօրին՝ խորհրդանշելով այն մանուկները, որոնք «Ովսաննա» կը բարբառէին Տիրոջ գալուստին: Պատարագի աւարտին, մանուկները Սուրբ Խորանին առջեւ օրհնուեցան: Իսկ եկեղեցւոյ շրջափակէն ներս տօնական բարձր տրամադրութիւն կը տիրէր, եւ բոլորը կը վայելէին «Նապիկին» եւ «Իշուկին» ներկայութիւնը, որ կը խորհրդանշէր Քրիստոսի Երուսաղէմ երթը:

- Կիրակի, Ապրիլ 13, 2025-ին, Թորոնթոյի Սուրբ Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Դոնբացքի հանդիսաւոր արարողութիւնը: Հաւատքով ու աղօթքի տրամադրութեամբ համախմբուած, աւանդական շարականներով, աղօթքներով եւ խնկաբոյր ծուխով զարդարուած խորհրդաւոր պահը առաջնորդեցին եկեղեցւոյ հոգեւորականները մասնակցութեամբ Սարկաւագներուն, դպրաց դասի անդամներուն եւ հաւատացեալներուն: Արարողութեան աւարտին, Արժ. Տ. Տաթեւ Աւագ Քհնյ. Միքայէլեան օրուան խորհուրդին անդրադարձաւ: Աւարտին, տեղի ունեցաւ աւանդութիւն դարձած այն յուզիչ արարողութիւնը, որուն ընթացքին եկեղեցւոյ դրան մայր բանալիով, աղօթք կը բարձրացուցի եւ կ'օրհնուի մանուկներու բերանները, որպէսզի բացուին եւ միշտ փառաբանեն Տէրը:
- Երեքշաբթի 15 եւ Չորեքշաբթի 16 Ապրիլ 2025-ին, Հ.Օ.Մ.-ի ամենօրեայ Վարժարանի աշակերտութիւնը եկեղեցի եկան եւ Ս. Հաղորդութիւն ստացան Ս. Յարութեան տօնին առիթով:
- Աւագ Երեքշաբթի, 15 Ապրիլ 2025-ի երեկոյեան, Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ «Տասը Կուսանաց»ի յիշատակը: Երեկոյեան ժամերգութեան արարողութեան իրենց մասնակցութիւնը բերին, ինչպէս նաեւ Ս. Գրային ընթերցումները կատարեցին, եկեղեցւոյս կիրակնօրեայ դպրոցի աշակերտուհիները: Արարողութեան ներկայ էին եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գերպ. Տ. Գարեգին Ծ. Վրդ. Շիրտմեան եւ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տէր Տաթեւ Ա. Քհնյ. Միքայէլեան: Աւարտին, Գերապատիւ Հայր Սուրբը ներկաներուն փոխանցեց օրուան խորհուրդը, նախ փառք տուաւ Աստուծոյ, որ այս տարի եւս կարողացանք տօնել այսօրուայ յիշատակը, ապա շնորհակալութիւն յայտնեց կիրակնօրեայ դպրոցի անձնակազմին, որոնք շատ տպաւորիչ եւ գեղեցկօրէն պատրաստած էին օրուան խորհուրդը դրսեւորող արարողութիւնը:
- Տեսուչ Հայր Սուրբը քաղաքական ղեկավարներու հետ մասնակցեցաւ Հայոց Ցեղասպանութեան Յիշատակի Հանդիսութեան: 16 Ապրիլ 2025-ին, Օնթարիոյի

Խորհրդարանին մեջ տեղի ունեցավ Հայոց Ցեղասպանության յիշատակի արժանապատիւ ընդունելութիւն մը, կազմակերպուած Թորոնթոյի Հայ Դատի Յանձնախումբին կողմէ: Այս հանդիսութիւնը համախմբեց խորհրդարանի անդամներ, քաղաքական դէմքեր եւ համայնքային ներկայացուցիչներ, որոնք վերահաստատեցին իրենց յանձնառութիւնը՝ յիշելու եւ արդարութիւն պահանջելու մէկ ու կէս միլիոն նահատակներուն համար: Ձեռնարկը բացուեցաւ Գ.Ե.Ս.-ի ներկայացուցիչ Էլիզապէթ Գանտահարեանի խօսքով, որ ընդգծեց ցեղասպանութեան յիշողութեան պահպանման կարեւորութիւնը, յատկապէս՝ երիտասարդ սերունդին մօտ: Այնուհետեւ հրաւիրուեցաւ Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գերայ. Տ. Գարեգին Ծ. Վրդ. Շիրտմեան, որ սրտառուչ աղօթք մը բարձրացուց անգլերէն լեզուով: Սոյն ձեռնարկին, Գերայ. Հայր Սուրբին ընկերացան Ազգ. վարչութեան անդամ Տիար Յարութ Գասապեան եւ Տիար Էտի Ուրֆալեան: Յաջորդաբար ելոյթ ունեցան նախկին Խորհրդարանի նախագահ Տէյվիտ Ուորներ, Պահպանողական Կուսակցութեան պատգամաւոր Տիար Արիս Պապիկեան, նախարար Սթիվըն Լէչէ, ինչպէս նաեւ Կրէյհամ Մաքքրէկոր, Մայքլ Փարսա եւ այլք: Նոր Ժողովրդավարական Կուսակցութենէն ելոյթ ունեցաւ պատգամաւոր Թոմ Ռաքոսեիչ, իսկ Ազատական Կուսակցութիւնը ներկայացուցին պատգամաւորներ Ճոնաթան Յաս եւ դոկտ. Ատիլ Շամճի: Կանաչ Կուսակցութենէն ներկայ էր պատգամաւոր Աիսլին Քլենսի:

- Աւագ Հինգշաբթի, 17 Ապրիլ 2025-ին, Առաջնորդ Սրբազան Հայրը Թորոնթօ ժամանեց նախագահելու Աւագ շաբթուայ եւ Ս. Յարութեան տօնի արարողութիւններուն: Սրբազան Հօր կ'ընկերանար Հոգ2. Յակոբ Վրդ. Եագուպեան:
- Աւագ Հինգշաբթի, 17 Ապրիլ 2025-ի առաւօտեան, կարգ ապաշխարողաց ժամերգութիւն եւ Ս. եւ Անմահ Պատարագ կատարուեցաւ: Ս. Պատարագը մատոյց՝ Հոգ2. Տէր Յակոբ Վրդ. Եագուպեան, իսկ Սուրբ Բարսեղ Հայրապետի աղօթքը կարդաց՝ Առաջնորդ Սրբազան Հայրը: Աւարտին, հաւատացեալներ Ս. Հաղորդութիւն ստացան: Երեկոյեան, Առաջնորդ Սրբազան Հայրը նախագահեց եւ Ոտնլուայի կարգը կատարեց, ինչպէս նաեւ յաւուր պատշաճի քարոզեց: Այս տարուան Ոտնլուայ կատարուեցաւ 12 Հ.Մ.Ը.Մ.-ի արիներուն եւ Գ.Ե.Ս.-ի պատանիներուն, որոնք տարուան ընթացքին զանազան առիթներով իրենց կամաւոր ծառայութիւնը կը մատուցեն եկեղեցւոյ, ինչպէս նաեւ Սարկաւազաց եւ Դպրաց դասերու անդամներուն եւ ուխտաւորաբար ներկաներուն անխտիր: Գիշերուան ժամը 8-ին, խաւարման յուզիչ ժամերգութիւն կատարուեցաւ, Յիսուսի դատապարտութիւնը խորհրդանշող եօթը աւետարաններ կարդացուեցան, «Ուր ես մայր իմ» սրտառուչ երգը մեկնաբանեց Գերայ. Տ. Գարեգին Ծ. Վրդ. Շիրտմեան, իսկ օրուան պատգամը փոխանցեց՝ Արժ. Տ. Տաթև Ա. Քինյ. Միքայէլեան: «Խաչի քո Քրիստոս» շարականի հաւաքական երգեցողութեամբ, Աւագ Հինգշաբթի օրուան խորհուրդը իր լրումին հասաւ ուշ գիշեր:

➤ Աւագ Ուրբաթ, 18 Ապրիլ 2025-ի երեկոյեան ժամը 4-ին, Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Թաղման Կարգը կատարուեցաւ, հանդիսապետութեամբ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տէր Բարգէն Ս. Արք. Չարեանի, մասնակցութեամբ եկեղեցւոյս Հոգեւոր Տեսուչ՝ Հայր Սուրբին, Հոգշ. Տէր Յակոբ Վրդ. Եագուպեանի եւ Հոգեւոր Հովիւ՝ Տէր Հօր, Սարկաւագաց, Դպրաց դասերու, ինչպէս նաեւ Կիրակնօրեայ դպրոցի աշակերտութեան, կամաւորներու եւ 2000-է աւելի հաւատացեալներու: Ժամերգութեան աւարտին, տարիներու աւանդութեան համաձայն «Քրիստոսի Թաղման» թափօրը կազմուեցաւ, առաջնորդութեամբ ոստիկանական ջոկատի, Սկաուտական խումբերու, Փողերախումբի, Գ.Ե.Մ.-ի երիտասարդներու, ինչպէս նաեւ առաւել քան 2000 հաւատացեալներու: Առաջնորդ Սրբազան Հայրը իր պատգամը ուղղեց հաւատացեալներուն: Ան ըսաւ, որ Քրիստոսի գերեզմանը մահուան սարսափ չէ, այլ կեանքի աղբիւր է, որովհետեւ հոնկէ կը սկսի յաւիտենական կեանքը: «Քրիստոս իսաչ բարձրացաւ յանուն մարդկութեան փրկութեան ու Իր արիւնը թափեց փրկելու համար մարդը, ջնջեց մարդուն մեղքերը ու գերեզման իջնելով՝ յաղթեց մահուան, նոր կեանք պարգեւեց մեզի ու մեզ առաջնորդեց դէպի փրկութիւն:» Սրբազանը ընդգծեց, որ Քրիստոսի իւրաքանչիւր ուսուցում իր խորհուրդն ու պատգամը ունի, իսկ մենք՝ հաւատացեալներս, պետք է ընկալենք զանոնք ու ապրինք Քրիստոսի պատգամներով: «Քրիստոսի գերեզմանը կեանքի եւ փրկութեան խորհուրդի վերածուեցաւ: Քրիստոսի գերեզմանէն ճառագայթող յաւիտենական կեանքով լեցուինք, որպէսզի, քալենք այն ճամբէն, որ մեզ կը տանի դէպի յաւիտենականութիւն», Սրբազան Հայրը իր պատգամը եզրափակեց «Փառք քեզ Աստուած Փառք քեզ» աղօթքով: Եկեղեցական արարողութեան աւարտին, Քրիստոսի իսաչափայտի մատուցով Սրբազան Հայրը օրհնեց հաւատացեալ ժողովուրդը, որմէ ետք, մեր եկեղեցւոյ աւանդութեան համաձայն, հաւատացեալները խոնարհեցան Քրիստոսի գերեզմանին առջեւ, որմէ ետք օրհնուած վարդ, հաւկիթ եւ կարկանդակ ստանալով հոգեկան բարձր տրամադրութեամբ մեկնեցան իրենց տուները:

➤ Աւագ Շաբաթ, 19 Ապրիլ 2025-ի երեկոյեան ժամը 4-ին, Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ, Ճրագալոյցի ժամերգութեան ընթացքին Ս. Գրային ընթերցումներ կատարեցին, եկեղեցւոյս Կիրակնօրեայ դպրոցի աշակերտութիւնը, որմէ ետք Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցուեցաւ, Պատարագը մատուցեց Արժ. Տէր Տաթև Ա. Քհնյ. Միքայէլեան: Պատարագի երգեցողութիւնը կատարեց Մեղրիկ Բարիքեան կրտսերաց դպրաց դասը: Պատարագի աւարտին, «Այսօր Յարեաւ ի Մեռելոց» շարականի երգակցութեամբ, սուրբ խորանէն Քրիստոսի Գերեզմանի լոյսը խորհրդանշող մոմը բերուեցաւ եւ յանձնուեցաւ եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ՝ Հայր Գարեգինին, որ իր կարգին, զայն բաշխեց հաւատացեալներուն՝ աւետելով Քրիստոսի հրաշափառ յարութիւնը:

Աւարտին, կատարուեցաւ նախատօնակի հանդիսութիւնը, ուր հաւատացեալներ վառուած մոմերը տարին իրենց տուները լուսաւորելու:

- Քրիստոնէութեան կարեւորագոյն եւ հիմնական տօնը կը հանդիսանայ Քրիստոսի հրաշափառ Սուրբ Յարութիւնը: Արդարեւ Կիրակի, 20 Ապրիլ 2025-ին, հաւատացեալներու հոծ բազմութեան ներկայութեամբ Ս. եւ Անմահ Պատարագ մատուցեց եւ յաւուր պատշաճի քարոզեց, Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տէր Բարգէն Ս. Արք. Չարեան: Առաջնորդ Սրբազան Հօր կը սպասարկէին եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գերպ. Տէր Գարեգին Ծ. Վրդ. Շիրտմեանն ու Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տէր Տաթև Ա. Քհնյ. Միքայէլեանը: Պատարագի երգեցողութիւնը կատարեցին եկեղեցւոյ «Զարեհ Ազնաւորեան» դպրաց դասը: Յընթացս Ս. Պատարագին, Առաջնորդ Սրբազան Հայրը, գնահատեց եկեղեցւոյ Հոգեւարականաց դասը, ինչպէս նաեւ Սարկաւազաց ու դպրաց դասերը, Հոգաբարձական կազմը եւ ընդհանրապէս համայնքի բոլոր ծառայողները, շնորհաւորեց Թեմի երեսփոխանները, Ազգային Վարչութեան անդամները, եկեղեցիներու հոգաբարձուները եւ հաւատացեալները: Որդիական երախտագիտութեան խօսք արտասանեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետին, քաջառողջութիւն եւ արեւշատ օրեր մաղթելով: Առաջնորդ Սրբազան Հայրը, ներկաներուն թելադրեց, Ապրիլ 24-ին, հոծ բազմութեամբ յարգել մեր մէկ ու կէս միլիոն նահատակներու յիշատակը, մերժելով ներկայիս հայրենիքէն ներս ուրացումի փորձերը, հաւատարիմ մնալով մեր նահատակներուն կտակին: Աւարտին Սուրբ Հաղորդութեան մատակարարումէն ետք աջահամբոյր տեղի ունեցաւ եւ Սրբազան Հայրը փոքրիկներուն նուէրներ բաժնեց:
- Երկուշաբթի 21 Ապրիլ 2025-ին, «Յիշատակ Մեռելոց», Ս. եւ Անմահ Պատարագ եւ հոգեհանգստեան կարգ կատարուեցաւ: Արդարեւ, Երեքշաբթի 22 Ապրիլ 2025-ի առաւօտեան, Թորոնթոյի Հ.Օ.Մ.-ի ամենօրեայ վարժարանի աշակերտութիւնը առաջնորդութեամբ տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին, համախմբուեցան Եկեղեցւոյ եւ Հայ Կեդրոնի Ցեղասպանութեան յիշատակին կանգնած Յուշարձանին դիմաց: Արժ. Տէր Տաթև Ա. Քհնյ. Միքայէլեանի կողմէ արտասանուած աղօթքէն ետք, պահանջատէր հայու գիտակցութեամբ վերանորոգեցին իրենց ուխտը հաւատարիմ մնալ նահատակներու կտակին, եւ կոչ ուղղեցին համայն մարդկութեան «Քանդելու լռութեան շղթան» եւ պաշտպանելու հայ ժողովուրդի անժամանցելի դատը: Աւարտին, լոզունքներ արտասանեցին եւ ծաղիկներ զետեղեցին, ապա անցան իրենց դասարանները:
- Գերապատիւ Հայր Սուրբը կը մասնակցի «Ուղղափառ եկեղեցիներու Շաբաթ»-ի Առաջին Հաւաքին: 2024-ի Դեկտեմբերին, Օնթարիոյ նահանգը «167» օրինագիծով ընդունեց այսուհետեւ ամէն տարի Սուրբ Զատիկէն ետք, նշել «Ուղղափառ Եկեղեցիներու շաբաթ»: Առ այդ, եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գերպ. Տ. Գարեգին Ծ. Վրդ. Շիրտմեան, ընկերակցութեամբ հոգաբարձութեան ատենապետ՝ Բրշ. Կարօ

Սրկ. Սարգիսեանի եւ Բրշ. Մանօ Սրկ. Ճէնանեանի, ներկայ գտնուեցաւ առաջին ուղղափառ եկեղեցիներու հաւաքին: Հաւաքը տեղի ունեցաւ Օնթարիոյ նահանգի խորհրդարանէն ներս, կազմակերպութեամբ Ղպտի եւ Սերպ ուղղափառ եկեղեցիներուն: Անոնց խօսնակները ողջունեցին ուղղափառ բոլոր եկեղեցիներու ներկայացուցիչներն ու քաղաքական անձնաւորութիւններ: Հաւաքին ընթացքին, խօսք առին զանազան քաղաքական դէմքեր եւ շրջաններու ներկայացուցիչներ, որոնցմէ կ'ուզենք յիշել Սքարպորօ-Էյճընքորթ շրջանի դաշնակցային ներկայացուցիչ՝ Տիար Արիս Պապիկեանը, որ իր խօսքին մէջ ակնարկեց Հայոց Յեղասպանութեան եւ Հայ Եկեղեցւոյ, անոր պատկանելիութեան եւ պատմութեան: Ապա, Համպրը Բիվըր-Պլաք Գրիք շրջանի ներկայացուցիչ՝ Թօմ Ռեքօսըվիչ, որուն անխոնջ աշխատանքներուն արդիւնքն էր սոյն օրինագիծին ներկայացումն ու վաւերացումը, խօսք առաւ եւ բոլոր եկեղեցւոյ ներկայացուցիչներուն փոխանցեց ստորագրուած եւ կնքուած օրինագիծէն օրինակ մը: Հաւաքը իր աւարտին հասաւ ներկայ եպիսկոպոսներու օրհնութեան խօսքերով եւ հաւաքական խմբանկարով: Հաւաքի ընթացքին, Տեսուչ Հայր Սուրբը ծանօթացաւ եւ զրոյց ունեցաւ ներկայ եպիսկոպոսներուն եւ եկեղեցւոյ հոգեւորականներուն հետ:

- Չորեքշաբթի 23 Ապրիլ 2025-ի երեկոյեան, կազմակերպութեամբ Թորոնթօ Գ.Ե.Մ.-ի վարչութեան, հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակին նուիրուած ոգեկոչում եւ մոմավառութեան ներկայ գտնուեցան եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ՝ Հայր սուրբը եւ Հոգեւոր Հովիւ՝ Տէր Հայրը, Մարքամի մէջ, հայկական ցեղասպանութեան «Պուրակ»ին մէջ: Աւարտին, Հայր Սուրբ սրտի խօսք եւ աղօթք արտասանեց:
- Հինգշաբթի 24 Ապրիլ 2025-ին, Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գերպ.Տէր Գարեգին Ծ. Վրդ. Շիրտմեան, Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տէր Տաթև Ա. Քհնյ. Միքայէլեան, Սարկաւագաց դասէն եւ Հոգաբարձութեան անդամներէն բաղկացած պատուիրակութիւն մը մասնակցեցան «Հայ Կեդրոնի» կազմակերպած բողոքի երթին, քաղաքի հրապարակէն մինչեւ թրքական հիւպատոսարան: Հայր Սուրբին աղօթքով փակումը կատարուեցաւ հաւաքին:
- Հինգշաբթի 24 Ապրիլ 2025-ի երեկոյեան ժամը 7-ին, Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց.Առաքելական Եկեղեցւոյ մէջ, Միջ-յարանունական Ս. եւ Անմահ Պատարագ եւ ոգեկոչում կատարուեցաւ հայկական ցեղասպանութեան զոհուած սրբադասուած նահատակներուն յիշատակին: Օրուան Պատարագը մատուցեց Արժ. Տէր Հայարի Քհնյ. Թանաշեան, իսկ օրուան պատգամը փոխանցեց Տիար Յակոբ Ճամպագեան, ատենապետ Թորոնթոյի միջ-յարանունական մարմնի: Խորանի սպասարկութիւնն ու պատարագի եզեցողութիւնը կատարեցին Ս. Աստուածածին եւ Ս. Երրորդութիւն Հայց. Առաքելական եկեղեցիներու միացեալ խումբը: Աւարտին, շրջափակին մէջ կանգնած յուշարձանին դիմաց կարգ բարեխօսական եւ ծաղկեմատոյց կատարուեցաւ:

- Գանատայի Հայոց Թեմի Ազգային Երեսփոխանական ժողովը գումարուեցաւ 2-3 Մայիս 2025-ին, Լաւալի Ս. Գեորգ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ հիւրընկալութեամբ: Ժողովին կը մասնակցէին Թեմիս բոլոր եկեղեցականները, եկեղեցիներու Ազգային Երեսփոխաններն ու Հոգաբարձութեանց ներկայացուցիչները: Վերոյիշեալ ժողովին մասնակցեցան, եկեղեցւոյս Հոգեւոր Տեսուչ՝ Հայր Սուրբը, Հոգեւոր Հովիւ՝ Տէր Հայրը, 9 Ազգ. երեսփոխաններ եւ Հոգաբարձական կազմէն՝ ատենապետ Բրշ. Կարօ Սրկ. Սարգիսեան, Գրիգոր Սրկ. Պէպէճեան, Սարգիս Սրկ. Կիտանեան: Ժողովի աւարտին, տեղի ունեցաւ լրացուցիչ ընտրութիւններ Կրօնական Ժողովի եւ Ազգային Վարչութեան: Ներկայիս, Թորոնթոյէն Ազգ. վարչութեան անդամ են Տիար Յարութ Գասապեան եւ Տիար Նազար Չաթալեան, իսկ կրօնական ժողովի՝ Արժ. Տէր Տաթեւ Ա. Քինյ. Միքայէլեան:
- Կիրակի, 11 Մայիս 2025-ին, Թորոնթոյի Սուրբ Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ, Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տէր Բարգէն Սրբ. Արք. Չարեանի օրհնութեամբ, Մայրերու Տօնի առթիւ, եկեղեցւոյ պայծառութեան նուիրուած տիկնանց յանձնախումբերու օրհնութեան արարողութիւն կատարուեցաւ: Օրուան Սուրբ եւ Անմահ Պատարագը մատուցեց եւ քարոզեց Եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գերպ. Տ. Գարեգին Ծ. Վրդ. Շիրտմեան: Օրհնութեան արարողութեան մասնակցութիւն բերին եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Տաթեւ Աւ. Քինյ. Միքայէլեան եւ Սարկաւազաց դասը: Տօնական այս օրուան առթիւ, եկեղեցւոյ մուտքին բոլոր մայրերուն ծաղիկներ եւ էջադիրներ բաժնուեցան, Մեղրիկ Բարիքեան կրտսերաց դպրաց դասի ծնողաց յանձնախումբին կողմէ: Օրուան ջերմ մթնոլորտը ամբողջացաւ մայրերու նուիրուած հաւաքական երգեցողութեամբ:
- Հինգշաբթի, 15 Մայիս 2025-ին, Թորոնթոյի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ Սարկաւազաց եւ «Ազնաւորեան» Դպրաց Դասի անդամները հիւրընկալուեցան «ԼԱՐԱԶ» ճաշարանին մէջ, Տէր եւ Տիկին Տիգրան եւ Անի Թորոսեաններու, ինչպէս նաեւ Տիկին Լենա Ատուրեանի սիրալիր հրաւերով: Այս հիւրասիրութիւնը երախտագիտութիւն էր, ի պատիւ սարկաւազաց եւ դպրաց դասի անդամներուն, իրենց նուիրեալ ծառայութեան համար, Աւագ Շաբթուայ եւ Սուրբ Զատկուայ եկեղեցական արարողութեանց ընթացքին: Երեկոն գեղարուեստական շունչ ստացաւ Ռազմիկ Սրկ. Մանասերեանի կատարումներով, որուն հնչեցուցած սիրուած հայկական երգերը ճոխացուցին հաւաքոյթը: Հոգաբարձութեան կազմին անունով սրտառուչ խօսք արտասանեց Սարգիս Սրկ. Կիտանեան, որուն յաջորդեց շնորհակալական խօսք մը՝ արտասանուած Գերպ. Գարեգին Ծ. Վրդ. Շիրտմեանի կողմէ: Ճոխ երեկոն եզրափակուեցաւ խորհրդանշական նուէրի մը յանձնումով եւ յիշատակի խմբանկարով:
- Ուրբաթ, 23 Մայիս 2025-ին, Առաջնորդ Սրբազան Հայրը Թորոնթօ ժամանեց ընկերակցութեամբ Հոգշ. Տէր Յակոբ Վարդապետ Եագուպեանի: Սրբազան Հայրը եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ Հայր սուրբին եւ Տէր Հօր ընկերակցութեամբ, ներկայ

գտնուեցաւ Հ.Օ.Մ.-ի Ամենօրեայ վարժարանի աշակերտական երգչախմբումբի Արամ Խաչատուրեան եւ նուագախումբերու ելոյթին: Աւարտին սրտի եւ գնահատական խօսք արտասանեց:

- Շաբաթ, 24 Մայիս 2025-ին, Թորոնթոյի Հ.Օ.Մ.-ի Ամենօրեայ վարժարանի շրջափակէն ներս տեղի ունեցաւ Հայ կեդրոնի ընդարձակման (ACC Beyond) հիմնարկէքի արարողութիւն եւ հողօրհնէք:
Արարողութիւնը կը վայելէր ներկայութիւնը Գանատայի Հայոց Թեմի բարեխնամ Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Բարգէն Արքեպիսկոպոս Չարեանի: Առաջնորդ Սրբազան Հօր կողքին էին՝ Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հոգեւոր տեսուչ Գերապատի Տ. Գարեգին Ծայրագոյն Վարդապետ Շիրտըմեանն ու հոգեւոր հովի Արժանապատի Տ. Տաթև Աւագ Քահանայ Միքայէլեանը, ինչպէս նաեւ Հոգեշնորհ Տ. Յակոբ Վարդապետ Եագուպեանը եւ Ազգային Վարչութեան անդամներ՝ Պարոն Յարութ Գասապեանն ու Պարոն Նազար Չաթալեանը: Արարողութեան ներկայ էին նաեւ՝ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ հոգեւոր հովի Արժանապատի Տ. Չարեհ Աւագ Քահանայ Չարգարեանը եւ Հայ Աւետարանական եկեղեցւոյ հովի պատուելի Զոհրապ Սարգիսեանը: Աւարտին, իր սրտի խօսքը փոխանցեց Առաջնորդ Սրբազան Հայրը, բարձր գնահատելով հիմնադիր սերունդը, որոնք անցեալին արիութեամբ եւ ապագայի հանդէպ ունեցած տեսլականով, կրցան էին հիմնաքարը դնել նման կեդրոնի մը, որ ներկայիս պիտի ընդարձակուի ու պիտի ծաղկի: Սրբազան Հայրը հիմնադիր սերունդի ննջեցեալներուն հոգիներուն խաղաղութիւն մաղթեց, իսկ գործող եւ ծառայող մարդկանց, որոնք նեցուկ են ներկայ նորահաս երիտասարդութեան՝ ուժ, կորով եւ առողջութիւն: Ան գերգնահատեց նորահաս սերունդը, որոնք նոյն թափով, նուիրումով, ծառայութեամբ եւ ոգիով կը շարունակեն անցեալի սերունդին աշխատանքը եւ հիացմունքի ու գովասանքի խօսքեր ուղեց շինարարական եւ հանգանակային մասնագիտական գոյգ յանձնախումբերուն, որոնք որպէս հարազատ որդիներ այս կեդրոնին, եկած են օժանդակելու այս նուիրական աշխատանքին: Սրբազան Հայրը շնորհակալութիւն յայտնեց նուիրատուներուն եւ բարերարներուն, ինչպէս նաեւ կոչ ուղղեց բոլորին, իրենց նիւթական աջակցութիւնը բերելով մաս կազմելու այս հայապահպանման ծրագրին:
- Կիրակի, 25 Մայիս 2025-ի առաւօտ, Առաջնորդ Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ՝ Հոգշ. Տէր Յակոբ Վրդ. Եագուպեանի եւ Արժ. Տաթև Ա. Քին. Միքայէլեանի այցելեց եկեղեցւոյս Կիրակնօրեայ դպրոցի աշակերտութիւնը: Սրբազան Հայրը դիմաւորուեցաւ դպրոցի տնօրէնուհիին, ուսուցչական կազմին եւ աշակերտութեան կողմէ: Առաջնորդ Սրբազան Հայրը իր քաջալերական խօսքը արտասանեց եւ գնահատեց պատասխանատուներուն կողմէ կատարուած կրօնաբարոյական դաստիարակութիւնը: Աւարտին, փոքրիկները մանկական հարցումներ ուղղեցին. Սրբազան Հայրը ամենայն ուրախութեամբ պատասխանեց բոլորին հարցումներուն:

- Նախագահութեամբ՝ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Բարբղէն Ս. Արք. Չարեանի, Կիրակի, 25 Մայիս 2025-ին, յընթացս Ս. եւ Անմահ Պատարագին, Հայաստանի Ա. Հանրապետութեան անկախութեան 107-ամեակին առիթով Հանրապետական մաղթանք եւ Հայաստանի Հանրապետութեան եռագոյն դրօշի օրհնութիւն կատարուեցաւ Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցեց Գերպ. Տէր Գարեգին Ծ. Վրդ. Շիրսմեան: Արարողութեան ներկայ էին Թեմի Երեսփոխանական ժողովի եւ Ազգ. Վարչութեան անդամներ, Լիբանանի Հիւպատոս Տիար Գրիգոր Փոսթաճեան, Հ.Մ.Ը.Մ.-ի Թորոնթոյի մասնաճիւղի տարազաւոր սկաուտներ եւ հաւատացեալ ժողովուրդը: Պատարագի աւարտին, Հանրապետական մաղթանք կատարուեցաւ եւ Սուրբ Խաչով օրհնուեցաւ Հայաստանի եւ Արցախի Հանրապետութեան եռագոյն դրօշները: Ներկաները յոտնկայս երգեցին Հայաստանի Հանրապետութեան քայլերգը: Հոգեհանգստեան արարողութիւն կատարուեցաւ Սարդարապատի ճակատամարտին նահատակուած հերոսներու հոգիներուն խաղաղութեան: Արարողութեան աւարտին, եկեղեցական թափօրը եկեղեցւոյ շրջափակ առաջնորդուեցաւ, ուր Հ.Մ.Ը.Մ.-ի Սկաուտները շեփոքախումբի նուագով տողանցեցին եւ Դօշակի արարողութիւն կատարեցին: Ապա, Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ բազմութեան իր սրտառուչ պատգամը փոխանցեց: Անդրադառնալով օրուան խորհուրդին եւ անոր կարեւորութեան մեր կեանքէն ներս: Սրբազանը թելադրեց ներկայ երիտասարդութեան, որ կառչած մնան Մայիս 28-ի ոգիին եւ կտակին:
- Երկուշաբթի 26 Մայիս 2025-ի յետմիջօրէին, Օնթարիոյ խորհրդարանի յարկէն ներս, արժանավայել կերպով նշուեցաւ «Հայ Մշակոյթի Ամիս»ին նուիրուած ձեռնարկ մը: Ձեռնարկը կազմակերպած էր Հայագգի երեսփոխան՝ Տիար Արիս Պապիկեան. Ձեռնարկին ներկայ էին Օնթարիոյ Նահանգի Վարչապետ Տակ Ֆօրտը, Խորհրդարանի երեսփոխաններ, բարձրաստիճան պաշտօնեաներ, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տէր Տաթև Աւագ Քինյ. Միքայէլեան, Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիւոյ Հովիւ՝ Արժ. Տէր Հայկ Քինյ. Շահինեան եւ Հայ Կեդրոնի պատասխանատուներ: Արժ. Տէր Տաթև Աւագ Քահանայ Հայրը, յանուն Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տէր Բարբղէն Ս. Արք. Չարեանի, եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ՝ Տէր Գարեգին Ծ. Վրդ. Շիրսմեանի, ինչպէս նաեւ հայ համայնքի անունով շնորհակալութիւն յայտնեց եւ շնորհաւորեց հայագգի Երեսփոխանին սոյն միջոցառումի կազմակերպման առիթով, եւ Նահանգի Վարչապետին քաջալերական ներկայութեան համար:
- Հինգշաբթի 29 Մայիս 2025-ի երեկոյեան, Ս. եւ Անմահ Պատարագ մատուց եւ յաւուր պատշաճի քարոզեց եկեղեցւոյս Հոգեւոր Տեսուչ՝ Գերպ. Տէր Գարեգին Ծ. Վրդ. Շիրսմեան: Եկեղեցական հանդիսութենէն ետք, Համբարձման տօնը գեղարուեստական պարերգներով եւ տօնին անբաժան «Վիճակ քաշելու» իւրայատուկ խաղերով շարունակուեցաւ եկեղեցւոյ Յովնանեան սրահէն ներս:

- Ուրբաթ 30 Մայիս 2025-ին, Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ «Զարեհ Ազնաւորեան» դպրաց դասի տարեկան ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ: Ժողովին Նախագահեց եւ բացման աղօթք կատարեց եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գերայ. Տէր Գարեգին Ծ. Վրդ. Շիրտմեան: Ժողովին Ատենապետութիւնը ստանձնեց եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տէր Տաթեւ Ա. Քհնյ. Միքայէլեան, իսկ Ատենադպիր ընտրուեցաւ Դպ. Լուսի Մալաքեան: Ժողովականները, ունկնդրելէ ետք շրջանաւարտ վարչութեան նիւթաբարոյական տեղեկագիրը, ինչպէս նաեւ Դպրապետի կողմէ ներկայացուած զեկոյցը, յատուկ գնահատանք արձանագրեցին: Ժողովի ատարտին, փակ քուէարկութեամբ վարչական ընտրուեցան՝ Թալին Մահսերէճեան, Նշան Փափազեան, Մակի Արզուեան, Հռութ Սիմոնեան, Սեդա Աթանոսեան, Մարիա Տաուտեան եւ Մելքոն Քարկոցեան: Գերպատիւ Հայր Սուրբի գնահատանքի խօսքով եւ աղօթքով ժողովը վերջ գտաւ:
- Չորեքշաբթի 4 Յունիս 2024-ի առաւօտ, Հ.Օ.Մ.-ի Ամենօրեայ վարժարանի ծաղիկ դասարանի շրջանաւարտ աշակերտութիւնը եկեղեցի եկան Ս. Հաղորդութիւն ստանալու: Անոնք դիմաւորուեցան եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ Հայր Գարեգինին կողմէ: Հայր Սուրբը, աշակերտութեան հաղորդութեան մասին բացատրութիւն տալ ետք, Ս. Հաղորդութիւն բաշխեց, ինչպէս նաեւ կարգ մը խրատներ եւ թելադրութիւններ փոխանցեց փոքրիկներուն:
- Ուրբաթ 6 Յունիս 2025-ի երեկոյեան, Գերապատիւ Հայր Սուրբը Հ.Օ.Մ.-ի Ամենօրեայ վարժարանի Ծաղիկ դասարանի ամավերջի հանդէսի վկայականաց բաշխման ներկայ գտնուեցաւ: Աւարտին, քաջալերական եւ գնահատական խօսք արտասանեց եւ պահպանիչ աղօթքով փակումը կատարեց հանդիսութեան:
- Ուրբաթ 6 Յունիս 2025-ի գիշեր, Գերայ. Հայր Սուրբը, Արժ. Տէր Հայրը եւ Հոգաբարձութենէն ներկայացուցիչներ ներկայ գտնուեցան Գանատայի Հայ Դատի Մարմինի կազմակերպած հանգանակային ձեռնարկին, Հայ Կեդրոնի սրահէն ներս:
- Շաբաթ 7 Յունիս 23025-ի երեկոյեան, Գերայ. Հայր Սուրբը եւ Հոգաբարձու Սիլվանա Պապիկեան, ներկայ գտնուեցան Համազգայինի «Գուսան» եւ «Հայ Աստղեր» երգչախումբերու տարեկան ելոյթին:
- Կիրակի 8 Յունիս 2025-ի յետմիջօրէի ժամը 5-ին, Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի ամավերջին հանդիսութիւնը տեղի ունեցաւ եկեղեցիէն ներս: Հանդիսութիւնը սկսաւ եկեղեցւոյս Հոգեւոր Տեսուչ՝ Տէր Գարեգին Ծ. Վրդ. Շիրտմեանի արտասանած Տէրունական աղօթքով եւ աշակերտութեան կողմէ կիրակնօրեայ դպրոցներու քայլերգի երգեցողութեամբ: Հանդիսութեան ներկայ էին եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Արժ. Տէր Տաթեւ Ա. Քհնյ. Միքայէլեան, Հոգաբարձութեան ներկայացուցիչ Սիլվանա Պապիկեան եւ աշակերտութեան ծնողները: Աշակերտներ

թիով 95, իւրաքանչիւրը իր դասարանի դաստիարակի առաջնորդութեամբ Մաղմոսներու, Սուրբ Գրային ընթերցումներու ընթերցանութեամբ, կենդանի պատկերներ Հայ Եկեղեցւոյ եւ Հայոց պատմութենէն քաղուած, ինչպէս նաեւ խմբերգներ, խմբավարութեամբ Պետիկ Կիւ. Սրկ. Տառուտեանի, գեղեցիկ եւ հաճելի պահեր ապրեցուցին ներկաներուն: Գերպ.Հայր Սուրբին գնահատական եւ քաջալերական խօսքով եւ Արժ. Տէր Հօր փակման աղօթքով վերջ գտաւ հանդիսութիւնը: Աւարտին, ներկաները եկեղեցւոյ ներքնասրահէն ներս հիւրասիրութեան մասնակից դարձան:

- «Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԷ \$75,000 Հ.Օ.Մ.-ի ԱՄԵՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԸՆԴԼԱՅՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ» ՀԱՍՏԱՏԵՑ ԳԱՐԵԳԻՆ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ: Ուրբաթ, 13 Յունիս 2025-ի երեկոյեան, 8-րդ դասարանի աւարտական հանդիսութեան եզրափակիչ խօսքին ընթացքին, Եկեղեցւոյս հոգեւոր Տեսուչ՝ Գերպ. Տֆարեգին Ծայրագոյն Վարդապետ Շիրտմեան, յայտարարեց թէ « թէեւ եկեղեցին կը պատրաստուի ձեռնարկելու ծախսակից բայց անհրաժեշտ նորոգութեանց, սակայն եւ այնպէս, չի կրնար անմասն մնալ Հայ Դպրոցի պահպանման աշխատանքին: Առ այդ, Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաք. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւքն ու Հոգաբարձութիւնը, Եկեղեցւոյս մեծ ընտանիքին անունով Հ.Օ.Մ.-ի Ամենօրեայ Վարժարանի ընդլայնման շինարարական աշխատանքին կը նուիրէ \$75,000», հաստատեց Գարեգին Ծ. Վարդապետ: Ինչպէս քաջ տեղեակ էք, Թորոնթոյի Հայ Երիտասարդաց Կեդրոնի ընդլայնումին տեսլականը կեանքի կոչելու նպատակով՝ 9 միլիոն տոլար թիրախով հանգանակութեան ձեռնարկելու արշաւ մը սկսած է: Այս ընդլայնումը առիթը պիտի ընծայէ մեզի աւելի լաւ ծառայելու եւ կապերը սերտացնելու մեր համայնքին հետ ու աճող աշակերտութեան աւելի նպաստաւոր պայմաններ ստեղծելու:
- Ուրբաթ 13 Յունիս 2025-ի առաւօտ, Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տէր Տաթև Ա. Քին. Միքայէլեան, ընկերակցութեան Հ.Օ.Մ.-ի Ռուբինա մասնաճիւղի ընկերային ծառայութեան յանձնախումբին, այցելեցին Արարատ հանգստեան տուն եւ հանդիպում ունեցան հայ տարեցներուն հետ: Արժանապատիւ Տէր Հայրը բժշկութեան աղօթքով եւ հոգեւոր խորհուրդներով գօտեպնդեց ներկաները, ապա հաւաքական խոստովանանքէ ետք Սուրբ Հաղորդութիւն բաշխեց բոլորին: Աւարտին, գեղարուեստական յայտագիր կատարուեցաւ, դաշնակի ընկերակցութեամբ, Հ.Օ.Մ.-ի ընկերուհիները յատուկ հիւրասիրութիւն կատարեցին, որմէ ետք այցելեցին կարգ մը տարեցներու սենեակները: Ապա հոգեկան բարձր տրամադրութեամբ մեկնեցան:
- Շաբաթ 14 Յունիս 2025-ի, Գերպ.Հայր Սուրբը ընկերակցութեամբ, Հոգաբարձու Սիլվանա Պապիկեանի եւ Բրշ.Մանօ Սրկ.Ճէնանեանի, Համազգայինի Գլխաւոր մասնաճիւղի կազմակերպած «Պարախումբի» ձեռնարկին ներկայ գտնուեցաւ:

- Երեքշաբթի 17 Յունիս 2025-ի կեսօր, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գերպ. Հայր Սուրբը եւ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տէր Հայրը ներկայ գտնուեցան Թորոնթոյի Հայ Կեդրոնի Երէցներու Համախմբումի կազմակերպած Հայրերու Տօնին առթիւ մեծարանքի հանդիսութեան: Բացման խօսքով հանդէս եկաւ Արժ. Տէր Հայրը, շնորհաւորեց բոլոր հայրերը, ապա հրաւիրեց Համախմբումի ատենապետ Տիար Էտի Ուրֆալեանը եւ Հայր Սուրբը, որպէսզի գնահատեն օրուայ մեծարեալ Տիար Յարութին Շիթիլեանը եւ Տիար Հրանդ Մելքոնեանը իրենց տարիներու ծառայութեան համար: Աւարտին, Գերպ. Հայր Սուրբը յանուն Ս. Աստուածածին Եկեղեցւոյ եւ հայ համայնքի, շնորհաւորեց մեծարեալները եւ բոլոր հայրերը, մաղթելով առողջ եւ արեւշատ օրեր:
- Հինգշաբթի 19 Յունիս 2025-ին, Տէր Հայրը ներկայ գտնուեցաւ Ս. Երորդորութին Եկեղեցւոյ կողմէ կազմակերպուած «Երէցներու» նուիրում Ս. եւ Անմահ Պատարագին եւ ընդունելութեան: Տէր Հայրը, յանուն եկեղեցւոյ ընտանիքին, բարեմաղթութիւններ փոխանցեց:
- Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գերպ. Տէր Գարեգին Ծ. Վրդ. Շիրսմեանն ու Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տէր Տաթեւ Ա. Քհնյ. Միքայէլեանը ներկայ գտնուեցան վկայականաց բաշխման հանդիսութեան: Գերպ. Հայր սուրբը եւ Քահանայ Հայրը օրուան ձեռնարկի աւարտին, նախ յանուն Գանատայի Հայոց թեմի Բարեջան Առաջնորդ՝ Գերշ. Տէր Բարգէն Ս. Արք. Չարեանի, Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ ընտանիքին, շնորհաւորեցին Վարժարանի մեծ ընտանիքը եւ յատկապէս աւարտական դասարաններու աշակերտութիւնն ու տնօրէնութիւնը եւ ուսուցական կազմը, որոնք կարողացան արժանավայել կերպով յաջողցնել սոյն ձեռնարկները: Հոգեւոր Հայրերը իրենց խօսքը ուղղելով ծնողներուն եւ աշակերտներուն, ըսին. «Երբեք մի՛ մոռնաք ձեր մայրենի լեզուն, հպարտօրէն խօսեցէք մեր պատմութեան մասին, մի՛ զլանաք ձեր զաւակները հայկական օճախներ՝ դպրոց, ակումբ, եկեղեցի յաճախեցնելու ու մանաւանդ երախտապարտ եղէք այս դպրոցին, որ ձեզի անշահախնդրօրէն տուաւ ազգային նկարագիր, քրիստոնէական ու հայեցի դաստիարակութիւն, Հայ լեզու ու մշակոյթ, որպէսզի դուք ալ ձեր կարգին, օր մը, զանոնք փոխանցէք ձեր նմաններուն»:
- Շաբաթ 28 Յունիս 2025-ի երեկոյեան, Գերպ. Հայր Սուրբը ներկայ գտնուեցաւ «Մասուն» պարախումբի տարեկան ելոյթին:
- Կիրակի, 29 Յունիս 2025-ին, Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցիէն ներս, յընթացս Ս. եւ Անմահ Պատարագին, թելադրութեամբ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տէր Բարգէն Ս. Արք. Չարեանի, Հայրապետական Մաղթանք կատարուեցաւ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի գահակալութեան 30 ամեակին առիթով: Սուրբ եւ Անմահ Պատարագը մատոյց, եւ օրուան պատգամը փոխանցեց Եկեղեցւոյս Հոգեւոր Տեսուչ՝ Գերպ. Տ. Գարեգին Ծ.

Վրդ. Շխրտմեան: Արարողութեան մասնակցեցան Արժ. Տէր Տաթև Ա. Քինյ. Միքայէանն ու Սարկաւագաց եւ Դպրաց դասերը: Հաւատացեալներու սրտաբուխ աղօթքներ եւ Սուրբ Գրային ընթերցումներ բարձրացուեցան առ Աստուած՝ մաղթելով անասանութիւն եւ պայծառութիւն Եկեղեցւոյ, արեւշատ եւ երկար օրեր Վեհափառ Հայրապետին եւ յաւերժութիւն ազգիս հայոց:

- Չորեքշաբթի 9 Յուլիս 2025-ի առաւօտեան, եկեղեցւոյս Հոգեւոր Տեսուչ Հայր Սուրբը եւ Հոգեւոր Հովիւ Քահանայ Հայրը ներկայ գտնուեցան Հ.Օ.Մ.-ի Թորոնթոյի Ռուբինա մասնաճիւղի կազմակերպած 2025 տարուան ամառնային ճամբարի բացման հանդիսութեան: Աւարտին, Գերպ.Հայր Սուրբը սրտի խօսք եւ աղօթք արտասանեց:
- Կիրակի 13 Յուլիս 2025-ին, Ս. եւ Անմահ Պատարագին ներկայ գտնուեցան Թորոնթոյի մասնաճիւղի Հ.Ս.Ը.Մ.-ի արի եւ արենուշները: Անոնք յառաջիկայ օրերուն ԱՄՆ-ի մէջ միջ-ցամաքային Ա. ընդհանուր բանակումին պիտի մասնակցին: Ս. Հաղորդութիւն եւ ճամբորդութեան յատուկ աղօթք արտասանուեցաւ Հոգեւոր Հայրերուն կողմէ:
- Ուրբաթ, 18 Յուլիս 2025-ին, նախագահութեամբ՝ Թեմիս Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բարգէն Արքեպիսկոպոս Չարեանի, Թորոնթոյի Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Կիրակնօրեայ Նոր Դասագիրքերու շնորհահանդէսը: Ներկայ էին Եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչն ու Հոգեւոր Հովիւր, Ազգային Վարչութեան անդամներ, դասագիրքերու հեղինակ՝ Պարոն Արշալիր Գաբուճեան, Հոգաբարձութեան ներկայացուցիչներ, Կիրակնօրեայ Դպրոցի տնօրէնութիւնն ու ուսուցչական կազմը, աշակերտներն ու անոնց ծնողները: Հանդիսավարներն էին՝ Սուրբ Աստուածածին Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտները, որոնք բարի գալուստ մաղթեցին ներկաներուն, արտայայտելով իրենց կապուածութիւնն ու սէրը՝ Կիրակնօրեայ Դպրոցին: Ապա հրաւիրեցին իրենց եղբայրները երգելու Կիրակնօրեայ Դպրոցներու մաղթերգը: Մաղթերգի երգեցողութենէն ետք, «Մեղրիկ Բարիքեան» Կրտսերաց երգչախումբը հրամցուց փունջ մը շարականներ, խմբավարութեամբ՝ Տիկին Հիլտա Գանտահարեանի: Ապա, Ազգային Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի Վարիչ՝ Հոգեշնորհ Տ. Յակոբ Վարդապետ Եագուպեան, փոխանցեց բաժանմունքի խօսքը, շեշտելով՝ «Քրիստոնէական Դաստիարակութիւնը պէտք է նկատուի ոչ թէ ընտրելի, այլ անբաժանելի մասնիկը հայ ինքնութեան պահպանման գործին մէջ»: Իր խօսքին աւարտին, Հոգեշնորհ Հայր Սուրբը երախտագիտութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք իրենց բաժինը բերած էին այս դասագիրքերու կազմութեան եւ հրատարակութեան աշխատանքներուն: Հայր Սուրբին խօսքէն ետք, Կիրակնօրեայի աշակերտուհիներէն մէկը արտասանեց Սուրբ Գրիգոր Նարեկացիի աղօթքներէն հատուած մը: Ապա, դասագիրքերուն հեղինակ՝ Պարոն Արշալիր Գաբուճեան ներկայացուց եռահատոր դասագիրքերու պատրաստութեան ամբողջ գործընթացը, խօսելով դասագիրքի բովանդակութեան, աշխատանքային գրքոյկի եւ ուսուցիչի ուղեցոյցի մասին: Ան իր խօսքին մէջ ըսաւ,

որ իւրաքանչիւր աշակերտ, ուսուցիչ կամ հաւատացեալ, երբ տոյն երեք դասագիրքերը կարդայ, համարեայ կարդացած կ'ըլլայ ամբողջ Աստուածաշունչը: Իր խօսքի աւարտին, ան կոչ ուղղեց, որ Աստուածաշունչը բոլորին կեանքի անբաժան մէկ մասնիկը ըլլայ, այլապէս բոլորիս կեանքը ճահիճի կը վերածուի: Պարոն Գաբուճեանի ներկայացումէն ետք, Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտներէն մէկը երգեց ապաշխարութեան շարական մը: Աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը փոխանցեց իր սրտի խօսքը: Ան վերաբժեւորեց կրթական այս նոր նախաձեռնութեան կարեւորութիւնը մեր համայնքային կեանքէն ներս: Ան ընդգծեց, որ դաստիարակութիւնը հիմնաքարը կը կազմէ մեր եկեղեցւոյ, ժողովուրդին եւ սերունդներու գոյատեւման: «Այս դասագիրքերը միայն էջեր չեն՝ այլ սերմեր են, որ ցանուած են մեր զաւակերուն հոգիներուն մէջ: Սերմեր՝ որոնք պիտի ծլին՝ հաւատքով, որոնք ջուր պիտի ստանան՝ աղօթքով ու ուսուցմամբ, եւ որոնք պիտի պտղաբերին՝ Աստուծոյ սիրոյն մէջ», ըսաւ Սրբազան Հայրը: Ապա իր գնահատանքը արտայայտեց Պարոն Արշալիր Գաբուճեանին, Տիկին Միւզաննա Սարգսեանին (Խաղերու Հեղինակ) եւ Շուշան Գեորգեանին (Նկարագարդման Հեղինակ) անոնց կատարած բժախնդիր աշխատանքներուն համար: Առաջնորդ Սրբազան Հայրը նաեւ գնահատեց Հայր Յակոբը եւ Դոկտ. Տանիա Օհանեանը, իրենց տարած աշխատանքին համար: Երեկոն իր աւարտին հասաւ Առաջնորդ Սրբազան Հօր «Պահպանիչ» աղօթքով:

- Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ համայնքը 27 Յուլիս 2025-ին, մեծահանդէս ցնծութեամբ տօնախմբեց մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Այլակերպութեան տօնը: Արդարեւ, Ս. եւ Անմահ Պատարագը մատոյց եւ յաւուր պատշաճի քարոզեց եկեղեցւոյս Հոգեւոր Տեսուչ՝ Գերպ. Տէր Գարեգին Ծ. Վրդ. Շիրսումեանը: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց եկեղեցւոյս Զարեհ Ագնաւորեան Դպրաց Դասը, ղեկավարութեամբ Անուշ Գալստեանի, իսկ խորանին սպասարկեցին Մարկաւագաց եւ դպրաց դասերը: Պատարագի աւարտին, եկեղեցական թափօրով անդաստանի արարողութիւն կատարուեցաւ, Հայր Սուրբին, Տէր Հօր եւ Մարկաւագաց դասուն մասնակցութեամբ, վարդի ջուրով եւ խաչով Օրհնուեցան հաւատացեալները:
- Երկուշաբթի 28 Յուլիս 2025 «ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ»-ին, Ս. Եւ Անմահ Պատարագ եւ ընդհանրական հոգեհանգիստ կատարուեցաւ Ս. Աստուածածին Եկեղեցիէն ներս: Ս. Պատարագը մատոյց եւ յաւուր պատշաճի քարոզեց եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Արժ. Տէր Տաթև Ա. Քհնյ. Միքայէլեան: Պատարագին ներկայ գտնուեցան եւ Ս. Հաղորդութիւն ստացան Թորոնթոյի Հ.Օ.Մ.-ի Ռուբինա մասնաճիւղի կազմակերպած ամառնային ճամբարի տնօրէնութիւնը, ուսուցչական կազմը եւ աշակերտութիւնը:
- Տնօրինութեամբ Թեմիս Առաջնորդ՝ Գերշ. Տ. Բարգէն Արք. Չարեանի, Կիրակի 3 Օգոստոս 2025-ին, Գեմպրիճի Սուրբ Նշան Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ մէջ Սուրբ եւ Անմահ Պատարագը մատուցեց եւ օրուան պատգամը փոխանցեց Սուրբ

Աստուածածին Եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գերայ. Տ. Գարեգին Ծ. Վրդ. Շիրսումեան: Մեկնելով օրուան անտարանական ընթերցումէն՝ Հայր Սուրբը անդրադարձաւ Աստուծոյ մօտ մարդու արժէքին եւ մարդու կոչումին՝ Աստուծոյ պէս դիտելու բոլոր մարդոց: Պատարագէն ետք, Հայր Սուրբը մասնակից դարձաւ Քեսապցիներու համահաւաքին եւ անոնց կազմակերպած դաշտագնացութեան, ուր մատաղի օրհնութիւնը կատարեց եւ իր սրտի խօսքը փոխանցեց:

- Զորեքշաբթի 6 Օգոստոս, 2025-ի կէսօրին, Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցի այցելեց Լիբանանէն ժամանած Հայկազեան Համալսարանի Տնօրէն՝ Վերապատուելի Փօլ Հայտոսթեան, ընկերակցութեամբ, Թորոնթոյի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ Հովիւ՝ Պատուելի Զոհրապ Սարգիսեանի եւ Միջ-Յարանուանական Մարմնի Ատենապետ՝ Տիար Յակոբ Ճամպազեանի: Հիւրերը դիմաւորուեցան եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գերայ. Տէր Գարեգին Ծ. Վրդ. Շիրսումեանի, Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տէր Տաթև Ա. Քինյ. Միքայէլեանին եւ Բրշ. Մանօ Սրկ. Ճենանեանի կողմէ: Յարգոյ հիւրերուն բարի գալստեան խօսք արտասանեց Հայր Սուրբը եւ հակիրճ բացատրութիւն տրուելէ ետք եկեղեցւոյ հիմնադրութեան եւ հոգեւոր ծառայութեան մասին, այցելութեան աւարտին, գոհաբանական աղօթք արտասանուեցաւ բոլորին կողմէ:
- 11-18 Օգոստ. 2025՝ Աստուածածինի Տօնակատարութիւն: Ս. Աստուածածնի Վերափոխման տօնի շաբաթը իւրայատուկ կերպով կը նշուի Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաքելական եկեղեցիէն ներս: Ամենօրեայ հսկումի եւ քարոզախօսութեան արարողութեան ընթացքին վեր կ'առնուի Ս. Կոյս Մարիամի առաքինութիւնները. այս տարուան քարոզախօսութեան նիւթն էր Ս. Աստուածամօր՝ կեանքի ընթացքին կրած եօթը դժուարութիւնները: Երեկոյեան ժամերգութեանց իրենց մասնակցութիւնը բերին եկեղեցւոյ Դպրաց, Սարկաւագաց դասերը եւ հոծ բազմութեամբ հաւատացեալներ: Ուխտի շաբթուան իւրաքանչիւր օր յատուկ նիւթերու օրհնութիւն կը կատարուի եւ կը բաշխուի հաւատացեալներուն: Շաբթուան երեքշաբթի օրը ուխտագնացութիւն կը կատարուի: Իսկ Շաբաթավերջին՝ ամբողջ օրուան ընթացքին իւրաքանչիւր ժամ յատուկ արարողութիւններով աղի եւ հարիսայի օրհնութեամբ, ինչպէս նաեւ «Յիշատակ Մեռելոց»ի, Ս. Պատարագով իր աւարտին կը հասնի Ս. Աստուածածնայ Վերափոխման Տօնակատարութիւնը:
- Արդարեւ, Երեքշաբթի 12 Օգոստ. 2025 ին, առաւօտեան շուրջ 50 հաւատացեալներու մասնակցութեամբ, դէպի «Ուինզըր» ուխտագնացութիւն կատարուեցաւ: Ուխտագնացութիւնը կ'առաջնորդէր եկեղեցւոյս Հոգեւոր Տեսուչ՝ Գերայ. Տէր Գարեգին Ծ. Վրդ. Շիրսումեան, իսկ վարչական եւ կազմակերպչական բաժինը ստանցնած էր Հոգաբարձութեան փոխ ատենապետ Սիլվանա Պապիկեան: Ուխտերթը սկիզբ առաւ առաւօտեան աղօթքով: Սուրբ Շարպէլ եկեղեցւոյ եւ շրջափակին մէջ զետեղուած «Սրբութեան Ճանապարհ»ի ուղղութեամբ, Քրիստոսի չարչարանքներու եւ խաչելութեան հանգրուաններով: Իւրաքանչիւր հանգրուանին,

Հայր Սուրբը յատուկ աղօթքներով եւ շարականի երգեցողութիւն կատարեց հաւատացեալներու մասնակցութեամբ: Ապա ներկաները համախմբուեցան եկեղեցի: Ժամերգութեան աւարտին, Ս. Հաղորդութիւն ստացան, որմէ ետք հաւաքական սիրոյ ճաշ մատուցուեցաւ, Ուինզըրի հայկական Ս. Ստեփանոս եկեղեցոյ հոգաբարձութեան եւ Հ.Օ.Մ.-ի ընկերուհիներու հիւրընկալութեամբ: Երեկոյեան, ուխտաւորները գոհունակ սրտով Թորոնթօ վերադարձան:

- Հինգշաբթի 14 Օգոստ. 2025-ի երեկոյեան, յաւարտ ժամերգութեան, եկեղեցոյս Ազնաւորեան դպրաց եւ Սարկաւազաց դասերու, ղեկավարութեամբ խմբավար Անուշ Գալստեանի, գեղարուեստական երեկոյ մը տեղի ունեցաւ, նախագահութեամբ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տէր Բարգէն Ս. Արք. Չարեանի: Ելոյթի ընթացքին, Ս. Աստուածածնայ նուիրուած Տաղերու եւ Շարականներու, եւ Ս. Գրիգոր Նարեկացիի ներբողական գանձերէն փունջ մը մատուցուեցաւ: Աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը գնահատեց կազմակերպուած բացառիկ գեղարուեստական ելոյթը, ապա պահպանիչ աղօթքով եւ Կիլիկիա մաղթերքով վերջ գտաւ երեկոն:
- Շաբաթ 16 Օգոստ. 2025-ին, երեկոյեան Կիրակնամտից ժամերգութիւն եւ նախասոնակ, ինչպէս նաեւ «Աղ»ի օրհնութիւն կատարուեցաւ, նախագահութեամբ Գանատայի Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տէր Բարգէն Ս. Արք Չարեանի, մասնակցութեամբ Հոգեւորականաց եւ Սարկաւազաց դասերու եւ հաւատացեալներու, որմէ ետք սկիզբ առաւ «Հարիսայի» պատրաստութիւնը:
- Կիրակի 17 Օգոստ. 2025-ին, ամբողջ գիշեր մինչեւ առաւօտ յատուկ ժամերգութիւններ կատարուելէ ետք, առաւօտեան ժամը 10.30ին, Ս. Եւ Անմահ Պատարագ մատոյց Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Բարգէն Ս. Արք. Եպս. Չարեան, առընթերակայութեամբ Գերպ. Տէր Գարեգին Ծ. Վրդ. Շիրսմեանի եւ Արժ. Տ. Տաթև Ա. Քհնյ.Միքայէլեանի: Խորանին կը սպասարկէին Սարկաւազաց դասը, իսկ պատարագի երգեցողութիւնը հրաշալի կերպով կատարուեցաւ Չարեհ Ազնաւորեան դպրաց դասին կողմէ, խմբավարութեամբ Անուշ Գալստեանի: Առաջնորդ Սրբազան Հայրը յաւուր պատշաճի քարոզեց, վեր առնելով Աստուածամօր առաքինութիւնները եւ Ս. Մարիամի բարեխօսութիւնը խնդրեց, մանաւանդ Արցախէն թշնամիին կողմէ գերեվարուած հայորդիներու ազատութեան եւ բարօրութեան համար, ինչպէս նաեւ շնորհաւորեց բոլոր մայրերը եւ Մարի անուն կրողները: Յաւարտ Ս. Պատարագի, «Խաղողի, Մատաղի եւ Ջուրի» Օրհնութիւն կատարուեցաւ եւ բաժնուեցաւ հաւատացեալներուն:
- Երկուշաբթի 18 Օգոստ. 2025-ին, «Յիշատակ Մեռելոց»ի առթիւ Ս. եւ Անմահ Պատարագ եւ Հոգեհանգստեան կարգ կատարուեցաւ ի յիշատակ ննջեցեալներու: Յաւարտ Ս. Պատարագի «Գերեզման Օրհնէք» տեղի ունեցաւ, գերեզմանատան հայկական բաժիններէն ներս:

- Աստուածաճնայ Վերափոխման Տոնին առթիւ, իրականացան հետեւեալ արարողութիւնները եւ իրերու օրհնութիւնները. Երկուշաբթի 11 Օգոստ.-ի երեկոյեան ժամերգութեան աւարտին՝ խունկի օրհնութիւն: Երեքշաբթի 12 Օգոստ. երեկոյեան ժամերգութիւն՝ իւղի եւ մանուկներու յատուկ աղօթագրքոյկի օրհնութիւն: Չորեքշաբթի 13 Օգոստ. երեկոյեան ժամերգութիւն եւ Խաչերու եւ գրպանի աղօթքի ծրարներու օրհնութիւն: Հինգշաբթի 14 Օգոստ. ժամերգութիւն եւ Մեղրի օրհնութիւն: Ուրբաթ 15 Օգոստ. ժամերգութիւն եւ Վարդերու օրհնութիւն: Շաբաթ 16 Օգոստ. ժամերգութիւն, նախատօնակ եւ Աղի օրհնութիւն:

- Կիրակի, Օգոստոս 17 2025-ին, Սուրբ Աստուածաճնայ Վերափոխման եւ եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին, գիշերուան ամբողջ տեւողութեան կատարուած շարականներով ու աղօթքներով բացուեցաւ հոգեշունչ օր մը, որուն գագաթնակետը եղաւ առաւօտեան ժամը 10:30-ին մատուցուած Սուրբ եւ Անմահ Եպիսկոպոսական Պատարագը: Պատարագը մատուցեց Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Բարգէն Ս. Արք. Չարեան, որուն սպասարկեցին եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ Գերպ. Տ. Գարեգին Ծ. Վրդ. Շիրտմեան եւ Արժ. Տ. Տաթեւ Աւագ Քհնյ. Միքայէլեան: Սարկաւագաց դասը իրենց նուիրեալ ծառայութեամբ զարդարեց խորանը, իսկ «Չարեհ Ազնաւորեան» դպրաց դասը՝ Անուշ Գալստեանի ղեկավարութեամբ, երկինք հասցուց պատարագի սրբազան երգեցողութիւնը: Սրբազան Հայրը քարոզին ընթացքին ընդգծեց Սուրբ Աստուածաճնայ անթառամ առաքինութիւնները, Մարիամ Աստուածաճնի բարեխօսութիւնը հայցելով ի մասնաւորի հայ ազգին եւ եկեղեցւոյ: Օրուան աւելի յուզիչ պահերէն մէկը եղաւ, երբ Առաջնորդ Սրբազան Հայրը, Օրհնութեան Գիրով գնահատեց ու շնորհաւորեց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Տաթեւ Աւագ քահանայ Միքայէլեանը, իր քահանայական ձեռնադրութեան 40-ամեակին եւ եկեղեցւոյ ու ազգին իր անձնուէր ծառայութեան առիթով: Սուրբ եւ անմահ պատարագը իր աւարտին հասաւ կատարուած Խաղողի, Մատաղի եւ Ջուրի Օրհնութեամբ, որոնք բաժնուեցան հաւատացեալներուն: Թող ուխտը կատար ըլլայ բոլոր ուխտաւորներուն, որոնք աղօթքով, նուիրատուութիւններով, մատաղի պատրաստութեամբ եւ այլ ծառայութիւններով իրենց հաւատքը արտայայտեցին:

- Երկուշաբթի, 18 Օգոստոս, 2025-ին առաւօտուն, Ս. Աստուածաճնի Վերափոխման տօնին առիթով տեղի ունեցաւ Յիշատակ Մեռելոցի Ս. եւ Անմահ Պատարագ, Եորք Գերեզմանատան մէջ: Պատարագը մատուցեց Գերպ. Տ. Գարեգին Ծ. Վրդ Շիրտմեան: Ս. սեղանին սպասարկեցին Բարեշնորհ Սարկաւագներ: Ներկայ էին աւելի քան 50 հաւատացեալներ: Աւարտին տեղի ունեցաւ Հոգեհանգստեան պաշտօն: Ս. Պատարագէն ետք, Գերապատիւ Հայր սուրբը կատարեց գերեզմանօրհնէք իւրաքանչիւր շիրիմի վրայ: Նշենք, որ գերեզմանօրհնէք կատարուեցաւ նաեւ «Elgin Mills» եւ «Pickering» գերեզմանատուններուն մէջ:

- Շաբաթ, 16 Օգոստոս 2025-ին, Գանատայի Հայոց Թեմի Բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բարգէն Արքեպիսկոպոս Չարեան, Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ Դահլիճէն ներս ընդունեց այցելութիւնը Պետական ներկայացուցիչներու: Հանդիպման ներկայ էին Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գերապատիւ Տ. Գարեգին Ծ. Վրդ. Շիրսմեանն ու Հոգեւոր Հովիւ՝ Արժանապատիւ Տ. Տաթև Աւագ Քահանայ Միքայէլեանը: Ինչպէս նաեւ Հայ Դատի եւ Հոգաբարձութեան ներկայացուցիչները: Ներկայ էին Գանատայի Խորհրդարանի Անդամներ՝ Ն.Վ. Jean Yip, Ն.Վ. Vincent Ho եւ Ն.Վ. Costas Megenakis, Օնթարիո Նահանգի Համայնքային, Մանուկներու եւ Ընկերային Ծառայութեանց Նախարար՝ Ն.Վ. Michael Parsa, Օնթարիո Նահանգի Խորհրդարանի Անդամներ՝ Ն.Վ. Aris Babikian, Ն.Վ. David Smith, Ն.Վ. Jonathan Tsao եւ Ն.Վ. Rob Cerjanec: Ներկայ էին նաեւ Թորոնթոյի քաղաքապետարանի Խորհուրդի Անդամներ՝ Shelley Carroll, Nick Mantas, Brad Bradford եւ Michael Thompson:
- Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքը, Չորեքշաբթի, 20 Օգոստոս 2025-ի երեկոյեան ժամը 8:00-ին, կազմակերպեց Երիտասարդական հաւաքն ու Սուրբ Գիրքի հերթական սերտողութիւնը եկեղեցւոյ ներքնասրահին մէջ: Սերտողութիւնը վարեց Եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գերպ. Տ. Գարեգին Ծ. Վրդ. Շիրսմեան: Հայր Սուրբը ներկայացուց Մարկոսի Աւետարանին երկրորդ գլուխը՝ պարզաբանումներով եւ մեկնաբանութիւններով: Ներկաները մեծ հետաքրքրութեամբ հետեւեցան իսկ հարցումներու եւ քննարկումներու միջոցով առաւել խորացուցին սերտողութեան նիւթը: Սերտողութենէն ետք, ներկաները եկեղեցւոյ բակին մէջ մասնակցեցան խարոյկի բոցավառութեան, վայելեցին հիւրասիրութիւնը եւ մտերմիկ զրոյցներով փակեցին երեկոն:
- Ուրբաթ 5 Սեպտ. 2025-ի կէսօրին, Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցի այցելեցին Մոնթրէալէն ժամանած խումբ մը ուխտաւոր հայորդիներ, որոնք դէպի Գեմպրիճ ուղեւորութեան ընթացքին կանգառ մը կատարեցին: Ուխտաւորները դիմաւորուեցան եկեղեցւոյս Հոգեւորականաց դասուն կողմէ: Հաւաքական «Տէր Ողորմեա» երգեցողութենէն ետք Գերպ. Հայր Գարեգին «Ուխտ» բառին բացատրութիւնը տալէ ետք Տէրունական աղօթք երգուեցաւ, որմէ ետք ներկաները սիրոյ սեղանի շուրջ եկեղեցւոյ տիկնաց յանձնախմբումի կողմէ հիւրընկալուեցան ներքնասրահէն ներս:
- Ուրբաթ 5 Սեպտ. 2025-ին, Առաջնորդ Սրբազան Հայրը դէպի Գեմպրիճ ուղեւորութեան առթիւ Թորոնթօ ժամանեց, ընկերակցութեամբ Հոգջ. Տէր Յակոբ Վրդ. Եագուպեանի եւ Ազգ. Վարչութեան ատենապետ Տիկ. Ծովիկ Թէրզեանի: Սրբազան Հօր խումբին միացան եկեղեցւոյ Հոգեւոր Հայրերը եւ ցաւակցական այցելութիւն կատարեցին Զաքարեան ընտանիքին, իրենց քրոջ Վրէժուհիի մահուան առթիւ:

- Բարձր տնօրինութեամբ Գանատայի Հայոց Թեմի բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Բաբգէն Ս. Արք. Չարեանի, Կիրակի 7 Սեպտեմբեր 2025-ին, Թորոնթոյի Սուրբ Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ մէջ Սուրբ եւ Անմահ Պատարագը մատուցեց Լիբանանէն ժամանած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի եւ Կիրակնօրեայ Վարժարաններու Վարիչ՝ Գերպ. Տ. Ստեփանոս Ծ. Վրդ. Փաշայեան: Իր քարոզէն առաջ, Հայր Սուրբը գոհութիւն բարձրացուց առ Աստուած, որու նախախնամութեամբ հնարաւոր եղաւ իրեն դարձեալ պատարագել Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, ուր տասը տարիներ առաջ ծառայած էր իբրեւ Հոգեւոր Հովիւ: Ան երախտագիտութեան խօսք յայտնեց Թեմի Առաջնորդ Սրբազան Հօր արտօնութեան համար, ինչպէս նաեւ եկեղեցւոյ Հոգեւորականներուն եւ Հոգաբարձութեան ընձեռած առիթին: Ապա, օրուան ճաշու Աւետարանէն իր պատգամը փոխանցեց հաւատացեալներուն:
- Երկուշաբթի 8 Սեպտ. 2025-ին, եկեղեցւոյ Հոգեւոր Հայրերը Մոնթրէալ մեկնեցան, Ազգ.Առաջնորդարանի կողմէ կազմակերպուած Գանատայի Հայոց Թեմի տարեկան Հոգեւորականաց երկօրեայ համագումարին մասնակցելու: Տէր Հայրը Չորեքշաբթի 10 Սեպտ.-ին իսկ Հայր Սուրբը Ուրբաթ 12 Սեպտ.-ին վերադարձան Թորոնթօ:
- Հինգշաբթի 11 Սեպտ. 2025-ի կէսօրին, Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցի այցելեց Լիբանանէն ժամանած Այնճարի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ Հովիւ եւ երկրորդական վարժարանի տնօրէն՝ Վեր. Յակոբ Աքպաշարեան, ընկերակցութեամբ Թորոնթոյի Միջ-Յարանուանական մարմնի ատենապետ՝ Տիար Յակոբ Ճամպազեանին: Յարգելի հիւրերը դիմաւորուեցան եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տէր Տաթև Ա. Քհնյ. Միքայէլեանի կողմէ: Տէր Հայրը, բարի գալստեան խօսք արտասանելէ ետք, հակիրճ բացատրութիւն տուաւ եկեղեցւոյ ծառայական առաքելութեան շուրջ, իսկ Վերապատուելի հիւրը շնորհակալութիւն յայտնեց եւ կարճ զեկոյց մը փոխանցեց Այնճար Հայաւանի հոգեւոր եւ կրթական կեանքին մասին:
- Հ.Օ.Ս.-ի Կրթական 47-րդ Տարեշրջանի Պաշտօնական Բացում: Ուրբաթ 12 Սեպտ. 2025ի առաւօտեան ժամը 9-ին, Հ.Օ.Ս.-ի Ամենօրեայ վարժարանի աշակերտութիւնը եկեղեցի յաճախեցին, ընկերակցութեամբ տնօրէնութեան, ուսուցչական կազմին, կրթական մարմնին, Հայ Կեդրոնի պատասխանատու մարմնին, Հ.Օ.Ս.-ի շրջանային եւ Ռուբինա մասնաճիւղի վարչութեանց. ներկայ էին նաեւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Տէր Հայրի Քհնյ. Թանաշեան, Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ հովիւ՝ Արժ. Տէր Հայկ Քհնյ. Շահինեան եւ Հայ Աւետ. Եկեղեցւոյ հովիւ՝ Պատ. Զոհրապ Մարգիսեան: Աշակերտութիւնը դիմաւորուեցաւ Արժ. Տէր Տաթև Ա. Քհնյ. Միքայէլեանի կողմէ: Տէր Հայրը, յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ Հայր Սուրբին եւ Հոգաբարձութեան՝ շնորհաւորական եւ բարի վերամուտի մաղթանք արտասանեց, հեգասահ ընթացք մաղթեց տնօրէնութեան,

ուսուցչական կազմին եւ աշակերտութեան: Ապա խօսք առին դպրոցի տնօրէն՝ Պրն. Ռաֆֆի Սարգիսեան եւ կրթական մարմնի ատենապետ՝ Տիար Վազրիկ Շարապխանեան: Աւարտին, ներկայ հոգեւորականները փակման աղօթք կատարեցին:

- Շաբաթ 13 Սեպտ. 2025-ի առաւօտուն, Աստուածաշնչական մէջբերումով սկիզբ առաւ եկեղեցւոյ Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբին նոր ծրագիրը՝ «Յիսուսի Փոքրիկները»: Գերայ. Տ. Գարեգին Ծ. Վրդ. Շիրսումեանի բարի գալուստի իր խօսքին մէջ, թէ ծնողք դառնալը Աստուծոյ կողմէ պարգեւ մըն է, սակայն նոյնքան ալ բարձր կոչում եւ պարտականութիւն՝ զաւակները դաստիարակել Աստուծոյ խօսքով ու առաջնորդել հաւատաքով: Ան երախտագիտութեամբ գնահատեց Քրիստոնէական Յանձնախումբի անդամներու նուիրումն ու ջանքերը՝ մեր ժողովրդին Քրիստոնէական դաստիարակութիւն սերմանելու ուղղութեամբ: Այնուհետեւ, Օրդ. Հուրինա Պերպերեան առաջնորդեց ծրագիրը եւ բացառիկ սիրով ու մօտեցումով ներկայացուց նախաձեռնութիւնը: Ժպտադեմ եւ սրտաբաց մանուկներուն մասնակցութիւնը վերածուեցաւ կենդանի վկայութեան, որ Աստուծոյ փառաբանութիւնը կարելի է սորվիլ կեանքի ամենէն վաղ շրջանին: Ծրագիրը աւարտին հասաւ ձեռնային աշխատանքով ու հիւրասիրութեամբ: Յայտնենք, որ յաջորդ հանդիպումը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 27 Սեպտեմբեր 2025-ի, առաւօտեան 10:00-ին:
- Կիրակի, 14 Սեպտեմբեր 2025-ին, Վերացման Սրբոյ Խաչի տօնին առիթով, հանդիսաւոր Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցուեցաւ Թորոնթոյի Սուրբ Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ մէջ: Սուրբ Պատարագի սրբազան արարողութիւնը կատարեց եւ օրուան քարոզը փոխանցեց եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գերայ. Տ. Գարեգին Ծ. Վրդ. Շիրսումեան: Օրուան պատգամէն առաջ, Անթիլիասէն ժամանած Գերայ. Տ. Ստեփանոս Ծ. Վրդ. Փաշայեան եւ եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Տաթեւ Աւագ Քահանայ Միքայէլեան բարձրացան սուրբ խորան՝ կատարելու համար Ռեհանի օրհնութեան կարգը, Սարկաւազաց դասին հետ միասին: Ապա, պատարագիչ Հայր Սուրբը իր պատգամը փոխանցեց, իբրեւ բնաբան ընտրելով Տիրոջ խօսքը. «Եթէ մէկը ուզէ ինծի հետեւիլ՝ թող ուրանայ իր անձը, ամէն օր իր խաչը առնէ եւ ետեւէս գայ» (Ղկ 9.23):
- Խաչվերացի երեկոյեան, Կիրակի 14 Սեպտեմբեր 2025-ի երեկոյեան ժամը 6:00-ին, Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ աւանդական «Խաչվերացի Թափօր Անդաստան»ը: Կը կարծուի թէ այս արարողութիւնը արդիւնքը եղած է այն տպաւորութեան, որ Խաչափայտը թողած է Հայ ժողովուրդին մէջ, երբ 7-րդ դարուն՝ Խաչափայտի գերադարձի ընթացքին, ան անցած էր Հայաստանէն: Ռեհանով զարդարուած խաչափայտի մատունքով եւ վարդաջուրով կատարուեցաւ շքեղ անդաստանի արարողութիւնը, որով օրհնուեցաւ աշխարհի չորս կողմերը, ամբողջ

աշխարհին Աստուծմէ խաղաղութիւն, բարի բերք, քաղցր անձրեւի օրհնութիւն եւ ժողովուրդներու ապահովութիւն խնդրելով:

- Երկուշաբթի 15 Մեպտ. 2025-ի «Յիշատակ Մեռելոց»-ի առաւօտեան Ս. Եւ Անմահ Պատարագ եւ համայն ննջեցեալներու հոգոյ խաղաղութեան հոգեհանգստեան կարգ կատարուեցաւ:
- Տ. Տաթեւ Աւագ Քինյ. Միքայէլեանի Քահանայական Նուիրումին Եւ Ծառայութեան 40-ամեակի Յիշատակութիւն: Կիրակի, 21 Մեպտեմբեր 2025-ին, Թորոնթոյի Սուրբ Աստուածածին եկեղեցոյ մէջ մեծ շուքով նշուեցաւ Արժանապատիւ Տ. Տաթեւ Աւագ Քինյ. Միքայէլեանի քահանայական ձեռնադրութեան եւ օժման 40-ամեակը: Այս յոբելենական առիթով Արժանապատիւ Տէր Հայրը մատուցեց Սուրբ եւ անմահ Պատարագը եւ քարոզեց հաւուր պատշաճի: Իր խօսքին սկիզբը, ան փառք եւ գոհութիւն մատուցեց Երկնաւոր Հօր, որ իրեն արժանի գտած էր քահանայական ձեռնադրութեան 40-ամեակի պատարագը մատուցելու: Նաեւ շնորհակալութիւն յայտնեց Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդին՝ Գերշ. Տ. Բաբգէն Ս. Արք. Չարեանին, որ Սուրբ Աստուածածնայ տօնին առիթով օրհնութեան գիրով մը պատուած էր զինք: Տէր Հայրը իր երախտագիտութիւնը յայտնեց եկեղեցոյ Հոգեւոր Տեսուչին, Հոգաբարձութեան, Սարկաւագաց դասին եւ բոլոր կամաւորներուն, որոնք նեցուկ են իրեն եւ բարոյական մասնակցութեամբ պատուեցին յոբելենական այս յիշատակութիւնը: Յուզումով Տէր Հայրը վերյիշեց Հալէպի հնադարեան Սուրբ Քառասնից Մանկանց եկեղեցոյ մէջ իր ձեռնադրութեան պահը եւ իր սրտին մէջ աղօթք դարձուցած Սաղմոսը, որ կ'ըսէ «Ո՛վ Տէր, քեզի՛ ապաւինեցայ, թող ամօթով չմնա՛ մ' բնաւ»: Իսկ քարոզին համար իբրեւ բնաբան ընտրած էր իր անդրանիկ քարոզի բնաբանը՝ «Ձեր հարստութիւնը ո՛ր որ է, հոն կ'ըլլայ նաեւ ձեր սիրտը» (Մտթ. 6.21): Պատարագի աւարտին, բարձրացուեցաւ աղօթք Հայաստանի Հանրապետութեան վերանկախութեան համար եւ օրհնուեցաւ եռագոյն դրօշը: Այնուհետեւ եկեղեցականները եւ հաւատացեալ ժողովուրդը ուղղուեցան կեդրոնի սրահը, ուր եկեղեցոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գերայ. Տ. Գարեգին Ծ. Վրդ. Շիրստմեան, իր սրտի խօսքը ուղղեց Տէր Հօր եւ Հոգաբարձութեան հետ միասին լանջախաչ մը յանձնեց՝ ի նշան սիրոյ եւ երախտագիտութիւն: Այնուհետեւ եկեղեցոյ ատենապետ Տիար Կարօ Սրկ. Սարգիսեան կարդաց Տէր Հօր կենսագրականը: Հանդիսութեան ընթացքին երաժշտական ելոյթներով ներկայացան Տիար Ռազմիկ Սրկ. Պէպէճեան, Տիկին Անոյշ Գալստեան եւ Տիկին Ռուբինա Քեօշկերեան: Աւարտին, Տէր Հայրը իր սրտաբուխ խօսքերով եւ աղօթքով փակեց հանդիսութիւնը եւ օրհնեց ճաշասեղանը:
- Թորոնթոյի Հ.Օ.Մ.-ի Ռուբինա մասնաճիւղի Վարչականները եւ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչները շնորհաւորեցին Տ. Տաթեւ Աւագ Քահանային: Երկուշաբթի, Մեպտեմբեր 22-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Հ.Օ.Մ.ի Թորոնթոյի «Ռուբինա» մասնաճիւղի վարչութիւնը, ընկերակցութեամբ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչներուն, այցելեցին Սուրբ Աստուածածին եկեղեցի՝

շնորհաւորելու Արժանապատիւ Տ. Տաթեւ Ա. Քհնյ. Միքայէլեանը, իր քահանայական ձեռնադրութեան եւ օծման 40-ամեակին առթիւ: Հանդիպման ընթացքին, Հ.Օ.Մ.- ուիիները երախտագիտութիւն յայտնեցին Տէր Հօր երկարամեայ նուիրումին, հոգեւոր ծառայութեան եւ համայնքային աջակցութեան համար: Արժանապատիւ Տէր Հայրը, իր հերթին, ջերմապէս շնորհակալութիւն յայտնեց այցելութեան եւ Հ.Օ.Մ.- ուիիներուն հետ բաժնեց անցեալի Հ.Օ.Մ.-ին հետ ունեցած իր յուշերէն եւ փորձառութիւններէն: Հանդիպումին ներկայ էին եկեղեցւոյ Հոգաբարձութեան ներկայացուցիչները, ինչպէս նաեւ եկեղեցւոյս Հոգեւոր Տեսուչ Հայր Սուրբը, որ իր կարգին օրհնութիւնն ու քաջալերանքը փոխանցեց Հ.Օ.Մ.-ի ընտանիքին, մաղթելով անոնց նորանոր յաջողութիւն իրենց նուիրեալ եւ Աստուածահաճոյ ծառայութեան համար:

- Շաբաթ 27 Սեպտեմբեր 2025-ին, Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբի նախաձեռնութեամբ շարունակուեցաւ «Յիսուսի Փոքրիկները» ծրագիրը իր երկրորդ հանդիպումով: Ծնողներու եւ մանուկներու մասնակցութիւնը դարձաւ հաւաքական վկայութիւն մը, որ կը յիշեցնէ մեզի, թէ սերունդներու դաստիարակութիւնը պէտք է հիմնուի ոչ միայն ուսման եւ յաջողութեան, այլ ամէն բանէ առաջ՝ Աստուծոյ Խօսքին եւ ճշմարիտ հաւատքին վրայ: Հանդիպումը վարեց Օրիորդ Հուրինա Պերպերեան, որ մանուկներուն ներկայացուց ստեղծագործութեան պատմութիւնը: Օրուան հանդիպումը աւարտին հասաւ ձեռային ժամով եւ հիւրասիրութեամբ: Յաջորդ հանդիպումը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 11 Հոկտեմբեր 2025-ի առաւօտեան ժամը 10:00-ին:
- Կիրակի, 28 Սեպտեմբեր 2025-ին, Թորոնթոյի Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ մէջ Սուրբ եւ անմահ Պատարագով հանդիսաւոր կերպով նշուեցաւ Հայ ժողովուրդին յատուկ Վարագայ Սուրբ Խաչի Տօնը: Պատարագիչ եւ քարոզիչն էր եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գերայ. Տ. Գարեգին Ծ. Վրդ. Շիրստմեան, որ իր ոգեշունչ քարոզին մէջ հրաւիրեց հաւատացեալները՝ խաչին մէջէն տեսնել Քրիստոսի սէրը, ներկայութիւնը եւ փրկութիւնը: Յաւարտ Պատարագին, Սարկաւազաց եւ Դպրաց դասերուն առաջնորդութեամբ թափօրը ուղղուեցաւ եկեղեցւոյ շրջափակ ու կատարուեցաւ մեր դարաւոր անանդութիւններէն՝ «Բերքի Օրհնութեան» աղօթքը:
- Սփիւռքեան պայմաններուն մէջ, հայ ժողովուրդի գոյատեւման գրաւականներէն մին կը հանդիսանայ հայկական մշակոյթի պահպանումը եւ նոր սերունդին փոխանցումը: Այս նուիրական գործին լծուած բազմաթիւ հայկական խումբեր եւ միութիւններ, ջանք եւ զոհողութիւն չեն խնայեր իրենց կարելին ի սպաս դնելու այս ուղղութեամբ, դիմագրաւելով բազմաթիւ դժուարութիւններ: Այս մտածումի լոյսին տակ, Համազգայինի Գանատայի Երջանային Վարչութիւնը ազնիւ գաղափարը եւ քաջութիւնը կ'ունենայ հայրենիքէն հրաւիրելու «Ակունք» համոյթը, իրերայաջորդ ձեռնարկներով խանդավառելու Գանատահայութիւնը: Արդարեւ, Հինգշաբթի 2 Հոկտեմբեր 2025-ի երեկոյեան, Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Հոգեւորականները եւ Հոգաբարձութիւնը հիւրընկալեցին Ակունք խումբը եկեղեցւոյ

յարկէն ներս: Խումբը դիմաւորուեցաւ եկեղեցւոյս Հոգեւոր տեսուչ Հայր Սուրբին եւ Արժ. Տէր Հօր, ինչպէս նաեւ Հոգաբարձական եւ Տիկնանց կազմին կողմէ: Եկեղեցւոյ մէջ Հայր Սուրբի Բարի գալստեան խօսքէն եւ հաւաքական «Տէր Ողորմեա» երգուելէն ետք, ներկաները հիւրասիրուեցան եկեղեցւոյ ներքնասրահը սիրոյ սեղանի մը շուրջ, Տիկնանց յանձնախումբի պատրաստած համադրամ ուտեստներով: Յովնանեան սրահէն ներս Տէր Հօր արատասանած սրտի խօսքէն ետք, Ակունքի խումբին ճոխ երգերով եւ պարերով վերջ գտաւ երեկոն:

- Կիրակի 5 Հոկտ. 2025-ին, յաւարտ Ս. Պատարագի, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Արցախեան 44-օրեայ պատերազմի նահատակներու հոգիներու խաղաղութեան ի հանգիստ: Աւարտին, Գ.Ե.Մ.-ի եւ Հ.Մ.Ը.Մ.-ի խումբերու մասնակցութեամբ, Սարկաւազաց եւ եկեղեցականաց կազմերով Ծաղկեմատոյց եւ աղօթք կատարուեցաւ, կեդրոնի շրջափակին մէջ զետեղուած Նահատակաց յուշարձանին առջեւ: Գերապատիւ Տէր Գարեգին Ծ. Վրդ. Շիրտմեանի պատգամով եւ Գ.Ե.Մ.-ականներու հայրենասիրական երգերով վերջ գտաւ ոգեկոչման հանդիսութիւնը:
- Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, իր Գահակալութեան երեսնամեակին առթիւ Գանատայի Հայոց Թեմ կատարած այցելութեան ընթացքին, 18-22 Հոկտ. 2025-ին, այցելեց Թորոնթօ: Վեհին ի պատիւ կատարուեցան հետեւեալ միջոցառումները, կազմակերպութեամբ Առաջնորդարանի կողմէ յառաջացած յանձնախումբին, ատենապետութեամբ Տիկ. Օսիկ Մխսիարթիւնեանի: Ի պատիւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին՝ պաշտօնական ընթրիք Թորոնթոյի մէջ, ուր «Անթիլիասական ոգին ուրիշ բան չի կրնար ըլլալ, այլ ծառայել Աստուծոյ, եկեղեցւոյ, ազգին ու հայրենիքի գերագոյն ու ընդհանրական շահերուն» շեշտեց Արամ Ա. Կաթողիկոս:
- Շաբաթ 18 Հոկտեմբեր 2025-ին, Մոնթրէալէն Թորոնթօ ժամանեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը, իրեն ընկերացող շքախումբին հետ, եւ իր իջեւանելիք պանդոկի մուտքին դիմաւորուեցաւ Թորոնթոյի հայ համայնքի կեանքէն ներս գործող կառոյցներու ներկայացուցիչներուն կողմէ: Բարի գալուստի խօսքով ներկաներուն սրտի թարգմանը հանդիսացաւ առաջնորդ սրբազան հայրը, ըսելով. «Թորոնթոյի մեծ ընտանիքը այսօր պատիւ ունի հիւրընկալելու Ձեզ՝ Վեհափառ Տէր: Ինչպէս Մեծն Մոնթրէալի մէջ մեր ժողովուրդի գաւակները հոգեւոր աննախադէպ խանդավառութեամբ նշեցին Ձերդ Սրբութեան գահակալութեան 30-ամեակը, նոյն ոգիով ու պատրաստութեամբ Թորոնթոյի հայ համայնքը եկած է հոս՝ տեսնելու ու լսելու Ձեզ, որպէսզի վերանորոգ հաւատքով ու առաւել նուիրումով շարունակէ իր համայնքային կեանքը»: Վեհափառ Հայրապետը իր օրհնութիւնն ու բարձր գնահատանքը յայտնեց ներկաներուն: Ապա անոնք ուղղուեցան Թորոնթոյի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ սրահ, ուր տեղի ունեցաւ պաշտօնական ընթրիք՝ ի պատիւ Նորին Սրբութեան: Բացման խօսքով հանդէս եկաւ Թորոնթոյի Սուրբ Աստուածածին

եկեղեցւոյ հոգեւոր տեսուչ Գերապատիւ Տ. Գարեգին Ծ. Վրդ. Շխրտըմեան: Հայր սուրբը իր խօսքին մէջ ըսաւ. «Մենք միայն Վեհափառ Հայրապետին անցնող երեսուն տարիներու ծառայութիւնը չենք դիտեր, այլ անոնց անանց ներկայութիւնը կը շեշտենք այսօր եւ ապագայ մեր կեանքին մէջ, որովհետեւ Արամ Վեհափառին ոգեղէն տեսիլքը հիւսուեցաւ շատերուս հաւատքին, միտքին ու գործին: Իր շունչով սերունդներ թրծուեցան, նկարագիրներ կռանուեցան, համոզումներ կոփուեցան, եկեղեցին նոր տեսիլք ու հոգեւոր շունչ առաւ, նոր զարթօնք ապրեցաւ, նոր ու միջազգային բեմերու վրայ բարձրացաւ, հայ գիրն ու դպրութիւնը ծաղկեցաւ եւ ազգային պահանջատիրութեան ու արդարութեան ձայնը եղաւ աւելի հնչելու ներդաշնակ»: Հայր սուրբը իր խօսքը ուղղելով Նորին Սրբութեան՝ ընդգծեց. «Այսօր կը խոնարհինք Ձեր բազում շնորհքներուն եւ տարած բազմակողմանի առաքելութեան դիմաց, որ ծառայեցուցիք մեր տարասփիւռ ժողովուրդին գոյերթը իր լուսապայծառ թիրախին առաջնորդելու: Եթէ Սուրբ Մեսրոպ լեզու տուաւ մեր հաւատքին, Դուք հոգի տուիք մեր հաւատքին: Յաջողեցաք հաւատքը դարձնել պատասխան ժամանակակից մարդու հարցերուն, եւ եկեղեցական ծառայութիւնը՝ ապրուած վկայութիւն: Մեսրոպով հայացած Աստուածը, Ձեզմով նորէն խօսեցաւ մեր ժողովուրդի սիրտին, մեր երիտասարդութեան հոգիին եւ մեր հաւատքի նոր արշալոյսին մասին. խօսեցաւ՝ իր եկեղեցւոյ տալով տեսիլք, միտք եւ խօսք: «Յանուն այստեղ համախմբուածներուն, Վեհափառ Տէր, աղօթափուխ կը մաղթեմ Երթը Ձեր շարունակուի անվեհեր, Միշտ դէպի լոյսը Ձեր ուխտին. Ու ցորենի կանաչ արտին մէջ՝ Իբրեւ առույղ ծաղիկը կապոյտ՝ Գաղջ արեւին տակ խնդաք միշտ Իսկ Ձեր հոգին խմէ գինին՝ կեանքի ու լոյսի. Որպէսզի ոսկեղէն ճաճանչներով բոյներ հիւսէք նոր Ձեր հաւատքի պարտէզին»: Հայր Գարեգինին խօսքէն ետք, յանուն Գանատայի հայոց թեմի Ազգային իշխանութեան, խօսք առաւ ատենապետ Ծովիկ Թերզեան: Ան ըսաւ. «Երեսուն տարիներ առաջ, երբ Ձերոյ Սրբութիւնը բարձրացաւ մեր Սուրբ Աթոռի գահին, եկեղեցւոյ ու ազգին առջեւ նոր ժամանակաշրջան մը բացուեցաւ: Ձեր ղեկավարութեամբ, մեր եկեղեցին եղաւ ո՛չ միայն աղօթքի տուն, այլեւ հաւատքի, ազգային ինքնութեան ու համախմբումի վայր: «Այսօր մեր Սուրբ Եկեղեցին կը նշէ բացառիկ առիթ մը, կը բանայ էջ մը իր նորագոյն պատմութեան մէջ. երեսնամեակը Նորին Սրբութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսին գահակալութեան: «Որպէս Գանատայի Հայոց Թեմի ազգային վարչութեան ատենապետ, այսօր պարտք կը համարեմ մեր խորին երախտագիտութիւնը արտայայտելու Ձերոյ Սրբութեան: Երախտագիտութիւն՝ Ձեր անսակարկ ծառայութեան, Ձեր հայրական սիրոյն եւ Ձեր հոգեւոր առաջնորդութեան: Շնորհիւ Ձեր քաջալերանքին, մեր հաւաքական աշխատանքը առաւել պտղաբեր կը դառնայ, մեր համայնքները՝ աւելի կազմակերպ, իսկ մեր երիտասարդութիւնը՝ աւելի կապուած իր արմատներուն: «Երեսուն տարիներու ընթացքին բազում բարդութիւններ ու մարտահրաւերներ առկայ եղան Հայրենիքի եւ Սփիւռքի մէջ: Բայց Ձեր օրինակով սորվեցանք, թէ հաւատքով ու միասնականութեամբ կարելի է յաղթահարել ամէն խոչընդոտ: «Այսօր մեր սրտերը լեցուն են գոհունակութեամբ ու ուրախութեամբ: Մեր աղօթքն է, որ Աստուած Ձեզի առողջութիւն պարգեւէ, նորանոր ձեռքբերումներ եւ բեղմնաւոր տարիներ՝ հայ

եկեղեցւոյ եւ մեր ժողովուրդի ծառայութեան մէջ: «Թող Աստուած զօրացնէ Ձեզ, եւ ձեր գահակալութեան գալիք տարիները ըլլան խաղաղութեան, ստեղծագործութեան եւ համախմբման տարիներ: «Շնորհաւոր 30 ամեակ: «Աստուած օգնական, Վեհափառ Տէր»: Արիս Պապիկեան՝ Օնթարիոյ նահանգի երեսփոխանը, ընթերցեց նահանգի վարչապետ Տակ Ֆորտի նամակը, ուր ան իր խոր գոհունակութիւնը կը յայտնէ Նորին Սրբութեան Օնթարիոյ այցելութեան առիթով: Ան անդրադառնալով աշխարհին դիմագրաւած դժուարութիւններուն՝ յիշեց Վեհափառ Հայրապետին ունեցած կեդրոնական դերը միջ-եկեղեցական յարաբերութեանց աշխուժացման եւ միջ-կրօնական երկխօսութեան խորացման մէջ: Օնթարիոյ մօտ Լիբանանի պատուոյ հիւպատոս Գրիգոր Փոսթաճեան, Լիբանանի պետութեան ու կառավարութեան յատուկ շնորհաւորանքը յայտնեց Արամ Ա. Վեհափառ Հայրապետին՝ գահակալութեան 30-ամեակին առիթով: Ընթրիքի աւարտին, իր հայրապետական խօսքը ուղղեց Նորին Սրբութիւնը: Ան Անթիլիասի եւ անթիլիասական Միաբանութեան ծառայական առաքելութեան վրայ լոյս սփռելով՝ ըսաւ. «Անցնող 30 տարիները սովորական տարիներ չեղան Մեր եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ծառայութեան առաքելութեան մէջ: 30 տարիներ՝ հաւատքի ու յոյսի, կամքի ու տեսիլքի. 30 տարիներ՝ տազնապի ու պատերազմի, աշխատանքի ու իրագործումի տարիներ: Եթէ Մեր 30 տարիներու առաքելութիւնը փորձենք մէկ բառի մէջ խտացնել, այդ բառը ծառայութիւն բառն է: Առանց ծառայութեան անիմաստ կը դառնային այս 30 տարիները: Ծառայութիւնը եղած է իմ կեանքիս իմաստ, նկարագիր, խորք, բովանդակութիւն, ուղղութիւն ու նպատակ տուողը: 30 տարիները ես ապրեցայ Անթիլիասով ու Անթիլիասի համար՝ մեր Սուրբ Աթոռին համար: 30 տարիներու իմ կեանքս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կեանքն է: Հոգեւորականին կեանքը անձնակեդրոն, ինքնակեդրոն, ինքնանպատակ կեանք չի՛ կրնար ըլլալ: Մենք կ'ապրինք, կը գործենք, կը ծառայենք նուիրական նպատակի մը համար: Անձը նպատակ չէ. անձը միջոց է: Վա՛յ այն կազմակերպութեան, վա՛յ այն համայնքին, վա՛յ այն պետութեան կամ կառոյցին, որ կը գործէ ու կը ծառայէ անձի համար: Ինչպէս ըսի, անձը միջոց է, բայց վա՛յ մեզի, երբ ան նպատակ դառնայ: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մէջ ա՛յս ոգիով, ա՛յս տեսլականով, ա՛յս յանձնառութեամբ կազմաւորուեցանք ու կը կազմաւորենք սերունդներ: Ահաւասիկ, ձեր շուրջը կը տեսնէք միաբան հայրեր՝ սրբազաններ ու հայր սուրբեր: Մեր հոգեւորականները անթիլիասական ոգիով կազմաւորուեցան: Աթիլիասական ոգին ուրիշ բան չի՛ կրնար ըլլալ, եթէ ոչ ծառայել Աստուծոյ, եկեղեցւոյ, ազգին ու Հայրենիքին գերագոյն ու ընդհանրական իտեալներուն: Անցնող 30 տարիները այս բոլորով իմաստաւորուեցան ու արժեւորուեցան՝ իմ եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կեանքին մէջ: Եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը դո՛ւր էք, եւ մեր հոգեւորականները, ինձմէ սկսեալ, ձեր հոգեւոր ծառայութեան նուիրուած սպասաւորներ են՝ Քրիստոսի օրինակով: Մենք կը գործենք ու կը ծառայենք Աստուծոյ փառքին համար, մեր ժողովուրդին ու ազգին ծառայութեան նուիրուած: Մեր փառքն ու պատիւը դո՛ւր էք, եւ մենք այդ փառքն ու պատիւը կը փորձենք արժեւորել ու իմաստաւորել ծառայութեամբ: Հետեւաբար, այսօր եկաք ու վաղը

Սուրբ Պատարագին պիտի մասնակցիք ո՛չ թե զիս յարգելու համար, այլ 30 տարիներու ծառայական առաքելութիւնը յարգելու համար: Արդ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը եղաւ, է եւ միշտ պիտի ըլլայ հաւատքով կռանուած, կամքով թրծուած եւ տեսլականով շաղախուած ծառայութիւն. ծառայութիւն՝ Աստուծոյ, ծառայութիւն՝ մեր ազգին, ծառայութիւն՝ մեր Հայրենիքին»:

- Սուրբ Պատարագ եւ Հայրապետական պատգամ՝ Թորոնթոյի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Արամ Ա. Կաթողիկոս՝ «հարկ է մեր կեանքը արժէքներով իմաստաւորել»: Արդարեւ, Կիրակի 19 Հոկտեմբեր 2025-ի առաւօտուն, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ուղղուեցաւ Թորոնթոյի Սուրբ Աստուածածին եկեղեցի, ուր մեծ թիով հաւատացեալներ կը սպասէին իրենց հոգեւոր պետին ժամանումը: «Հրաշափառ»ի արարողութենէն ետք, մատուցուեցաւ Սուրբ եւ Անմահ Պատարագ՝ ձեռամբ հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Հայոց Թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Անուշաւան Արք. Դանիէլեանի: Բարի գալուստի խօսք ուղղեց Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արք. Չարեան, նախ յայտնելով իր որդիական երախտագիտութիւնն ու հոգեկան խանդավառութիւնը՝ Նորին Սրբութեան Գանատայի թեմին շնորհած այցելութեան առիթով: Ապա, սրբազան հայրը ըսաւ. «Նորին Սրբութեան այցելութիւնը Գանատա ուրախութիւն է մեզի համար, մինչ իր գահակալութեան 30-ամեակի նշումը՝ հպարտութիւն եւ տօն: Մենք, որպէս մեծ ու մէկ ընտանիք, հաւատքի վերանորոգումի բացառիկ առիթի մը դիմաց կը գտնուինք: Այսօր այստեղ եկած ենք լսելու Հայրապետին ուղենիշ պատգամը, ինչ որ նոր ուղղութիւն ու նոր հորիզոն պիտի բանայ մեզի՝ հոգեւորականներու ծառայական եւ բոլորիս համայնքային կեանքին մէջ»: Նորին Սրբութիւնը իր հայրապետական պատգամին սկիզբը ողջունեց Առաջնորդ սրբազան հայրը, գաղութին մէջ ծառայող հոգեւոր դասը, ազգային վարչութիւնն ու յարակից մարմինները, որոնք զանազան պատասխանատուութիւններով իրենց գործօն մասնակցութիւնը կը բերեն մեր եկեղեցւոյ պայծառութեան ու համայնքի կենսունակութեան եւ զարգացման նպաստող աշխատանքներուն: Վեհափառ Հայրապետը յատուկ կերպով ողջունեց մեր ազգի սիրելի զաւակները՝ յիշեցնելով, թէ եկեղեցին հաւատքի համայնք է եւ մենք բոլորս այդ համայնքի անդամներն ենք. հետեւաբար, անհրաժեշտ է մասնակից դառնալ հաւատքի համայնքի կեանքին ու առաքելութեան: Շարունակելով իր խօսքը՝ Վեհափառ Հայրապետը ըսաւ. «ինձի համար յատուկ հոգեկան ուրախութիւն է ըլլալ դարձեալ Թորոնթոյի մեր ժողովուրդի սիրելի զաւակներուն հետ՝ Աստուծոյ տան մէջ: Եկեղեցին Աստուծոյ տունն է, եւ Աստուած մեզ կը հրաւիրէ այս տան հարազատ զաւակները ըլլալու, այս տան արժէքներով մեր կեանքը իմաստաւորելու, մեր կեանքի ճամբան լուսաւորելու, մեր կեանքը երկնային ճշմարտութիւններով ու արժէքներով իմաստաւորելու: Ա՛յս է պատգամը Աստուծոյ այս տան. ա՛յս է պայմանը այս տան հաւատարիմ անդամը ըլլալու: Հետեւաբար, որպէս հայրապետական պատգամ, այսօր կը յիշեցնեմ մեր ժողովուրդի զաւակներուն, թէ հրամայական է որպէս քրիստոնէայ հայեր, մեր կեանքը արժէքներով լեցնելու, որովհետեւ արժէքներով է որ մեր կեանքը

կ'իմաստաւորուի ու իմաստ կը ստանայ: Առանց այդ արժէքներու առկայութեան ու մանաւանդ անոնց նկատմամբ մեր ունեցած հաւատարմութեան, մեր կեանքը կը դառնայ անիմաստ ու դատարկ: Արդ, հարց կու տանք՝ որո՞նք են այդ արժէքները, որո՞նք պէտք է կազմեն մեր կեանքի առանցքն ու նպատակը. - ա) Մեզի համար առաջնահերթ ու գերագոյն արժէք է մեր եկեղեցին: Սովորական վայր չէ եկեղեցին. ինչպէս ըսինք, ան Աստուծոյ տունն է, եւ Աստուած կը հրաւիրէ մեզ այս տան հարագատ բնակիչը ըլլալու. այս տան հովանաւորութեան տակ ապրելու, այս տունով պաշտպանուելու՝ կեանքի բոլոր չարերուն ու չարիքներուն դիմաց: Հետեւաբար, Աստուծոյ տունը պէտք է պահել պայծառ՝ իր երկնային առաքելութեամբ: բ) Մեզի համար կենսական արժէք է եկեղեցւոյ կողքին գործող հայ դպրոցը: Ըսինք ու կը շեշտենք՝ եկեղեցւոյ կողքին: Եկեղեցի-դպրոց գոյակցութիւնը բնական երեւոյթ մըն է մեր կեանքին մէջ. անոնք զիրար կ'ամբողջացնեն: Հետեւաբար, հայ դպրոցը պէտք է պահել ամուր՝ իր հայակերտումի առաքելութեամբ: գ) Մեզի համար գերագոյն արժէք է նաեւ մեր Հայրենիքը: Ճի՛շդ է, այս երկիրի քաղաքացին ենք: Կը վայելենք Գանատային մեզի ընծայած առաւելութիւնները, սակայն մեր արեան կանչով, մեր ազգային պատկանելիութեամբ, մեր մնայուն ու յաւիտենական Հայրենիքը Հայաստանն է: Հայաստանը իւրաքանչիւր հայու համար սրբազան արժէք է՝ մեր սուրբերուն ու նահատակներուն աղօթքով ու արիւնով թրծուած: Հետեւաբար, Հայաստանը պէտք է պահել ամուր՝ իր ներքին կեանքով ու արտաքին յարաբերութեամբ: Ահաւասիկ երեք սրբազան արժէքներ, որոնք պէտք է մնայուն ներկայութիւն ըլլան մեր մտածումներուն ու գործերուն մէջ՝ դառնալով մեր անհատական թէ հաւաքական կեանքի ամուր հիմքերը»:

Սուրբ Պատարագի աւարտին, Հայ Կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ աջահամբոյր:

- Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Գահակալութեան 30-ամեակի հանդիսաւոր նշում Թորոնթոյի մէջ:

«Հայրենիքը Կ'ընթանայ դէպի ինքնաքանդում եւ Սփիւռքը՝ դէպի ինքնամաշում. հարկ է առաջը առնել այս վտանգին՝ Համահայկական Ճիգով»

շեշտեց Արամ Ա. Կաթողիկոս: Կիրակի, 19 Հոկտեմբեր 2025-ին, Թորոնթոյի մէջ հանդիսաւոր կերպով նշուեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին գահակալութեան 30 ամեակը: Արդարեւ, հանդիսութեան բացման խօսքով հանդէս եկաւ Տիար Խաժակ Գուլաճեան: Վեհափառ Հայրապետին անձնուէր ծառայութիւնն ու բազմաճիւղ գործունէութիւնը հետեւեալ բառերով որակեց ան. «Երեք տասնամեակ առաջ հայ ազգիս կամքով հայրապետական Կիլիկեան դարաւոր Սուրբ Աթոռի գահին ծառայելու համար ընտրուեցաւ Նորին Սուրբ Օծութիւն Տէր Տէր Արամ Ա. Վեհափառը: Անոր 30-ամեայ գահակալութեամբ, Սուրբ Աթոռը եւ Սուրբ Աթոռին ընդմէջէն անթիլիասական դիմագիծը փառաւորուեցաւ եւ հովուապետական գաւազանը ծաղկեցաւ Արամ Ա. Վեհափառին եկեղեցաշինութեամբ, նուիրումով, նախանձախնդրութեամբ, աներկիւղ կամքով, ազգային ու հոգեւոր կեանքի բարեգարդումով եւ մշտարթուն հովուութեամբ»:

Գուլաճեան իր խօսքին մէջ լայն տեղ տուաւ վերջին օրերուն տեղի ունեցած դէպքերուն նկատմամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համազգային հարցերու շուրջ յայտնած յստակ կեցուածքին: Իր խօսքի աւարտին ան իր որդիական բարեմադրութիւնները յայտնեց Հայրապետին՝ ըսելով. «Որդիական խոնարհութեամբ կը շնորհաւորենք Ձեր գահակալութեան 30-րդ տարեդարձը՝ մաղթելով արեւշատութիւն եւ երկար տարիներու քաջառողջ գահակալութիւն: Թող նորանոր արարումներով ու ձեռքբերումներով զարդարուի հայրապետական գաւազանը՝ ի փառս Աստուծոյ, ի շինութիւն Հայրենիքիս եւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին, ի միասնութիւն ազգիս հայոց եւ ի պահպանում հայ ազգային արժէքներու»: «Հոգի Տեան ի վերայ իմ, վասն որոյ եւ օծ իսկ զիս. աւետարանել աղքատաց առաքեաց զիս» (Ես 61.1-2) աստուածաշնչական մէջբերումով իր որդիական երախտագիտութեան խօսքը սկսաւ Գանատայի Հայոց Թեմի առաջնորդ Բաբգէն Արք. Չարեան: Ան յետադարձ ակնարկ կատարելով՝ յիշեց 57 տարի առաջ Նորին Սուրբ Օծութեան քահանայական ձեռնադրութիւնն ու օծումը՝ զայն որակելով առաքելութեան մեծ երթի սկիզբ: Ապա, սրբազան հայրը ընդգծեց. «Սուրբ Հոգւոյ շնորհքներով զարդարուած Արամ Ա. Վեհափառ Կաթողիկոսը, մեր ժամանակակից պատմութեան ճակատագրական եւ անկիւնադարձային պահերուն, իբրեւ քաջ հովիւ եւ հմուտ ղեկավար, հայ ազգը առաջնորդեց դէպի խաղաղ ափեր: Անմնացորդ ծառայութիւնը Նորին Սրբութեան, ուսանելի կեցուածքները մեր Հայրապետին եւ ոգևորիչ պատգամները Արամ Ա. Կաթողիկոսին, լուսաւորեցին հայ ազգի գոյերթը: Արդ, Ձեր ծառայութեան դիմաց որդիաբար կը խոնարհինք, Վեհափառ: Դուք Ձեր կեանքը ընծայեցիք հայ ազգի գանձանակին մէջ: Սիրելի ազգակիցներ, թոյլ տուէք, այստեղ ձեր ջերմ սիրոյն ու վառ զգացումներուն արտայայտիչը հանդիսանալով՝ ըսեմ. կեցցէ՛, կեցցէ՛ հայ ազգը. կեցցէ՛, կեցցէ՛ Արամ Վեհափառը»: Հայրապետին երեսնամեայ գահակալութեան նուիրուած երեկոյի աւարտին, հայրապետական օրհնութեան խօսք արտասանեց Վեհափառ Հայրապետը: Ան իր բարձր գնահատանքը յայտնեց Առաջնորդ Սրբազանին, Թեմի ազգային վարչութեան, համայնքային կեանքին մէջ գործող բոլոր կազմակերպութիւններուն եւ ներկաներուն: Ապա, Հայոց Հայրապետը անցեալը իրատես մօտեցումով դիտելու եւ եղելութիւնները առարկայականօրէն քննադատելու հրամայականը շեշտելով՝ ըսաւ. «Նման պահեր յիշեցումի, յիշատակի, անցեալին նայելու, որոշ դէպքեր ու դէմքեր յիշելու առիթներ են: Բայց այս բոլորէն վեր, երբ կը փորձենք անցեալին նայիլ իրապաշտ մօտեցումով, պէտք է անցեալը քննենք իր շրջագիծէն ներս՝ անցեալի ժամանակներու, պայմաններու, կացութիւններու ու մարտահրաւերներու լոյսին տակ: Ես կը հաւատամ, որ անցնող 30 տարիները Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմութեան մէջ նոր էջ բացող տարիներ եղան: Հակառակ տագնապներուն, մեր Սուրբ Աթոռը իր առաքելութիւնը անվեհեր ձեւով շարունակեց: Անհրաժեշտ է ո՛չ զգացական մօտեցումով, այլ իրատես հայեցակէտով դիտել, արժեւորել, գնահատել ու քննադատել այն ինչ որ կատարուեցաւ մեր Սուրբ Աթոռին կողմէ՝ մեր ժողովուրդին համար»: Նորին Սրբութիւնը յիշելով 30 տարի առաջ իր կաթողիկոսական օծման

անդրանիկ պատգամին մեջբերած սաղմոսը՝ ըսաւ. «Սրբազան խորանէն, երբ ստացայ կաթողիկոսական օծումը, սաղմոսին բարերով ըսի՝ «ցոյց տուր ինձի այն ճանապարհը, ուրկէ պէտք է քալեմ»։ Կը հաւատամ, որ Տէրը այդ ճանապարհը ցոյց տուաւ եւ զիս առանձին չձգեց։ Այդ ճամբէն քալեցի՝ իմ առջեւ ունենալով մեր ժողովուրդը, անոր կարիքներն ու սպասումները։ Իմ կարողութեան ու կարելիութեան սահմաններէն ներս տուի՝ այն ինչ որ կրնայի տալ»։ Վեհափառ Հայրապետը շարունակելով իր խօսքը՝ անդրադարձաւ ամեակները նշելէ անդին երթալու կարելութեան. «Ամեակները միայն անցեալին նայելու առիթներ չեն, այլ ապագային նայելու՝ ապագայատեսիլ ու նպատակասլաց մօտեցումով։ Վայ այն անձին կամ կազմակերպութեան կամ կառոյցին, որ իր կեանքը կը չափէ արեւածագէն սկսելով մինչեւ արեւմար՝ սահմանափակ կերպով. հարկ է դիտել անկէ անդին։ Ես կը փորձեմ այս մօտեցումով դիտել անցնող 30 տարիները։ Սակայն, 30 տարիներու արժեւորումը կատարելու համար, պէտք է ճիշդ, համապարփակ եւ իրատես մօտեցումով արժեւորել մեր ներկան»։ Հայ կեանքը յուզող ներկայ իրադարձութիւններուն լայն տեղ տալով՝ Նորին Սուրբ Օծութիւնը ըսաւ. «Այսօր հայ կեանքը իր պատմութեան ճակատագրական մէկ հանգրուանին կը գտնուի։ Ես կ'ուզեմ հետեւեալ խիտ բառերով բնորոշել, բնութագրել մեր ներկայ կեանքը. Հայրենիքը կ'ընթանայ դէպի ինքնաքանդում եւ Սփիւռքը՝ դէպի ինքնամաշում. հարկ է առաջը առնել այս վտանգին՝ համահայկական ճիգով։ Զգացական պոռթկումներէ, անիրատես արժեւորումներէ հեռու պէտք է մնանք։ Մենք չենք կրնար մեր ապագան տեսնել, ճշդել ու ծրագրել պատահական ու պարագայական մօտեցումներով, կեցուածքներով, լոզունգներով, դատապարտումներով։ Մենք մեր ժողովուրդին ապագան կը կերտենք իրատես մօտեցումով՝ քննելով մեր ներկան եւ ճիշդ դիտելով մեր ապագան եւ ընթանալով այն ճամբէն, որ կը տանի մեր Հայրենիքին փրկութեան եւ ազգին բարօրութեան»։ Ապա, Հայրապետը վերանորոգումի անյետաձգելի հրամայականը շեշտելով՝ ըսաւ. «Ահաւասիկ, կապրինք մեր պատմութեան խաչմերուկին։ Այս կացութեան դիմաց, մենք կարիքը ունինք նոր դեկավարներու, նոր մօտեցումներու, նոր կեցուածքներու, որպէսզի դուրս գանք ներկայ ճահճացած վիճակէն։ Կրկնութիւններով մենք չենք կրնար յառաջ երթալ, մասնաւորաբար ներկայ ճարտարագիտական նորութիւններով եւ ամէնօրեայ փոփոխութիւններով լեցուն ժամանակներուն մէջ։ Չենք կրնար ինքնակեղծուիլ ու ինքնանպատակ ապրիլ։ Պէտք է բացուինք եւ տեսնենք, թէ ո՛ր կերթայ մեր ժողովուրդն ու Հայրենիքը։ Աշխարհագրական պայմանները մնայուն փոփոխութեան մէջ են. կեանքը՝ մնայուն եղաշրջումի մէջ։ Այս բոլորին դիմաց հարցում՝ ո՞ր ենք մենք։ Այսօր յոյժ կարիքը ունինք նոր արիւնի եւ նոր աւիշի։ Այս բոլորը պիտի գան մեր երիտասարդներէն։ Անոնք ներկայ աշխարհը կը ճանչնան։ Անոնց մօտեցումը այսօր բոլորովին տարբեր է. աւելի իրատես են ու աւելի գործնական։ Թոյլ չտանք, որ մեր երիտասարդները հեռանան մեր կեանքէն։ Մենք լայն տեղ պէտք է տանք երիտասարդութեան. պէտք է վստահինք մեր երիտասարդներուն, որովհետեւ անոնք պիտի կերտեն մեր ժողովուրդի ապագան։ Երբ նոյն աթոռներուն վրայ նո՛յն անձերը կը նստին՝ կաղապարուած նոյն

մտածումներով, աթոռն ալ կը մաշի, աթոռին վրայ նստողներն ալ կը մաշին»: Իր խօսքին մէջ Արամ Ա. Կաթողիկոս անդրադառնալով Հայաստանին եւ Սփիւռքին պարագած ներկայ իրավիճակին՝ յայտնեց. «Տարիներ առաջ ըսի, թէ Հայաստանը կը պարպուի. եւ Հայաստանը կը շարունակէ պարպուիլ. իսկ այսօր կըսեմ, թէ Հայաստանը կընթանայ դէպի ինքնաքանդում: Ինչպէ՞ս կարելի է այս ընթացքը կասեցնել: Ահաւասիկ Սփիւռքին դերը: Սփիւռքն ալ, իր կարգին, լաւ պայմաններու տակ չէ: Մենք մեր գաղութներուն մէջ տեսակ-տեսակ դժուարութիւններու, մարտահրաւերներու եւ տագնապներու դիմաց կը գտնուինք: Այսօր, աւելի քան երբեք, Սփիւռքի մէջ հայ ըլլալ կ'ենթադրէ ամէնօրեայ տագնապ ու մաքառում: Հայաստանի մէջ հայը կ'ապրի իր հայրենի հողին վրայ, կը շնչէ անոր օդը եւ կը խմէ անոր ջուրը, մինչ Սփիւռքի մէջ հայ ըլլալը դիրին չէ: Սփիւռքի հայը տասնամեակներ շարունակ ըլլալու եւ չըլլալու երկընտրանքին դիմաց էր, եւ ընտրեց հայ ըլլալ: Հայ մնալու համար մեր կեանքը վերածեցինք պայքարի: Այսօր Սփիւռքը, որեւէ ժամանակէ աւելի, ընելիք ունի, քան՝ ըսելիք: Ըսելիքներով մեր կեանքը չլեցնենք, այլ՝ ընելիքներով լեցնենք, հարստացնենք ու արժեւորենք: Ա՛յս կը պահանջուի մեր ժողովուրդէն եւ այս առումով Սփիւռքին դերը էական է: Հայաստանի փրկութեան ու վերականգնումին մէջ Սփիւռքին դերը ես կը նկատեմ առաջնահերթ: Այս պատճառով, մենք, որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, սկսանք Սփիւռքի վերակազմակերպումի ու վերակենսաւորումի գործընթացքին, քանի Հայաստանի հզօրացումը պայմանաւորուած է Սփիւռքի հզօրացումով: Ահաւասիկ մեր դիմաց կանգնող հսկայ մարտահրաւերը»: Իր հայրապետական օրհնութեան խօսքին մէջ Վեհափառ Կաթողիկոսը լուսարձակի տակ առաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համազգային առաքելութիւնը. «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը Անթիլիասի չորս պատերուն մէջ գործող, աղօթող ու մտածող կեդրոն մը չէ. Անթիլիասը մեր ժողովուրդին հաւաքական կեանքին մէջ մայր էջին վրայ, առանցքային դերակատարութիւն ունեցող ներկայութիւն է՝ իր խօսքով ու գործով: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը մեր ժողովուրդի հաւաքական պայքարին առաջնահերթ գիծին վրայ կը գտնուի. այսպէ՛ս եղած է անցեալին, այսպէ՛ս է այսօր եւ այսպէ՛ս պիտի մնայ ապագային: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, Սփիւռքի թէ Հայաստանի մէջ, մէկ նպատակ ունի՝ Հայրենիքի փրկութիւն, Հայրենիքի հզօրացում, Հայրենիքի վերականգնում ու վերածաղկում, որ պէտք է սկսի Սփիւռքով: Մեր գաղութները, ամէն տեղ, վերականգնումի գործնական ընթացքի մէջ են եւ այս գործընթացքին մէջ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դերը առանցքային է: Այս գիտակցութեամբ կը գործէ մեր Սուրբ Աթոռը՝ մեր թեմերուն աջակցութեամբ»: Երեկոն իր արարտին հասաւ «Կիլիկիա» օրհներգին երգեցողութեամբ: Հանդիսաւոր յայտագրէն ետք, Թորոնթոյի մէջ գործող համայնքային մարիմններու ներկայացուցիչները սեղանակից դարձան Վեհափառ Հայրապետին: Այս առիթով անոնք զեկուցեցին իրենց կատարած աշխատանքներուն մասին եւ ներկայացուցին յառաջիկայ ծրագիրները: Վեհափառ Հայրապետը, իր կարգին, դարձեալ շեշտեց մեր կառոյցները վերակենսաւորելու հրամայականը:

➤ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ դասախօսեց Թինտլյ (Tyndale) Համալսարանին Մէջ: «Նիկիոյ Հաւատոյ Հանգանակը 1700 Տարիներ Ետք Կը Պահէ Իր Կարեւորութիւնն Ու Այժմէականութիւնը» շեշտեց Արամ Ա. Կաթողիկոս Թինտլյ Համալսարանին մէջ: Կազմակերպութեամբ Թինտլյ համալսարանին եւ Գանատայի հայոց թեմի ազգային առաջնորդարանին, Նիկիոյ Տիեզերական Ա. Ժողովի (325) 1700-ամեակին առիթով տեղի ունեցաւ հրապարակային հանդիսութիւն մը յիշեալ համալսարանի սրահին մէջ: Հայ համայնքի ներկայացուցիչներու կողքին ներկայ էին համալսարանի դասախօսներն ու ուսանողները: Թինտլյ Համալսարանի նախագահ դոկտ. Մարճորի Քըռը ողջունեց Վեհափառ Հայրապետը եւ իր բացման խօսքին մէջ յիշեց առաջին հանդիպումը, որ ունեցած էր Նորին Սրբութեան հետ երկու տարի առաջ, երբ ան Թորոնթոյի Համալսարանին մէջ դասախօսութիւն մը տուած էր 2023-ի Յունիս: Համալսարանի բարձրագոյն ուսմանց տեսուչ դոկտ. Մայքըլ Քրաուս Նիկիոյ Տիեզերական Ժողովին նուիրուած երկխօսութեան եւ քննարկման հանդիսավարն էր: Ան իր խօսքին մէջ ըսաւ. «Նիկիոյ հանգանակի ոգիով, մեր ներկայութիւնը այսօր միջ-եկեղեցական ներկայութիւն է: Թինտլը Համալսարանը ինքնզինք կը նկատէ որպէս միջ-եկեղեցական մեծ համայնք, իր մէջ ներառելով աւելի քան 90 յարանուանութիւններ»: Ապա, համալսարանի շրջանաւարտ Տարօն սարկաւազ Հալլաճեան ներկայացուց Նորին Սրբութիւնը, մասնաւորաբար լուսարձակի տակ առնելով անոր միջ-եկեղեցական շարժումին մէջ ունեցած տասնամեակներու վաստակն ու կարեւոր դերակատարութիւնը: Վեհափառ Հայրապետին դասախօսութենէն առաջ տեղի ունեցաւ միջ-եկեղեցական աղօթք, որուն իրենց մասնակցութիւնը բերին դասախօսութեան ներկայ բոլոր օտար եկեղեցականները, իսկ շարականներու երգեցողութիւնը կատարեց Թորոնթոյի Սուրբ Աստուածածին եկեղեցոյ դպրաց դասը: Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս իր խօսքին մէջ յայտնելով Նիկիոյ Տիեզերական Ա. Ժողովին կարեւորութիւնը, շեշտեց, թէ այս ժողովը իր Հաւատոյ հանգանակով եւ եկեղեցոյ կանոնական կեանքին առնչուած որոշումներով յատուկ տեղ կը գրաւէ համաքրիստոնէական կեանքին մէջ, ինչպէս երէկ, նաեւ՝ այսօր: Ապա, անդրադառնալով յատկապէս Նիկիոյ հաւատոյ հանգանակին՝ Հայրապետը վերլուծեց անոր առանցքային կարեւորութիւնը՝ որպէս աղբիւր քրիստոնէական միութեան, քրիստոնէական հաւատքի ուղղափառութեան եւ եկեղեցոյ կանոնական հիմնական սկզբունքներուն: Իր դասախօսութեան երկրորդ բաժինին մէջ, Վեհափառ Հայրապետը շեշտեց վերաքննութեան ենթարկելու Նիկիոյ հաւատոյ հանգանակին հիմնական սկզբունքները՝ ներկայ ժամանակներու աստուածաբանական նոր մտածողութիւններու լոյսին տակ, մէկ կողմէ նշելով հասարակաց յայտարարները եւ միւս կողմէ՝ տարբերութիւնները, բնականաբար ընդգծելով Նիկիոյ հաւատոյ հանգանակին հիմնական ուղղութեան հաւատարիմ մնալու հրամայականը: Դասախօսութեան ւարտին քննարկում տեղի ունեցաւ համալսարանի դասախօսներուն կողմէ: Այս ծիրէն ներս, Հայրապետը պատասխանեց իրեն ուղղուած հարցումներուն, կատարեց անհրաժեշտ մեկնաբանութիւններ եւ տուաւ

լուսաբանություններ կարգ մը խնդիրներու շուրջ:

Յայտնենք, որ դասախօսութենէն առաջ հանդիպում մը կայացաւ դասախօսներուն հետ, որուն ընթացքին Նորին Սրբութիւնը իր տեսակետները յայտնեց համալսարանէն ներս դասաւանդուելիք հայ եկեղեցւոյ պատմութեան յատուկ դասընթացքի մը գծով:

- Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Հանդիպում Ունեցաւ Գանատայի Վարչապետ Մարք Գարնիի Հետ: Երեքշաբթի, 21 Հոկտեմբեր 2025-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ջերմօրէն ընդունուեցաւ Գանատայի վարչապետ Մարք Քարնիի կողմէ եւ շուրջ մէկ ժամ տեւողութեամբ հանդիպում կայացաւ իր ու վարչապետին միջեւ՝ մայրաքաղաք Օթաուայի մէջ: Հանդիպման ընթացքին տեղի ունեցած խօսակցութիւնը ընդգրկեց հետեւեալ մարզերը.- Լիբանան, Սուրիա, Միջին Արեւելք, Հայաստան, Պաղեստին ու Կազա: Յիշեալ մարզերուն առնչուած Վեհափառ Հայրապետը պարզեց իր մօտեցումներն ու մտահոգութիւնները՝ ընդառաջելով վարչապետի փափաքին: Նորին Սրբութեան կողմէ յատուկ կերպով արժարծուեցաւ Արցախի ու Պաքուի բանտերուն մէջ ապօրէն կերպով բանտարկուած Արցախի ղեկավարութեան հարցը: Վեհափառ Հայրապետը առաջարկեց Գանատայի վարչապետին, որ յատուկ աշխատանք տանի քաղաքական բանտարկեալներուն շուտափոյթ ազատ արձակման, Արցախի ժողովուրդի վերադարձի ու ինքնիշխանութեան իրաւունքի վերահաստատման եւ Արցախի կրօնական-մշակութային կոթողներու պահպանման գծով: Յիշեալ հանդիպումին Վեհափառ Հայրապետի կողքին ներկայ էին Գանատայի Հայոց Թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արք. Չարեան, Գանատայի հայ դատի գրասենեակի աստենապետ Խորէն Տիմիթեան, հայ դատի համահայկական յանձնախումբի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Ընդհանուր Ժողովի պատգամաւոր Ռաֆֆի Տօնապետեան:
- Հինգշաբթի 23 Հոկտ. 2025-ին, Արժ. Տէր Հայրը, ընկերակցութեամբ Հ.Օ.Մ.-ի Ռուբինա մասնաճիւղի ընկերուհիներուն, այցելեցին երէցներու հանգստեան տան հայկական բաժինը: Տէր Հայրը Ս. Հաղորդութիւն բաշխեց ծերունիներուն, իսկ Հ.Օ.Մ.-ի ընկերուհիները՝ կէսօրուան ճաշ:
- Չորեքշաբթի 24 Հոկտ.2025-ին, Տէր Հայրը ներկայ գտնուեցաւ Հ.Օ.Մ.-ի Ամենօրեայ Վրժ.ի աշակերտութեան կողմէ պատրաստուած Թարգմանչաց Վարդապետաց յիշատակութեան ձեռնարկին: Աւարտին, հայերէն լեզուի իմացութեան եւ գործածութեան մասին կարգ մը թելադրանքներ կատարելէ ետք, պահպանիչ աղօթքով փակումը կատարեց հանդիսութեան:
- Կիրակի 26 Հոկտ. 2025-ի երեկոյեան, Գերպ. Հայր Սուրբը ներկայ գտնուեցաւ Թորոնթոյի «Համահայկական Հիմնադրամի» միացեալ մարմնի կողմէ

կազմակերպուած հանգանակային երեկոյթ ճաշկերոյթին: Հայր Սուրբին կ'ընկերանար Հոգաբարձու Տիար Գրիգոր Արթինեան:

- Հինգշաբթի 6 Նոյ. 2025-ին, Եկեղեցոյս Հոգեւոր Հայրերը, ընկերակցութեամբ Թեմիս Ազգ. Վարչութեան անդամ Տիար Յարութ Գասապեանի, բարի ապաքինման մաղթանքով այցելեցին Թորոնթոյի Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ Հովիւ Գերյարգելի՛ Տէր Եղիա Օ. Վրդ. Քիրեճեանին:
- Շաբաթ 8 Նոյեմբեր 2025-ի երեկոյեան, Թորոնթոյի Սուրբ Աստուածածին Եկեղեցոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տէր Տաթև Ա. Քհնյ. Միքայէլեան, ընկերակցութեամբ եկեղեցոյս Հոգաբարձութեան ատենապետ՝ Բրշ. Կարօ Սրկ. Սարգիսեանի, հոգաբարձութեան ատենադպիր՝ Բրշ. Սարգիս Սրկ. Կիտանեանի, ինչպէս նաև Տարօն Սրկ. Հալլաճեանի ներկայ գտնուեցան Պատուելի Չոհրապ Սարգիսեանի Վերապատուելի ձեռնադրութեան եւ պաշտօնակոչութեան պաշտամունքին: Աւարտին, Արժանապատիւ Տէր Հայրը յանուն Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տէր Բարգէն Արք. Չարեանի, Եկեղեցոյս Հոգեւոր Տեսուչ՝ Գերպ. Տ. Գարեգին Օ. Վրդ. Շիրսմեանի, Հոգաբարձութեան եւ Սուրբ Աստուածածին Եկեղեցոյ ընտանիքին, շնորհաւորեց Վերապատուելի Չոհրապ Սարգիսեանի ձեռնադրութիւնը եւ նորանոր յաջողութիւններ մաղթեց ի Փառս Աստուծոյ եւ ի Պայծառութիւն Թորոնթոյի Հայ Աւետարանական Եկեղեցոյ:
- Կիրակի 9 Նոյ. 2025-ի երեկոյեան, Արժ. Տէր Տաթև Ա. Քհնյ. Միքայէլեան, ներկայ գտնուեցաւ Հայ Կեդրոնէն ներս Գ.Ե.Մ.-ի Վարչութեան կողմէ կազմակերպուած 2020 թուականի 44-օրեայ պատերազմին նահատակուած հերոսներուն յիշատակին կայացած մոմավառութեան եւ յուշ երեկոյին, ուր ներկայ էին թե՛ նահանգային եւ թե՛ կեդրոնական Երեսփոխաններ: Աւարտին, Տէր Հայրը սրտի խօսք եւ հոգոց աղօթք արտասանեց:
- Շաբաթ 15 Նոյ. 2025-ին, Եկեղեցոյս Հոգեւոր Տեսուչ Հայր Սուրբը, Հոգեւոր Հովիւ Տէր Հայրը եւ Ազգ. Երեսփոխաններ՝ Տիարք Յարութ Գասապեան, Գրիգոր Շիրիլեան, Նազար Չաթալեան, Հոգաբարձուներ՝ Սիլվանա Պապիկեան, Տարօն Տէրտէրեան եւ Արմենակ գալուստեան Քինկաթըն մեկնեցան Ազգ. Վարչութեան կազմակերպած Գանատայի Հայոց Թեմի տարեկան խորհրդակցական եւ զեկուցական միօրեայ համագումարին մասնակցելու:
- Կիրակի 16 նոյ. 2025-ին, յաւարտ Ս. Պատարագի, Հոգեհանգստեան կարգ կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-ի Թորոնթոյի Մասնաճիւղի Հ.Մ.Ը.Մ.-ական հին ու նոր ննջեցեալ անդամներու հոգիներուն ի հանգիստ:
- Շաբաթ, 22 Նոյեմբեր 2025-ին, Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբի նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ «Յիսուսի Փոքրիկները» ծրագրի

հերթական հաւաքը: Այս անգամ հանդիպումը նուիրուած էր Նոյին եւ ջրհեղեղի պատմութեան, գոր փոքրիկները մեծ ուշադրութեամբ եւ հետաքրքրութեամբ լսեցին, շնորհիւ Տիկին Հուրինա Պերպերեանի ջերմ ներկայացումին: Աւարտին, փոքրիկները գունաւորեցին Նոյի Տապանի պատկերը եւ հիւրասիրուեցան: Յաջորդ հանդիպումը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 6 Դեկտեմբեր 2025-ին, առաւօտեան ժամը 10:00-ին: Սիրով կը հրաւիրենք բոլոր փոքրիկները միանալու այս գեղեցիկ եւ ուսուցողական ժամանցին:

- Ուրբաթ 21 Նոյ. 2025-ին, Առաջնորդ Սրբազան Հայրը Թորոնթօ ժամանեց, երեկոյեան հանդիպում ունեցաւ Վեհափառ Հայրապետի դիմաւորութիւնը կազմակերպող յանձնախումբին հետ, գնահատեց տարուած կազմակերպ գործունէութիւնը:
- Շաբաթ 22 Նոյ. 2025-ին Սրբազան Հայրը ներկայ գտնուեցաւ եւ նախագահեց, ՀՕՄ-ի կազմակերպած «Եգիպտոսի, Սուտանի եւ Եթովպիոյ» գաղութներու տոհմիկ օրուան հանդիսութեան ու սրտի խօսք եւ սեղանի օրհնութիւն կատարեց:
- Կիրակի 23 Նոյեմբեր 2025-ին, Սուրբ եւ Անմահ Պատարագին նախագահեց Գերշ. Տ. Բարգէն Արք. Չարեան՝ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդը: Սուրբ Պատարագը մատուցեց եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Տաթեւ Աւագ Քհնյ. Միքայէլեան, իսկ յաւուր պատշաճի քարոզեց Առաջնորդ Սրբազան Հայրը՝ հաւատացեալ ժողովուրդին ուղղելով իր հոգեպարար խօսքերը: Պատարագի աւարտին, Հ.Օ.Մ.-ի խնդրանքով կատարուեցաւ հոգեհանգիստ՝ ի յիշատակ Եգիպտոսի, Եթովպիոյ եւ Սուտանի հայ համայնքներու ննջեցեալներուն, ինչպէս նաեւ մատաղի օրհնութիւն՝ ի խաղաղութիւն եւ լուսաւոր յաւերժութիւն անոնց հոգիներուն:
- Կիրակի 23 Նոյ. 2025-ին, Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ գտնուեցաւ Ս. եւ Անմահ Պատարագին եւ յաւուր պատշաճի քարոզեց: Աւարտին, մատաղի օրհնութիւն կատարեց եւ հոգեհանգստեան կարգին նախագահեց:
- Կիրակի 23 Նոյեմբեր 2025-ին, Սուրբ եւ Անմահ Պատարագէն առաջ, Գերշ. Տ. Բարգէն Արք. Չարեան, ընկերակցութեամբ եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գարեգին Ծ. Վրդ. Շիրտմեանի, Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչ՝ Հոգշ. Տ. Յակոբ Վրդ. Եագուպեանի, ինչպէս նաեւ եկեղեցւոյ Հոգաբարձութեան անդամներէն՝ Ատենապետ Տիար Կարօ Սրկ. Սարգիսեանի եւ Տոքթ. Գրիգոր Սրկ. Պէպէճեանի, այցելեց Սուրբ Աստուածածին Հայց. Առաք. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի դասարանները: Սրբազան Հայրը բարձր գնահատեց նուիրեալ ուսուցիչներու օրհնեալ ջանքերն ու անշահախնդիր նուիրումը՝ իրենց հետեւողական ծառայութեան եւ ստանձնած պատասխանատու ու յոյժ կարեւոր առաքելութեան համար: Իր այցելութեան ընթացքին, Առաջնորդ Սրբազան Հայրը հայրական սիրով զրուցեց աշակերտներուն հետ, խրախուսեց զանոնք սիրել եւ ամուր պահել իրենց հաւատքն ու մշակոյթը, եւ թելադրեց այդ հաւատքին ու սորված դասերուն լոյսին ներքեւ ապրիլ ու կերտել իրենց կեանքը:

- Կիրակի 23 Նոյ. 2025-ի յետմիջօրեի ժամը 2-ին, Հոգևոր Տեսուչ Հայր Սուրբը ներկայ գտնուեցաւ Հ.Օ.Մ.-ի կազմակերպած տոհմիկ օրուան դասախօսական եզրափակիչ հանդիսութեան: Աւարտին, օրհնութեան խօսքով եւ աղօթքով փակեց հանդիսութիւնը:
- Հինգշաբթի 27 Նոյ. 2025-ի առաւօտեան, եկեղեցոյս Հոգևոր Տեսուչ Հայր Սուրբը եւ Հոգևոր Հովիւ Տէր Հարը, Թորոնթոյի Հայ Աւետարանական եկեղեցի այցելեցին, շնորհաւորելու նորոգ ձեռնադրեալ Վեր. Չոհրապ Սարգիսեանը: Աւարտին, եկեղեցոյ մէջ հաւաքական աղօթք եւ յուշանուէր փոխանցուեցաւ Վերապատուելիին:
- Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տէր Բարգէն Ս. Արք. Չարեանի թելադրութեամբ, Կիրակի 30 Նոյեմբեր 2025-ին, յընթացս Ս. եւ Անմահ Պատարագին, Ս. Թադէոս եւ Ս. Բարթոլոմէոս Առաքելներու Տօնին առթիւ, Դպրաց Օրհնութիւն կատարուեցաւ Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաքելական եկեղեցոյ մէջ, ձեռամբ Հոգևոր Տեսուչ՝ Գերայ. Տէր Գարեգին Ծ. Վրդ. Շիրտմեանի, մասնակցութեամբ Հոգևոր Հովիւ՝ Արժ. Տէր Տաթեւ Ա. Քհնյ. Միքայէլեանի եւ Սարկաւագաց Դասուն:
- Կիրակի 30 Դեկտ. 2025-ին, Գերապատիւ Հայր Սուրբը եւ Արժ. Տէր Հայրը ներկայ գտնուեցան Թորոնթոյի Համազգայինի Գլխաւոր Մասնաճիւղի կազմակերպած Դանիէլ Վարուժանի եւ Ռուբէն Սեւակի յիշատակին «ԼՈՅՍ» մշակութային ձեռնարկին: Աւարտին, Հայր սուրբին արտասանած աղօթքով փակուեցաւ երեկոն:
- Հինգշաբթի, 4 Դեկտ. 2025ին, Հայ Կեդրոնը եւ Եկեղեցին ընդունեցին այցելութիւնը շրջանի Ոստիկանապետին եւ իր գործակիցներուն: Անոնք դիմաւորուեցան եկեղեցոյ Հոգևոր Տեսուչին, Հոգևոր Հովիւին եւ Կեդրոնի պատասխանատուներուն կողմէ: Այս առիթով, Եկեղեցոյ Հոգևոր Տեսուչ Հայր սուրբը բարի գալուստի խօսք արտասանեց հիւրերուն եւ իր ուրախութիւնը յայտնեց, որ Եկեղեցոյ Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբին միջոցաւ եւ եկեղեցոյ հաւատացեալ ժողովուրդին նուիրաբերած խաղալիքներուն շնորհիւ, կրկին հնարաւոր դարձաւ ոստիկանատան ճամբով ձեռք երկարել եւ ուրախութիւն պատճառել կարիքաւոր փոքրիկներուն:
- Շաբաթ, 6 Դեկտեմբեր 2025-ին, Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբի նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ «Յիսուսի Փոքրիկները» ծրագրի հերթական հաւաքը: Եկեղեցոյ գաւիթէն ներս հաւաքը սկսաւ փոքրիկներու մոմավառութեամբ ու աղօթքով: Ապա, տօնաձառին շողան լոյսին շուրջ, փոքրիկները լսեցին Բաբելոնի եւ Նոյի Տապանին պատմութիւնները ինչպէս նաեւ տօնաձառին աստղին, խաղալիքներուն եւ մտորին մասին: Պատմութեան ժամէն

Եւոք Յիսուսի Փոքրիկները եկեղեցի մտան եւ սորվեցան թէ եկեղեցին Աստուծոյ տունն է ու ծանօթացան Սուրբ Աւետարանին: Հաւաքը վերջ գտաւ ձեռային աշխատանքով ու հիւրասիրութեամբ: Յայտնենք, որ այս տարուան վերջին հանդիպումը տեղի պիտի ունենայ Շաբաթ 20 Դեկտեմբեր 2025-ի առաւօտեան ժամը 10:00-ին: Սիրով կը հրաւիրենք բոլոր փոքրիկները միանալու այս գեղեցիկ եւ ուսուցողական ժամանցին:

- Շաբաթ 6 Դեկտեմբեր 2025-ի երեկոյեան, ներկայութեամբ եկեղեցւոյ Հոգւոր Հայրերուն, Հոգաբարձութեան անդամներուն եւ հաւատացեալներու հոծ բազմութեան, Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան օրհնեալ տօներուն առթիւ, տեղի ունեցաւ եկեղեցւոյ «Մեղրիկ Բարիքեան» կրտսերաց դպրաց դասին Հոգւոր Համերգը, ղեկավարութեամբ վաստակաւոր խմբավար՝ Տիկ. Հիլտա Գանտահարեանի: Բացման խօսքով հանդէս եկաւ Քրիստոնէական Դաստիարակութեան յանձնախումբի անդամ Օրդ. Ռիթա Խէչօ, որ իր խօսքին մէջ ըսաւ. «Եկեղեցւոյ կրտսերաց դպրաց դասը այսօր մեզի ցուրտ բայց սքանչելի գիշերը պիտի յիշեցնեն եւ հրեշտակներու խումբին միանալով, իրենց հետ փառք պիտի երգեն Աստուծոյ եւ երկրին խաղաղութիւն ցանկան»: Կրտսերաց դպրաց դասը իրենց մեներգներով ու խմբերգներով, Սուրբ Ծննդեան սիրելի երգերու սքանչելի ներկայացումով, ջերմացուցին բոլոր ներկաներուն սրտերը: Աւարտին, եկեղեցւոյ Հոգւոր Տեսուչ Գերպ. Տ. Գարեգին Ծ. Վրդ. Շիրտմեան օրհնութեան եւ եզրափակիչ խօսքին մէջ ըսաւ. «Գերազանց ձեր երգեցողութիւնը մեզի այսօր տարաւ դէպի Բերթեհեմ. եւ չեմ ակնարկեր Երուսաղէմ շրջանին մէջ գտնուող քաղաքին՝ այլ այն հոգւոր Բերթեհեմին, ուր Աստուած միշտ ներկայ է: Ձեր երգով, մեր սիրտերը դարձեալ փնտռեցին զԱստուած, ուզեցին աւելի սիրել զԱյն, գտնել ու երկրպագել Անոր»: Հայր Սուրբը շեշտեց նաեւ, որ մարդու կեանքին մէջ Աստուծոյ ներկայութիւնը պէտք է երգի նման միշտ հնչէ եւ լուսաւորէ: Ապա, ներկայ բոլոր փոքրիկները մեծ ուրախութեամբ դիմաւորեցին Կաղանդ Պապան, որ եկաւ շալակն իր ուսին, մեծ խանդավառութիւն ստեղծեց ու բոլոր փոքրիկներուն նուէրներ բաժնեց: Այնուհետեւ, տեղի ունեցաւ մտորի ու ծառի լուսաւորումը՝ ձեռամբ «Լարագ» ճաշարանի սեփականատէր Տէր եւ Տիկ. Տիգրան ու Անի Թորոսեաններու եւ իրենց զուակներուն: Հանդիսութեան իրենց գեղեցիկ նուագներով մասնակցութիւն բերին Հ.Մ.Ը.Մ.-ի փողերախումբի անդամները, եւ շաքանակ պատրաստող ու բաժնող եռանդուն օրհնեալ եկեղեցւոյ կամաւորները: Ապա, եկեղեցւոյ Յովնանեան սրահին մէջ, Տիկ. Արփի Սալիպեան տարեկան տօնավաճառին պաշտօնական բացումը կատարեց, ուր ներկաները տօնական մթնոլորտի մը մէջ, առիթ ունեցան ձեռք ձգել ձեռագործներ, յուշանուէրներ, հայկական խմիչքներ, տարագներ եւ համեղ ուտելիքներ:
- Հինգշաբթի 11 Դեկտ. 2025-ին, Գերպտ. Հայր Սուրբը, Արժ. Տէր Հայրը, հոգաբարձուներ Սիլվանա Պապիկեան եւ Գարոլ Խանամիրեան, մասնակցեցան

Մեղրիկ Բարիքեան դպրաց դասի կադանդի ձեռնարկին, «Լարագ» ճաշարանէն ներս:

- Ուրբաթ 12 Դեկտ. 2025-ին, Գերպտ. Հայր Սուրբը եւ Արժ. Տէր Հայրը ներկայ գտնուեցան Թորոնթոյի Հ.Մ.Ը.Մ.-ի մասնաճիւղի կադանդի խրախճանքին: Հայր Սուրբը սեղանի օրհնութիւն կատարեց:
- Երեքշաբթի 16 եւ Չորեքշաբթի 17 Դեկտ. 2025-ի առաւօտուն, Հ.Օ.Մ.-ի Ամենօրեայ Վրժ.-ի աշակերտութիւնը, առաջնորդութեամբ դպրոցի տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին, եկեղեցի յաճախեցին Ս. Ծննդեան նախօրեակին Ս. Հաղորդութիւն ստանալու: Աշակերտութիւնը դիմատրուեցաւ եկեղեցւոյ Հոգեւորականներու կողմէ: Ս. Հաղորդութեան մասին կարճ բացատրութիւն տրուելէ ետք, անոնք երկիւղածութեամբ հաղորդուեցան եւ մեկնեցան իրենց առօրեային:
- Չորեքշաբթի 17 Դեկտեմբեր 2025-ին, Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբի կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ այս տարուան վերջին երիտասարդական հաւաքը եւ Սուրբ Գիրքի սերտողութիւնը: Սերտողութիւնը վարեց Եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գերպ. Տ. Գարեգին Ծ. Վրդ. Շիրտմեան, որ ներկայացուց Մարկոս Աւետարանի 4-րդ գլուխը: Սերտողութեան աւարտին, հայր սուրբը սիրով պատասխանեց ներկաներու հարցումներուն, եւ հետաքրքրական ու կառուցողական մտքերու փոխանակումով ուսուցողական բաժինը իր աւարտին հասաւ: Սերտողութենէն ետք, երիտասարդները համախմբուեցան ջերմ ու եղբայրական ընկերային մթնոլորտի մէջ՝ վայելելու համատեղ սիրոյ ճաշը: Երեկոն շարունակուեցաւ հաճելի խաղերով, խորհրդանշական նուէրներով եւ տարուան վերջին բարեմաղթանքներով, ուրախութեամբ ամփոփելով հանդիպումը:
- Շաբաթ 12 Դեկտեմբեր 2025-ին, Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբի նախաձեռնութեամբ, տեղի ունեցաւ «Յիսուսի Փոքրիկները» ծրագրի տարուան վերջին հաւաքը: Եկեղեցւոյ սրահին մէջ, Տիկին Հուրինա Պերպերեանին շուրջ համախմբուած, փոքրիկները խանդավառութեամբ լսեցին Յիսուսի Սուրբ Ծննդեան սքանչելի պատմութիւնը: Ձեռնարկի աւարտին, եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գերպ. Տ. Գարեգին Ծ. Վրդ. Շիրտմեան, իր հայրական խօսքով ողջունեց ներկայ ծնողներն ու անոնց զաւակները: Ան յիշեցուց Տէր Յիսուս Քրիստոսի ուսուցումը, ըստ որուն Աստուծոյ Արքայութիւնը կը նմանցուի հատիկի մը, որ կը ծլի եւ կը մեծնայ ոչ թէ մարդկային ճիգերով, այլ Աստուծոյ կամքով ու շնորհքով: Այնուհետեւ ան իր օրհնութիւններն ու բարեմաղթութիւնները փոխանցեց բոլորին՝ գալիք Նոր Տարուան եւ Սուրբ Ծննդեան տօնին առիթով: Աւարտին, Կադանդ Պապան իր ներկայութեամբ մեծ ուրախութիւն եւ խանդավառութիւն ստեղծեց փոքրիկներուն մէջ: Երգերով, պարերով, նուէրներով եւ հիւրասիրութեամբ, ձեռնարկը ջերմ ու ուրախ մթնոլորտի մէջ հասաւ իր գեղեցիկ աւարտին:

- Հինգշաբթի 11 եւ Երեքշաբթի 23 Դեկտ. 2025-ին, Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Ջարեհ Ազնաւորեան եւ Մեղրիկ Բարիքեան կրտսերաց դպրաց դասերու անդամները, առաջնորդութեամբ Եկեղեցւոյ Հոգեւորականներուն, Նոր Տարուան առթիւ հիւրընկալուեցան «Լարագ» ճաշարանի սեփականատէր Տէր եւ Տիկ. Տիգրան-Անի Թորոսեաններու եւ Տիկ. Լենա Ատուրեանի կողմէ: Երեկոյին ներկայ էին Եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ Հոգ. Տէր Գարեգին Ծ. Վրդ. Շիրտմեան, Հոգեւոր Հովիւ Արժ. Տէր Տաթև Ա. Քինյ. Միքայէլեան եւ Հոգաբարձու Միլվանա Պապիկեան, Գարու Խանամիրեան եւ Բրշ. Սարգիս Սրկ. Կիտանեան: Ներկաները ուրախ մթնոլորտի մէջ խաղերով եւ երգերով դիմաւորեցին «Կաղանդ Պապուկը» որ յատուկէն բոլորին նուէրներ բաժնեց, ապա լսեցին Գերպտ. Հայր Սուրբին սրտի խօսքը: Աւարտին, շնորհակալութիւն յայտնեցին աւանդութիւն դարձած մտերմիկ հրաւերին, որ ամէն տարի ԼԱՐԱԶ ճաշարանի տնօրէնութիւնը կը կատարէ, որպէս գնահատանք Եկեղեցւոյ ծառայողներուն: Ջարեհ Ազնաւորեան Դպրաց դասի վարչութիւնը գնահատեց Բրշ. Գեորգ Սրկ.Ալաճաճեանը, որպէս տարուայ պարտաճանաչ անդամ:
- Կիրակի 21 Դեկտ. 2025-ին, Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտները «Ամանորեայ եւ Ս. Ծննդեան» զոյգ տօները ցնծութեամբ տօնեցին: Աւարտին, Կաղանդ պապուկի գալուստով, փոքրիկները երգեցին եւ արտասանեցին, իսկ Կաղանդ պապուկը գնահատեց նուէրներ բաժնելով ուրախացուց զիրենք: Ապա, Եկեղեցւոյ Հոգեւոր Արժ. Տէր Տաթև Ա. Քինյ. յանուն Գերշ. Առաջնորդ Սրբազան Հօր, Գերպտ. Հայր Սուրբին եւ Հոգաբարձութեան շնորհաւորեց բոլորին Ամանորն ու Ս. Ծննդեան տօները: Տէր Հայրը, յանուն Եկեղեցւոյ մեծ ընտանիքին, շնորհակալութիւն յայտնեց դպրոցի տեսչութեան ու ուսուցչական կազմին, որոնք ամբողջ տարին կամաւորաբար նուիրուած էին քրիստոնէական գիտելիքներ եւ դաստիարակութիւն ջամբելով աշակերտութեան:
- Հինգշաբթի 25 Դեկտեմբեր 2025-ի կէսօրուան ժամը 12:00-ին, Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ հոգեւոր հայրերը՝ Գերպ. Տ. Գարեգին Ծ. Վրդ. Շիրտմեան եւ Արժ. Տ. Տաթև Աւագ Քինյ. Միքայէլեան, ընկերակցութեամբ Եկեղեցւոյ սարկաւազներէն Յակոբ Սրկ. Կիրակոսեանի, ներկայ գտնուեցան Հայ Կաթողիկէ համայնքի Սուրբ Ծննդեան Պատարագին, որ տեղի ունեցաւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ: Սուրբ Պատարագին նախագահեց Գերյարգելի Տ. Եղիա Ծ. Վրդ. Գիրէջեան, իսկ պատարագեց եւ յաւուր պատշաճի քարոզեց Տ. Հայկ Քինյ. Շահինեան: Պատարագի աւարտին, հոգեւոր հայրերը առիթ ունեցան զրուցելու իրար հետ եւ Սուրբ Ծննդեան տօնական օրերու առիթով իրենց բարեմաղթութիւնները փոխանցեցին, խաղաղութիւն եւ բարիք մաղթելով աշխարհասփիւռ հայ ժողովուրդին եւ մասնաւորաբար Թորոնթոյի գաղութին:
- Հինգշաբթի 25 Դեկտեմբեր 2025-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Սուրբ Աստուածածին Հայ Առաքելական Եկեղեցւոյ մէջ սուրբ եւ անմահ պատարագով հանդիսաւորապէս նշուեցաւ առաջին սարկաւազին եւ նահատակին՝ Սուրբ Ստեփանոսի տօնը:

Պատարագը մատուցեց եւ տօնին առիթով պատգամ փոխանցեց Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդական Փոխանորդ եւ Ուսումնագիտական Բաժնի Պատասխանատու՝ Գերայ. Տ. Գեղարդ Ծ. Վրդ. Գիւսպէկեան: Քարոզէն առաջ, եկեղեցւոյ հոգեւոր հայրերը բարձրացան սուրբ խորան, ուր կատարուեցաւ սարկաւազաց օրհնութեան կարգը: Այնուհետեւ, պատարագիչ Հայր Սուրբը իր քարոզին մէջ անդրադարձաւ Սուրբ Ստեփանոսի անսասան հաւատքին եւ նուիրումին՝ շեշտելով հաւատքը կեանքով վկայելու անհրաժեշտութեան մասին: Սուրբ Պատարագէն ետք, եկեղեցւոյ Հոգեւոր Հայրերուն ու Հոգաբարձութեան կազմակերպութեամբ եւ Տիկնանց Միութեան ջանքերով, Սարկաւազները համախմբուեցան սիրոյ սեղանի մը շուրջ:

- Կիրակի 28 Դեկտեմբերին 2025-ին, Սուրբ Աստուածածին Հայց. Առաքելական եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ ամավերջի սուրբ եւ անմահ պատարագ: Քրիստոնէական Դաստիարակականութեան Յանձնախումբին մտադրացումով՝ սուրբ պատարագի երգեցողութիւնը կատարեցին ներկայ հաւատացեալները՝ առաջնորդութեամբ եկեղեցւոյ «Ազնաւորեան» դպրաց դասի դպրապետուհի Տիկ. Անոյշ Գալստեանի եւ դպրաց դասի անդամներուն, որոնք նստած էին հաւատացեալներուն հետ: Իր քարոզին մէջ, եկեղեցւոյս Հոգեւոր Տեսուչ պատարագիչ Հայր Սուրբ՝ Գերայ. Տ. Գարեգին Ծ. Վրդ. Շիրտմեան, նշեց «այսօրուան սուրբ եւ անմահ պատարագը տարբեր էր. տարբեր, ոչ թէ իր աստուածաբանութեամբ, իմաստով, խորհուրդով կամ նպատակով, այլ ջերմեռանդ ձեր մասնակցութեամբ»: Հայր Սուրբը իր քարոզին մէջ ընդգծեց, թէ հաւատացեալները հանդիսատեսներ չեն, այլ պատարագին մասնակիցներ եւ խօսեցաւ եկեղեցական արարողութիւններուն մասնակցելու կարեւորութեան մասին: Պատարագի արարտին, Սուրբ Պօղոս եւ Սուրբ Պետրոս առաքեալներուն տօնին առթիւ անդաստան կատարուեցաւ, Պետրոս առաքեալի սուրբ մասունքով:
- Երկուշաբթի 29 Դեկտեմբեր 2025-ի երեկոյեան ժամը 8:00-ին, Սուրբ Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբի կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ Սուրբ Ծննդեան օրհներգներու հաւաքական երգեցողութեան հոգեպարար երեկոյ մը: Հաւատաւոր ժողովուրդը, աղօթական եւ հոգեւոր մթնոլորտի մէջ, միաբերան երգեց աշխարհի Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի սուրբ ծնունդը աւետող եւ փառաբանող՝ հայերէն ու օտար շարականներ եւ հոգեւոր երգեր, իր աղօթքը երգի վերածելով: Երեկոն բացուեցաւ Տարօն Սրկ. Տէրտերեանի բացման խօսքով, որուն ընթացքին ան ընդգծեց, թէ այս հոգեւոր համախմբումին նպատակն է կտրուիլ աշխարհիկ աղմուկէն եւ երգով ու աղօթքով փոխադրուիլ դէպի Բեթղէհէմ՝ մտնելու այն սուրբ մտուրը, ուր Տէրը կը հանգչի, եւ հաւատքով երկրպագել ու խոնարհիլ Անոր առջեւ: Տարօն Սրկ. շարունակեց առաջնորդել ձեռնարկի ամբողջ ընթացքը: Երգեհոնին նուագակցութիւնը կատարեց Տիկ. Թալին Գըլըպոզեան, իսկ երգերուն միջեւ աւետարանական հատուածներ արտասանեց Տիկ. Սարին Փօլատեանը,

հաղորդելով Քրիստոսի ծնունդը պատմող աւետարանական հատուածներ: Ձեռնարկը իր աւարտին հասաւ հաւատացեալներու բարձր տրամադրութեամբ: Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Տաթեւ Ա. Քինյ. Միքայէլեան փակման խօսքին մէջ ըսաւ. «Ամէն ինչ կատարուեցաւ հրեշտակին ըսածին պէս» (Ղկ 2:17): Տէր Հայրը գնահատեց օրուան հանդիսութիւնը կազմակերպող Քրիստոնէական Դաստիարակութեան յանձնախումբը, որ Հայր Սուրբին գլխաւորութեամբ լաւագոյն կեպով մատուցեց երեկոյի խորհուրդը: Ան ըսաւ. «Բոլորս փոխադրուեցանք այն Մտորը, ուր ծնաւ աշխարհի Փրկիչը», ապա, «Պահպանիչ» աղօթք արտասանեց, որմէ ետք Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբի անդամները հիւրասիրութեամբ պատուեցին ներկաները:

- Երկուշաբթի 5 Յունուար 2026-ին, Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ մէջ երեկոյեան ժամը 4:00-ին, սկիզբ առաւ Սուրբ Ծննդեան եւ Յայտնութեան տօնին նախորդող Ճրագալոյցի ժամերգութիւնները, եկեղեցւոյ հոգեւորականներուն առաջնորդութեամբ, սարկաւազներուն մասնակցութեամբ եւ հաւատացեալներու ներկայութեամբ: Ժամերգութիւններու ընթացքին, հնչեցին սաղմոսներն ու երգուեցան մեր եկեղեցւոյ հնադարեան գոհար շարականները: Աւարտին, կիրակնօրեայ դպրոցի աշակերտները ընթերցեցին օրուան խորհուրդը ամփոփող աւետարանական հատուածները, փոխանցելով Քրիստոսի Ծննդեան լոյսն ու աւետիսը հաւատացեալ ժողովուրդին:
- Երեքշաբթի 6 Յունուար 2026-ին, Թորոնթոյի Սուրբ Աստուածածին Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ մէջ, ժամերգութեամբ եւ հանդիսաւոր Սուրբ եւ Անմահ Պատարագով նշուեցաւ մեր Տիրոջ եւ Փրկչին Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնը: Սուրբ Պատարագը մատուցեց եւ տօնին առիթով քարոզեց Գանաստայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բարգէն Սրբազան Արքեպիսկոպոս Չարեան: Սուրբ խորանին սպասարկեցին եկեղեցւոյ հոգեւոր Հայրերը, սարկաւազներն ու դպիրները, իսկ պատարագի երգեցողութիւնը կատարեց «Ձարեհ Ազնաւորեան» Դպրաց Դասը՝ ղեկավարութեամբ տիկին Անուշ Գալուստեանի: Սրբազան արարողութիւնը տեղի ունեցաւ հաւատացեալներու խումբն մասնակցութեամբ: Սուրբ Պատարագի աւարտին կատարուեցաւ սրբալոյս միւռոնով Ջրօրհնէքի արարողութիւնը՝ ի յիշատակ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Սուրբ Մկրտութեան: Ջրօրհնէքի կնքահայրներն էին՝ Յովհաննէս Պէպէճեան, Շանթ Թէլեան եւ Երեմիա Գեորգեան: Սուրբ եւ Անմահ Պատարագին ներկայ գտնուեցան Ազգային Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Վարիչ՝ Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Եագուպեան, Ազգային Վարչութեան Ատենապետ՝ տիկին Ծովիկ Թերգեան, ինչպէս նաեւ եկեղեցւոյ Ազգային Վարչութեան ներկայացուցիչներ եւ երեսփոխաններ: Ներկայ էին նաեւ Հայ Կաթողիկէ Համայնքի հոգեւոր հովիւ՝ Տ. Հայկ Քահանայ Շահինեան եւ քաղաքական դէմքեր՝ նախարար Սթիվըն Լէչչէ, երեսփոխաններ Արիս Պապիկեան եւ Ճոնաթըն Յաօ: Պատարագի աւարտին, անոնք իրենց սրտի խօսքը փոխանցեցին եւ շնորհաւորեցին Հայ Համայնքը Սուրբ Ծննդեան

և Աստուածայայտութեան տօնին առիթով: Թող Սուրբ Ծննդեան և Աստուածայայտութեան աստուածային լոյսը միշտ լուսաւորէ մեր հոգիները, զօրացնէ մեր հաւատքը և առաջնորդէ մեր համայնքային ու ազգային կեանքը՝ դէպի սիրոյ, խաղաղութեան և հոգեւոր նորոգութեան ուղին:

- Երեքշաբթի 6 Յունուար 2026-ին, Սուրբ և Անմահ Պատարագէն ետք, Թեմիս Առաջնորդ Գերշ. Տ. Բարգէն Ս. Արք. Չարեանի նախագահութեամբ և կազմակերպութեամբ՝ Թորոնթոյի Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ, Հայ Կեդրոնէն ներս տեղի ունեցաւ Սուրբ Ծննդեան ճաշկերոյթը: Ձեռնարկը սկիզբ առաւ ասանդական տնօրհներթի արարողութեամբ. օրհնուեցան հացը, աղը և ջուրը, և բաժնուեցան ներկաներուն: Բացման և բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ եկեղեցւոյ Ատենապետ Տիար Կարօ Սրկ. Սարգիսեան, որ շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն իրենց ներկայութեան և եկեղեցական կեանքին նկատմամբ ցուցաբերած նուիրումին համար: Ձեռնարկի ընթացքին, Հոգաբարձութեան անդամ Տիար Սարգիս Սրկ. Կիտանեան ներկայացուց այս տարուան եկեղեցւոյ հանգանակութեան ձեռնարկները՝ ի նպաստ Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ շէնքի նորոգութեան և անհրաժեշտ բարենորոգումներուն: Ապա, Սրբազան Հօր ձեռամբ յանձնուեցան հետեւեալ հինգ կրթաթոշակները. Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ կրթաթոշակ՝ Վարազ Մեսրոպեան: Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ «Բուշիկեան» կրթաթոշակ՝ Անուշ Արթունեան: Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ «Մեդրիկ Բարիքեան» կրթաթոշակ՝ Արմէն Պետրոսեան: Ազնաւորեան դպրաց դասի կրթաթոշակ՝ Փաթիլ Սիմոնեան և Մարի Լիլիթ Նաճարեան: Գեղարուեստական յայտագիրով ճաշկերոյթը ջերմ մթնոլորտով ճոխացուց երգիչ Լեւոն Գարակիւլեան, իսկ երգեհոնին վրայ նուագակցեցաւ Արթուր Թամազեան:
- «Հոգեւոր Կեանքի Վերանորոգման Տարի» Հայրապետական Հռչակագրի Ընթերցում: Կիրակի 11 Յունուար 2026-ին, Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Բարգէն Ս. Արք. Չարեանի թելադրութեամբ, թեմի եկեղեցիներէն ներս կարդացուեցաւ Վեհափառ Հայրապետի՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի 2026 տարուան հռչակագիրը, նուիրուած՝ «Հոգեւոր Կեանքի Վերանորոգում»ին: Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցիէն ներս, Սուրբ և Անմահ Պատարագը մատուցեց և ընթացս պատարագին հռչակագիրը ընթերցեց եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գերայ. Տ. Գարեգին Ծ. Վրդ. Շիրսումեան: Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս իր հռչակագիրին մէջ կը նշէ որ «Պարագայական որոշում մը չէր այս տարին հոգեւոր կեանքի վերանորոգման նուիրելը, այլ հրամայական անհրաժեշտութիւն էր՝ ի տես հայ կեանքէն ներս հոգեւոր կեանքի առանցքային կարեւորութեան նահանջին»:
- Կիրակի 18 Յունուար 2026-ին, Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ գտնուեցաւ եկեղեցի և մասնակից դարձաւ Ս. և Անմահ Պատարագին: Սրբազան Հօր կ'ընկերակցէր Հոգշ. Տէր Յակոբ Վրդ. Եագուպեան: Պատարագը մատուցեց և յաւուր

պատշաճի քարոզեց Արժ. Տէր Տաթև Ա. Քահանան: Պատարագէն ետք, Սրբազան Հայրը դահլիճէն ներս յաջորդաբար ընդունեց, առաջին հերթին՝ Թորոնթոյի Ջէյթունցիներու համախմբումի յանձնախումբի պատասխանատուները, որոնք եկած էին Առաջնորդ Սրբազան Հօր եւ եկեղեցւոյս Հոգեւոր դասը նոր տարուայ եւ Ս. Ծննդեան տօներուն առթիւ շնորհաւորելու եւ համախմբումի կողմէ պատրաստուած պատի օրացոյց նուիրելու: Ապա, ընդունեց Հայ Կեդրոնի պատկան մարմնի եւ Ամենօրեայ վարժարանի պատասխանատուները, որոնք եկած էին Առաջնորդ Սրբազան Հօր աւետելու թէ Թորոնթոյի հայ համայնքին դպրոցական կարիքները բաւարարելու միտով կը ծրագրեն եւ լծուած են, նոր դպրոցի մը գնման աշխատանքին: Սրբազան Հայրը իր Հայրական Օրհնութիւնն ու գնահատանքը փոխանցեց եւ պատրաստակամութիւն յայտնեց նպաստելու իրմէ պահանջուած օժանդակութեան: Երեկոյեան, Սրբազան Հայրը ներկայ գտնուեցաւ եւ նախագահեց Հոգեւոյս Մեղրիկ Եպս. Բարիքեանի վախճանման 5-րդ տարելիցին առթիւ կայացած Յուշ-երեկոյին: Աւարտին, իր հայրական պատգամով եւ պահպանիչ աղօթքով փակումը կատարեց հանդիսութեան:

- Երեքշաբթի 20 Յունուար 2026-ի կէսօրին, եկեղեցւոյ Հոգեւորականաց դասը ներկայ գտնուեցաւ Հայ Կեդրոնի երէցներու համախմբումի կազմակերպած նոր տարուան եւ Ս. Ծննդեան խրախճանքի: Հայր Սուրբը կատարեց սեղանի օրհնութիւնը եւ փոխանցեց իր սրտի խօսքը:
- Հինգշաբթի 22 Յունուար 2026-ի առաւօտուն, Տէր Տաթև ներկայ գտնուեցաւ Հ.Օ.Մ.-ի Ոսկեայ Օղակ երէց ընկերուիիներու հաւաքին, եւ պատգամեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Հայրապետին կողմէ «Հոգեւոր Կեանքի Վերանորոգման» Տարուայ Հռչակագիրին շուրջ:
- Ուրբաթ 23 Յունուար 2026-ի երեկոյեան, Ս. Աստուածածին եկեղեցի այցելեցին Թորոնթոյի Հայ Կեդրոնի Պատանեկան Միութեան անդամները, պատասխանատուներու առաջնորդութեամբ: Պատանիները եկեղեցւոյ մուտքին դիմաւորուեցան Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տէր Տաթև Ա. Քհնյ. Միքայէլեանի կողմէ: Տէր Հայրը ներկաներուն բացատրեց Հայ Առաքելական եկեղեցւոյ ազգային եւ հոգեւոր դիմագիծն ու ծառայութիւնը, նաեւ թելադրեց Պատանիներուն, որ Սփիւռքի մէջ անհրաժեշտ է տէր կանգնիլ չորս նուիրական գործօններու, որոնք հայակերտումի եւ հայապահպանուի կարեւոր հիմնարկներ են. ա- Հայ Դպրոցը, բ- Հայ Եկեղեցին, գ- Հայ Ակումբը եւ մանաւանդ շեշտեց դ- Հայ Ընտանիքը: Պատանիները ուխտեցին տէր կանգնիլ եւ պաշտպանել զանոնք ի գին ամեն զոհողութեան:
- Չորեքշաբթի, 28 Յունուար 2026-ի առաւօտեան ժամը 6:00-ին, Առաջաւորաց պահեցողութեան եւ Սուրբ Մարգիսի եօթեայ ծոմապահութեան աւարտին, Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ խաչահանգիստ (ջրօրհնէք) եւ Սուրբ Հաղորդութեան մատակարարում կատարուեցաւ: Յաւարտ արարողութեան,

ուխտաւորները իրենց պահեցողութիւնը բացին եկեղեցւոյ տիկնանց միութեան կողմէ պատրաստուած նախաճաշի հիւրասիրութեամբ:

- Հինգշաբթի 29 Յունուար 2026-ի երեկոյեան, եկեղեցւոյս Հոգեւոր Հայրերը եւ Հոգաբարձական կազմը, վերջին յարգանքի այցելութիւն կատարեցին նորոգ հանգուցեալ Թորոնթոյի Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Ժողովրդապետ՝ Տէր Եղիա Ծ. Վրդ. Քիրէճեանի վախճանման առթիւ: Պատուիրակութիւնը մասնակից եղաւ «Խաղաղական» ժամերգութեան եւ ցաւակցութիւն յայտնեց Կաթողիկէ Թեմի Առաջնորդ Գերապայծառ՝ Տէր Միքայէլ Եպս. Մուրատեանի, Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տէր Հայկ Քինյ. Շահինեանին:
- Շաբաթ 31 Յունուար 2026-ին, Գերապատիւ Հայր Սուրբը ներկայ գտնուեցաւ Թորոնթոյի Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հոգեւոյս Տէր Եղիա Ծ. Վրդ. Քիրէճեանի թաղման արարողութեան: Արարողութեան ներկայ էր նաեւ Թեմիս Առաջնորդական փոխանորդ Գերապատիւ՝ Տէր Գեղարդ Ծ. Վրդ. Քիւսպէկեան, որպէս Առաջնորդ Սրբազան Հօր ներկայացուցիչ:
- Շաբաթ 7 Փետրուար 2026-ի առաւօտեան, Առաջնորդ Սրբազան Հայրը Եկեղեցի այցելեց: Սրբազան Հօր կ'ընկերանար Հոգշ. Տէր Յակոբ Վրդ. Եզուպեան: Հայր Սուրբը նախօրոք ծրագրուած միօրեայ ճամբար կատարեց կիրակնօրեայ դպրոցի աշակերտութեան: Ձեռնարկի մանրամասնութիւնները տեսնել դիմատետրին մէջ: Նոյն օրը կ'եսօրին, Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Հոգեւոր Տեսուչին եւ Հովիւին, բարի ապաքինման հայցով այցելեցին Տիար Յակոբ Ճամպազեանի բնակարանը:
- Կիրակի 8 Փետրուար 2026-ին, Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Բարգէն Ս. Արք. Չարեան, Սուրբ եւ Անմահ Պատարագին նախագահեց եւ յաւուր պատշաճի քարոզեց, իսկ պատարագի աւարտին Մեծի Տանն Կիլիկիոյ երանաշնորհ կաթողիկոսներու, միաբան հայրերու եւ Գանատայի Հայոց Թեմէն ներս ծառայած ննջեցեալ հոգեւորականներուն հոգեհանգստեան արարողութեան ներկայ գտնուեցաւ Թորոնթոյի Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ մէջ: Օրուան Սուրբ Պատարագը մատոյց Եկեղեցւոյ Տեսուչ՝ Գերպ. Տէր Գարեգին Ծ. Վրդ. Շիրտմեան:
- Կիրակի 8 Փետր.2026-ին Գերպտ. Տեսուչ Հայր Սուրբը Մոնթրէալ մեկնեցաւ Ս. Ղևորդեանց Քահայայից Տօնին ներկայ գտնուելու: Արժ. Տէր Հայրը չկրցաւ նոյն տօնակատարութեան ներկայ գտնուիլ, յուղարկաւորութեան մը արարողութիւնը կատարելու պատճառաւ: Հայր Սուրբը Չորեքշաբթի յետմիջօրէին վերադարձաւ Թորոնթօ:
- Չորեքշաբթի 11 Փետր.2026-ի կ'եսօրին, Արժ.Տէր Հայրը ներկայ գտնուեցաւ Հ.Օ.Մ.-ի Ամենօրեայ վարժարանի աշակերտութեան կողմէ կատարուած Վարդանանք

հերոսամարտի ձեռնարկին: Աւարտին, պատգամ եւ աղօթքով փակումը կատարեց հանդիսութեան:

- Հինգշաբթի 12 Փետր.2026-ի երեկոյեան, եկեղեցիէն ներս Միջ-յարանուանական Սրբոց Վարդանանց հանդիսութիւն կատարուեցաւ: Հանդիսութեան ներկայ էին Թորոնթոյի մէջ ծառայող Հայ Հոգեւորականաց դասը եւ հաւատացեալներ: Եկեղեցւոյս Ազնաւորեան Դպրաց Դասը ելոյթ ունեցաւ: Աւարտին, Յովնանեան սրահէն ներս հիւրասիրութիւն մատուցուեցաւ բոլոր ներկաներուն:

2. ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ա. ԱՆԴՐԱՆԻԿ ԺՈՂՈՎ ԵՒ ԴԻԻԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Թորոնթոյի Ա. Աստուածածին եկեղեցւոյ 71-րդ անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած 2025-2026 տարեշրջանի Հոգաբարձական կազմը իր անդրանիկ նիստը գումարեց 1 Մարտ 2025-ին, ներկայութեամբ անդամական 71-րդ ընդհանուր ժողովի դիւանին՝ Տիար Յարութ Մաթոսեանի եւ Տիկ. Աննա Տ. Յակոբեանի: Առաջին նիստի ընթացքին, նորընտիր հոգաբարձութիւնը իր դիւանի եւ անձնակազմի պաշտօններու բաշխումը կատարեց հետեւեալ բաժանումներով:

- Սարգիսեան Կարօ Սրկ. - Ատենապետ
- Կիտանեան Սարգիս Սրկ. - Ատենադպիր
- Գալուստեան Արմենակ - Գանձապահ
- Սէրգիս Արթիւր Սրկ. - Հաշուապահ
- Միլվանա Պապիկեան - Փոխ Ատենապետ
- Պէպէճեան Գրիգոր Սրկ. - Խորհրդական
- Արթինեան Գրիգոր - Խորհրդական
- Խանամիրեան Գարօլ - Խորհրդական
- Տէրտէրեան Տարօն Կիս. Սրկ. - Խորհրդական

Բ. ԺՈՂՈՎՆԵՐ

Տարուան ընթացքին հոգաբարձութեանս կազմը գումարած է 38 հերթական ժողովներ: Ունեցած ենք բազմաթիւ հանդիպումներ Առաջնորդ Սրբազան հօր եւ Ազգային վարչութեան անդամներուն հետ:

Շրջանիս Կիսամեայ Անդամական Ժողովը տեղի ունեցաւ 19 Սեպտեմբեր 2025-ին, ուր ամփոփ կերպով ժողովին ներկայացուեցաւ կազմիս կիսամեայ գործունէութեան պատկերը, ու ապագայի որոշ ծրագիրներ, ինչպէս նաեւ վերլուծական ուսումնասիրութիւն մը, զոր կ'առնչուէր եկեղեցւոյս ընկերային ցանցերու տուալներուն մասին:

Մոյն ժողովին նաեւ ներկայացուեցաւ մեր եկեղեցիէն ներս կատարուելիք մեծածաւալ նորոգութեանց անհրաժեշտութեան մանրամասնութիւնները երդիքի վերակառուցման, նաեւ Վեհափառ Հայրապետի գալուստին եւ ընդունելութեան տեղեկութիւններ: Տարեշրջանի ընթացքին, Հոգաբարձութեան կազմս մասնակից եղաւ բազմաթիւ հանդիպումներու Հայ Կեդրոնէն ներս գործող զանազան միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն հետ:

- Մասնակցութիւն Հայ Կեդրոնի յարկին տակ գործող միութիւններու միջ-վարչական ժողովին:
- Հանդիպում Հ.Օ.Մ.-ի Ռուբինա Մասնաճիւղի Վարչութեան հետ, թէ՛ ծանօթացման եւ թէ՛ ուսումնասիրելու մեր համագործակցութեան եղանակները:
- Հանդիպում Համազգայինի Գլխաւոր մասնաճիւղի վարչութեան հետ, ծանօթացման եւ համատեղ գործակցութեան եզրեր ճշդելու հեռանկարով:
- Հանդիպում Հ.Օ.Մ.-ի Ամենօրեայ Վարժարանի Ուսումնական Մարմնին հետ, թէ՛ ծանօթացման եւ թէ՛ ուսումնասիրելու մեր համագործակցութեան եղանակները:
- Հանդիպում Հ.Մ.Ը.Մ.-ի հետ, թէ՛ ծանօթացման եւ թէ՛ ուսումնասիրելու մեր համագործակցութեան եղանակները:
- Հանդիպում Հայ Կեդրոնի Երեցներու Ընկերակցութեան հետ, թէ՛ ծանօթացման եւ թէ՛ ուսումնասիրելու մեր համագործակցութեան եղանակները, միաժամանակ արծարծելու մեր եկեղեցին յուզող կարգ մը հարցերը:

Գ. ՆԱՄԱԿՆԵՐ, ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆՆԵՐ եւ ՀՐԱԻՔՐՆԵՐ

Ստացուած Նամակներ՝

- 21 Շրջաբերականներ եւ նամակներ Ազգ. Առաջնորդարանէն
- 10 Նամակներ այլ եկեղեցիներէն
- 56 Նամակներ միութիւններէ, եւ կազմակերպութիւններէ
- 06 Այլազան նամակներ

Ուղղարկուած Նամակներ՝

- 04 Նամակներ Ազգային Առաջնորդարանին
- 09 Նամակներ այլ եկեղեցիներու
- 26 Նամակներ միութիւններու եւ կազմակերպութիւններու
- 42 Այլազան նամակներ (շնորհակալական, անհատներու եւ մի քանին դրամատան)
- 47 Տրուած Վկայագրեր

2- ԱՆԴԱՄԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Ներկայ պատկերով եկեղեցույս տրատու անդամացանկին վրայ ունինք 875 անդամներ, որոնցմէ մօտ 360-ը գործօն անդամներ են: 2025-2026 տարուան ընթացքին ունեցանք 10 նորագիր անդամներ եւ 15 հանգուցեալ անդամներ:

Յ- ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇՈՒՐՁ ԵՒ ՅԱՐԿԻՆ ՏԱԿ ԳՈՐԾՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Ա. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐ

Եկեղեցիս ունի 9 ընտրուած երեսփոխաններ՝

- Նաճարեան Հուրի
- Օհաննէսեան Թամար
- Գասապեան Յարութ
- Մարգիսեան Ռաֆֆի Սրկ.
- Շիրիլեան Գրիգոր
- Չաթալեան Նազար
- Մաթոսեան Յարութ
- Պէպէճեան Ռազմիկ Սրկ.
- Գլպոզեան Թալին

Երեսփոխանները յաճախի դրութեամբ մասնակցած են Հոգաբարձական ժողովներուն, տեղեակ ըլլալու մեր եկեղեցույ ընդհանուր գործունէութեան մասին:

Եկեղեցույս երեսփոխանները մասնակցեցան Գանատայի հայոց Թեմի Ազգային Երեսփոխանական ժողովին, որ տեղի ունեցաւ Լաւալի մէջ 2-3 Մայիս 2025-ին: Ժողովին հիւրաբար մասնակցեցան նաեւ հոգաբարձական կազմի անդամները:

Բ. ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԷՆ ԸՆՏՐՈՒԱԾ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐ

Եկեղեցույս 71-րդ Անդամական Ընդհանուր Ժողովին կողմէն ընտրուած են հետեւեալ յանձնախումբերը.-

ԱՐԽԻՒԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ՝

- Գրճալեան Յակոբ
- Տէր Յակոբեան Աննա
- Տորնա Զեփիւռ

ՀԱՇՈՒԵՔՆԼԻՉ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ՝

- Սիմոնեան Հռութ
- Շիրիլեան Գրիգոր
- Աթանոսեան Սեդա
- Ժիլիլէթ Ճանպազեան

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ՝

- Նաճարեան Հուրի
- Քարկոցեան Սրկ. Մելքոն
- Պէպէճեան Սրկ. Ռազմիկ
- Միսիարթիւնեան Օսիկ
- Թիլիմի Իրէն

Գ. ԳՐԱՍԵՆԵԱԿ ԵՒ ՊԱՇՏՕՆԷՈՒԹԻՒՆ

Եկեղեցոյս գրասենեակը ունի իր պաշտօնէութիւնը, որը միշտ պատրաստ է օգտակար դառնալու մեր հաւատացեալներու բոլոր հոգեւոր եւ եկեղեցական կարիքներուն:

Եկեղեցոյս գրասենեակը բաց է շաբթուան 6 օրերուն (Երկուշաբթիէն – Շաբաթ) առաւօտեան ժամը 11:00 մինչեւ երեկոյեան ժամը 4:00-ը: Եկեղեցոյս քարտուղարուհին՝ Տիկ. Արմիկ Սաֆարեանը, կը շարունակէ վարել քարտուղարութեան պաշտօնը, ժրջանօրէն եւ մեծ բժախնդրութեամբ:

Որպէս կիսաժամ պաշտօնէայ՝ Յարաբերական Բաժնի վարիչ (Community Engagement and Communications Coordinator) Տիար Խաչիկ Տեոէեանը կը շարունակէ վարել իր պաշտօնը ժրջանօրէն եւ մեծ բժախնդրութեամբ:

Եկեղեցոյ ներքնայարկի մաքրութեան համար վարձուած պաշտօնէան շաբաթը 3 օրերու (9 ժամ) ընթացքին կը կատարէ ներքնայարկի մաքրութիւնը բժախնդրօրէն:

4- ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ

Ա. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ, ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ ԵՒ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Եկեղեցոյս հոգեւոր հայրերն ու հոգաբարձութիւնը անմիջական կապի մէջ եղած են Գանատայի Հայոց Տիրախնման Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Բարգէն Արք. Չարեանի ու Ազգային Վարչութեան հետ:

Իսկ եկեղեցոյս գրասենեակը յարատեւ կապի մէջ եղած է Ազգային Առաջնորդարանի դիւանատան հետ:

Հոգաբարձութիւնս նաեւ բնականոն յարաբերութիւն ունեցած է Ազգային վարչութեան կազմի հետ: Ազգային Վարչութեան անդամներէն մեր եկեղեցոյ կապն էր տիար Նազար Չաթալեանը:

Բ. ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Բնականոն, գործնական ու արդիւնաւէտ կապեր հաստատուած են Հ.Յ.Դ. Սողոմոն Թեմիլիբեան կոմիտէի, Հ.Օ.Մ.-ի Ռուբինա Մասնաճիւղի, Հ.Մ.Ը.Մ.-ի, Համազգայինի Գլխաւոր մասնաճիւղի, Հ.Յ.Դ. Գ.Ե.Մ.-ի «Մ. Զաւարեան» մասնաճիւղի, Թորոնթոյի Հայ դատի, Հայ Կեդրոնի Երեցներու Ընկերակցութեան, Հ.Օ.Մ.-ի Ամենօրեայ վարժարանի տնօրէնութեան, Հայ Կեդրոնի տնօրէնութեան եւ Երիտասարդական Համալիրի տնօրէնութեան հետ: Նաեւ

հանդիպում եղաւ գաղութիս մէջ գործող հայրենակցական միութիւններուն հետ, ի մասնաւորի Մարաշի եւ Զէյթունի:

Հոգաբարձութեան կազմս իւրաքանչիւր միութեան կամ կազմակերպութեան հետ առողջ յարաբերութիւններ ձեւաւորելու հեռանկարով, իր ներկայացուցիչը նշանակած է անոնցմէ իւրաքանչիւրին մօտ.-

Հայ Կեդրոն եւ Հ.Յ.Դ. Կոմիտէութիւն	Կարօ Սրկ. Սարգիսեան
Հ.Օ.Մ.	Սիլվանա Պապիկեան
Հ.Մ.Ը.Մ.	Տարօն Կիս. Սրկ. Տէրտէրեան
Հ.Օ.Մ.-ի Ամենօրեայ Վարժարան	Կարօ Սրկ. Սարգիսեան
Հայ Կեդրոնի Երեցներու Ընկերակցութիւն	Կարօ Սրկ. Սարգիսեան
Համազգային	Գրիգոր Արթինեան
Հ.Յ.Դ. Գ.Ե.Մ.	Կարօ Սրկ. Սարգիսեան եւ Սիլվանա Պապիկեան
Հայ Դատի	Սարգիս Սրկ. Կիտանեան
Թորոնթոհայ եւ Հորիզոն Թերթեր	Սարգիս Սրկ. Կիտանեան

Ս. Աստուածածին եկեղեցին իր մասնակցութիւնը բերաւ Հայ Կեդրոնի Ամառնային Փառատօնի յաջողութեան (11, 12, 13 Յուլիս, 2025):

Նաեւ, Կիրակի 27 Յուլիս 2025-ին, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ կամաւորներու խումբով որպէս եկեղեցւոյս ներկայացուցիչներ, իրենց մասնակցութիւնը բերին 33 Division Toronto Police Annual BBQ-ին:

Գ. ՄԻՋ-ՅԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Եկեղեցւոյս կողմէ միջ-յարանուանական Մարմինի ներկայացուցիչն է Տիար Յակոբ Ճանպազեանը, որը միաժամանակ կը վարէ այս մարմնի համադրող ատենապետի պաշտօնը:

Մարմինը կը բաղկանայ Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. եկեղեցւոյ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ, Հայ Աւետարանական եկեղեցւոյ եւ Ս. Աստուածածին Հայց. Առաք. Եկեղեցիներու ներկայացուցիչներէ:

Միջ-յարանուանական մարմինը անցած տարեշրջանի ընթացքին կազմակերպած է հետեւեալ ձեռնարկները, որոնց իր մասնակցութիւնը բերած է նաեւ մեր եկեղեցին.-

- 24 Ապրիլ 2025-ին, սրբադասուած ապրիլեան նահատակներու յիշատակի ոգեկոչում:
- 27 Փետրուար 2025-ին, Սրբոց Վարդանանց Տօնակատարութիւնը տեղի ունեցաւ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ մէջ: Օրուան պատգամը փոխանցեց Հոգշ. Տէր Գարեգին Ծ. Վրդ. Շիրտմեան:

Դ. ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ (ԹՈՐՈՆԹՕ)

Ներկայիս «Հայաստան Համահայկական հիմնադրամ»ի մարմնին մէջ, եկեղեցւոյս ներկայացուցիչն է Տիար Գրիգոր Արթինեան:

Անցեալ տարի «Հայաստան Համահայկական հիմնադրամ»ի տարեկան ճաշկերոյթը տեղի ունեցաւ Կիրակի 26 Հոկտեմբեր 2025-ին, Crystal Grand Banquet Hall-ին մէջ: Տիգրա

Ե. ՄԻՋ-ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՊԵՐ

Մեր յարաբերութիւնները համայնքի բոլոր եկեղեցիներուն հետ եղած են բնականոն ու սիրալիր: Հայ համայնքի բաղկացուցիչ, համա-Գանատական եկեղեցիներն են.-

- Մոնթրէալի Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի
- Լաւալի Ս. Գեորգ Եկեղեցի
- Գեմպրիճի Ս. Նշան Եկեղեցի
- Վանգուվըրի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի
- Սէնթ Գաթրինզի Ս. Պօղոս Եկեղեցւոյ հոգաբարձութիւն
- Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. Եկեղեցի
- Թորոնթոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ Եկեղեցի
- Թորոնթոյի Հայ Աւետարանական Եկեղեցի, եւ ծխական խորհուրդ

Զ. ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԵՏ ԿԱՊԵՐ

Օտար եկեղեցիներու հետ կապեր հաստատելու եւ յարաբերութիւններ մշակելու գործունէութիւնը բացի Վեհափառի այցի ընթացքին, սպասուած կերպով չյառաջացաւ, սակայն յառաջիկայ տարուան ընթացքին յոյսով ենք, որ ան յաջողութեամբ կը պսակուի:

Է. ՊԵՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆԱՏԱՆ ՀԵՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ

• Մեր ջանքերով յարաբերական լաւ կապերը շարունակուեցան Թորոնթոյի 33-րդ բաժանմունքի ոստիկանատան եւ Հայ Կեդրոնի ու Ազգային Վարժարանի պատասխանատուներուն միջեւ:

- 4 Դեկտեմբեր 2025-ին, Հայ Կեդրոնէն ներս տեղի ունեցաւ բարեկամական հանդիպում եւ ճաշի հիւրասիրութիւն մը, ոստիկանութեան անձնակազմին հետ:

Մեր եկեղեցին կը շարունակէ մասնակից դառնալ Թորոնթոյի ոստիկանատան նախաձեռնած խաղալիքներու արշաւին (Christmas Toy Drive), եւ իրենց իսկ վկայութեամբ

միշտ մեծ գնահատանքի կ'արժանանանք, շնորհիւ մեր հաւատացեալներու եւ Հայ Կեդրոնի միութիւններու առատաձեռնութեան:

- Ոստիկանութիւնը եւ Հրշէջները իրենց մասնակցութիւնը բերին նաեւ մեր տարեկան Վարդավառի ջրխաղի ձեռնարկին, իրենց յատուկ մեքենաներով, հրշէջներու սարքաւորումներով եւ անձնակազմով:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐ

Զանազան ձեռնարկներու եւ տօնական առիթներով (Վարդավառ, Քերմէս, Ս. Ծննդեան Պատարագ եւ Ճաշկերոյթ, ելլն...) հրաւիրած ենք եւ բարեկամական կապեր հաստատած պետական բազմաթիւ պաշտօնեաներու եւ քաղաքական գործիչներու հետ, թէ՛ Քաղաքապետարանի, թէ՛ Նահանգային եւ թէ՛ ալ՝ Դաշնակցային մակարդակներու վրայ:

5- ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Ա. ԽՈՐՀՐԴԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Յունուար 2025-էն մինչեւ 31 Դեկտեմբեր 2025, Ս. Աստուածածին Հայց. Առաք. Եկեղեցւոյ մէջ կատարուած են հետեւեալ խորհրդակատարութիւնները.-

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ	47	19 տղայ	28 աղջիկ
ՊՍԱԿԱԴՐՈՒԹԻՒՆ	28	13 հայ	15 իսառն
ՅՈՒՂԱՐԿԱԻՈՐՈՒԹԻՒՆ	57	30 այր	27 կին

Բ. ԾՐԱԳԻՐՆԵՐ

1. Սուրբ Գրային Սերտողութիւն (Bible Study)

Շաբաթական դրութեամբ, Հինգշաբթի օրերը, եկեղեցիէն ներս տեղի կ'ունենայ Ս. Գրային սերտողութիւն, մեր հոգեւոր հովիւներու ուսուցմամբ:

2. Կրթաթոշակ-Մրցանակի ծրագիր (Scholarship Program)

- «Մեղրիկ Բարիքեան» աշակերտական կրթաթոշակ.- Այս կրթաթոշակը կը տրուի Հ.Օ.Մ.-ի Ամենօրեայ Ազգային վարժարանի աւարտական դասարանի աշակերտներուն, որոնք ծրագիր ունին բարձրագոյն ուսում ստանալու երաժշտական մարզին մէջ: (\$500-ի մրցանակ):
- Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ Համալսարանական Կրթաթոշակ.-

Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ Համալսարանական Կրթաթոշակի ծրագրի Յանձնախումբը այս տարի եւս յաջողութեամբ պսակեց իր գործունէութիւնը: Այս մրցանակի դիմում կատարելու ժամանակամիջոցն էր Մայիս 2025-էն մինչեւ Հոկտեմբեր 2025: Ունեցանք 8 դիմողներ: Յանձնախումբի ու հոգաբարձութեան որոշումով 2025 տարուան համար տրուեցաւ 5 մրցանակ:

Մանրամասութիւնները կարելի է գտնել Կրթաթոշակի յանձնախումբի զեկոյցին մէջ:

Այժմ Կրթաթոշակի ծրագրի տակ կան 4 մրցանակներ՝

- Սուրբ Աստուածածին Եկեղեցույ Համալսարանական Կրթաթոշակ
- «Բուչիկեան Ընտանիքի Համալսարանական Կրթանպաստ Հիմնադրամ եւ Մրցանակ»
- «Մեղրիկ Բարիքեան» Երաժշտական Համալսարանական Կրթանպաստ Մրցանակ
- Սուրբ Աստուածածին Եկեղեցույ (Զարեհ Ազնաւորեան) Դպրաց դասի Համալսարանական Կրթանպաստ Մրցանակ

Մրցանակներու բաշխումը տեղի ունեցաւ եկեղեցույս Ս. Ծննդեան ճաշկերոյթի եւ Մեղրիկ Սրբազան Բարիքեանի յուշ-երեկոյի ընթացքին:

3. Եկեղեցույ արխիւներու եւ Տոմարներու թուայնացում և դասաւորում

Սրտի անհուն գոհունակութեամբ կուզանք յայտարարելու, որ Եկեղեցույ «Մանուէլ Աւագ Սարկաւագ Շէհիրեան» Գրադարանի բոլոր գիրքերը թուայնացան եւ արձանագրուեցան էլեկտրական արխիւի մէջ:

Այս աշխատանքը կարողացանք իրագործել (Canada Summer Jobs)-ի ծրագրի շնորհիւ: Canada Summer Jobs-ի ժամանակաւոր աշխատանքի համար ունեցանք 4 դիմումնագրեր, որոնցմէ հոգաբարձութիւնս յարմարագոյնը ընտրեց՝ Մանօ Սրկ. Ճենանեանը:

Արխիւներու դասաւորման եւ թուայնացման աշխատանքը կատարուեցաւ Արժ. Տէր Տաթև Ա.. Քինյ. Միքայէլեանի հսկողութեան ներքոյ:

4. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՏՈՒՐՔԷ ԶԵՐԾ ՍՏԱՅԱԳԻՐՆԵՐՈՒ ԹՈՒԱՅՆԱՅՈՒՄ

Հոգաբարձական անդամ Արթիւր Սրկ. Մերգիսի հովանաւորութեան տակ եկեղեցիս տուրքէ գերծ ստացագիրները թուղթի փոխարէն մեր հաւատացեալներուն կը շարունակէ տրամադրել ե-նամակով:

Այս նախագիծը մեծապէս պիտի նպաստէ նուիրատուութիւններու տուրքէ գերծ ստացագիրներու պատրաստութեան մեր գրասենեակի եւ հաշուական խմբակի գործին:

5. ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԳՐԱԽԱՆՈՒԹԸ

Եկեղեցին ունի իր գրախանութիւնը, ուր կարելի է գտնել եկեղեցական գիրքեր, յուշանուէրներ եւ այլ ձեւի եկեղեցական գոյքեր, որոնք կը վաճառուին Կիրակի օրերը Եկեղեցույս «Յովնանեան» սրահի մուտքին:

Այս տարի յատուկ իրեր եւ գոյքեր բերուեցան Երուսաղէմէն, գրախանութէն ներս վաճառուելու համար:

Գրախանութի պատասխանատուն է՝ Տիկին Մարալ Գաւասեանը, որը յատուկ բժախնդրութեամբ կը տանի այս աշխատանքը:

6. «ՄԱՆՈՒԷԼ ԱԻԱԳ ՍՐԿ. ՇԷՀԻՐԵԱՆ» ԳՐԱԴԱՐԱՆ

Ի Յիշատակ Եկեղեցույս հիմնադիր հոգաբարձական կազմի անդամ եւ Դպրապետ՝ լուսահոգի եւ բարեշնորհ աւագ սարկաւագ Մանուէլ Շէհիրեանին, մեր եկեղեցին 2023-ի

Յունուարին սկսեալ ունեցաւ իր գրադարանը, որ գետեղուած է «Յովնանեան» ներքնասրահին մէջ: Այս գրադարանը կը պարունակէ զանազան կրօնական, եկեղեցական, ազգային, մշակութային եւ որպէս արխիւ պահուած բազմաթիւ գիրքեր: Գրադարանի պատասխանատուն է եկեղեցոյս հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Տաթեւ Ա. Քինյ. Միքայէլեանը:

7. ԵՐԵՅՆԵՐՈՒ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ – SENIORS' OUTREACH PROGRAM

Երեցներու այցելութեան ծրագիրը, որուն նպատակն է որ մեր եկեղեցոյ կամաւորները այցելեն միայնակ երեցներու եւ կարիքաւորներու տուները՝ իրենց հետ աղօթելու եւ ընկերային ժամանակ անցընելու, ստուգելով իրենց ընդհանուր կարիքները, եւ անոնց կապուած պահելու մեր եկեղեցոյ եւ համայնքին հետ:

Այս ծրագիրը անվճար է և չկայ որեւէ նուիրատութեան ակնկալիք:

Այս ծրագիրը կը շարունակուի համադրուիլ եւ ղեկավարուիլ եկեղեցոյս կիսաժամ պաշտօնեայ՝ Պրն. Խաչիկ Տէտէանի կողմէ:

Կազմակերպիչ յանձնախումբի անդամներն են՝

- Անի Գրիգորեան
- Սեւան Աթանոսեան
- Գրիգոր Պէպէճեան
- Գարոլին Խանամիրեան

Հոգաբարձական Կապ՝ Կարօ Սրկ. Սարգիսեան

8. ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐՈՒ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ՀԱՐՑԱԽՈՅՁ

Եկեղեցոյս հոգաբարձութեան կողմէ պատրաստուեցաւ հարցախոյզ մը, որուն միջոցաւ կարելի պիտի ըլլայ ընկալել Եկեղեցոյս եւ Հայ Կեդրոնի մէջ գործող բոլոր կազմակերպութեանց վարչութեան անդամներուն կարծիքները եւ նախասիրութիւնները, եկեղեցոյ յարկին տակ գործող յանձնախումբային գործունեութեան մասին: Այս հարցախոյզին նպատակն էր միջոցներ որոնել բարելաւելու համար եկեղեցոյ յանձնախումբային գործունեութիւնը:

Գ. ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՒ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Միջինքի ճաշի Վաճառք (30 Մարտ 2025)

Ս. Աստուածածին եկեղեցոյ Յովնանեան ներքնասրահին մէջ տեղի ունեցաւ ճաշի վաճառք, ուր Տիկնանց յանձնախումբի համադամ զանազան Հայկական ճաշատեսակներ վաճառուեցան բազմեռանդ համայնքիս անդամներուն:

2. ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ԹԱՓՕՐ (13 Ապրիլ 2025)

Ծաղկազարդի Սուրբ տօնին առիթով, եկեղեցոյս հոգաբարձութիւնը կազմակերպած էր մեծահանդէս թափօր մը: Ս. եւ անմահ Պատարագի արարտին, տեղի ունեցաւ Ծաղկազարդի արանդական թափօրը եկեղեցոյ շրջափակէն ներս, ընկերակցութեամբ խորհրդանշական իշուկին, որուն վրայ փոքրիկները նստեցան մեծ խանդավառութեամբ:

Մանուկներու համար լաւ մթնոլորտ ստեղծելու միտումով, ներկայ էին Չատկուայ «Նապաստակ», որոշ անուշեղէնի հիւրասիրութիւն, եւ յատուկ պատրաստուած Չարդարուած մոմեր:

3. ԱԻԱԳ ՈՒՐԲԱԹ ՕՐՈՒԱՆ ԹԱՓՕՐԸ (18 Ապրիլ, 2025)

Տարիներու սովորութիւն դարձած այս խորհրդաւոր եւ բազմամարդ թափօրը, անգամ մը եւս տեղի ունեցաւ մեր եկեղեցւոյ շրջակայ փողոցներուն մէջ:

Քրիստոսի թաղման կարգի եկեղեցական արարողութենէն ետք, ծայր առաւ մեր հանդիսաւոր թափօրը, Նախագահութեամբ՝ Թեմիս Առաջնորդ Սրբազան Հօր: Թափօրին մասնակցած էին Հ.Մ.Ը.Մ.-ի սկաւտները եւ փողերախումբը, Գ.Ե.Մ.-ի երիտասարդները, եկեղեցւոյս զոյգ դպրաց դասերը եւ սարկաւակաց դասը, ինչպէս նաեւ 1000-է աւելի մեր համայնքի հաւատացեալ զաւակները: Թափօրի անվտանգութիւնը կը հսկէին 4 ոստիկաններ իրենց մեքենաներով, եւ թափօրի կազմակերպիչ յանձնախումբի մեր անդամները: Թափօրի քայլարշաւը սկսաւ եկեղեցիէն եւ անցաւ Consumers փողոցի վրայով, ապա յաջորդաբար Victoria Park-էն դէպի Huntingwood, ապա Pharmacy, Sheppard, Victoria Park, Consumers մինչեւ վերադարձը դէպի եկեղեցի: Արարողութեան աւարտին, բոլոր մասնակիցներուն եւ ներկաներուն բաժնուեցան տիկնանց յանձնախումբի պատրաստած կարկանդակներն ու զատկուան գունաւոր հաւկիթները:

4. Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆ (20 Ապրիլ, 2025)

Ս. Յարութեան տօնին մասնակցելու նպատակով, մեր համայնքի քոյրերն ու եղբայրները Ս եւ անմահ Պատարագին խուռներամ բազմութեամբ ներկայ գտնուեցան:

5. ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՈԳԵԿՈՉՈՒՄ (110 Ամեակ) Հ.Օ.Մ.-Ի ԱՄԵՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ (22 Ապրիլ, 2025)

Արդարեւ, Երեքշաբթի 22 Ապրիլ 2025-ի առաւօտուն, Թորոնթոյի Հ.Օ.Մ.-ի Ամենօրեայ վարժարանի աշակերտութիւնը, առաջնորդութեամբ տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին, համախմբուեցան Եկեղեցւոյ եւ Հայ Կեդրոնի մուտքի Յեղասպանութեան յիշատակի Յուշարձանին դիմաց:

Արժ. Տէր Տաթեւ Ա. Քհնյ. Միքայէլեանի կողմէ արտասանուած աղօթքէն ետք, պահանջատէր հայու գիտակցութեամբ վերանորոգեցին իրենց ուխտը հաւատարիմ մնալ նահատակներու կտակին, եւ կոչ ուղեցին համայն մարդկութեան «Քանդելու լոռութեան շղթան» եւ պաշտպանելու հայ ժողովուրդի անժամանցելի դատը: Աւարտին, լոզունգներ արտասանեցին եւ ծաղիկներ զետեղեցին, ապա անցան իրենց դասարանները:

6. Orthodox Week-վաւերացուած Ontario Parliament-ի կողմէ

2024-ի Դեկտեմբերին, Օնթարիոյ նահանգը «167» օրինագիծով ընդունեց այսուհետեւ ամէն տարի Սուրբ Չատիկէն ետք, նշել «Ուղղափառ Եկեղեցիներու շաբաթ»: Առ այդ,

Եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գերպ. Տ. Գարեգին Ծ. Վրդ. Շիրտմեան, ընկերակցութեամբ հոգաբարձութեան ատենապետ՝ Բրշ. Կարօ Սրկ. Սարգիսեանի եւ Բրշ. Մանօ Սրկ. Ճէնանեանի, ներկայ գտնուեցաւ առաջին ուղղափառ եկեղեցիներու հաւաքին:

7. ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՅ ՈԳԵԿՈՉՈՒՄ (110 Ամեակ) Միջ-Յարանուանական պատարագ Սբ. Աստուածածին եկեղեցւոյ մէջ (24 Ապրիլ, 2025)
Թորոնթոյի Միջ-յարանուանական Մարմնի նախաձեռնութեամբ, Հինգշաբթի, 24 Ապրիլ 2025-ի երեկոյեան, Սուրբ Աստուածածին Հայ Առաքելական Եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ Սուրբ եւ Անմահ Պատարագ՝ ի յիշատակ Հայոց Յեղասպանութեան 110-րդ տարելիցին:
Սուրբ Պատարագը մատուցեց Սուրբ Երրորդութիւն Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւի օգնական՝ Արժանապատիւ Տէր Հայարի Քինյ. Թանաշեան, իսկ օրուան պատգամախօսը եղաւ Միջ-յարանուանական Մարմնի Ատենապետ՝ Տիար Յակոբ Ճանապազեան:
Պատարագի աւարտին, եկեղեցւոյս հոգեւոր հայրերը, սարկաւագները, դպրաց դասը, ինչպէս նաեւ սրբոց նահատակաց մասունքներն ու սրբապատկերը բոնող Գ.Ե.Ս.-ի անդամները՝ թափօր կազմած հաւաքուեցան Վերածնունդի Յուշակոթողին շուրջ, ուր բարձրացաւ Սրբոց Բարեխօսական կարգը:

8. ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՅ ՈԳԵԿՈՉՈՒՄ (110 Ամեակ)
Հինգշաբթի 24 Ապրիլ 2025-ին, առաւօտեան ժամը 11:00-ին սկիզբ առաւ Թորոնթոյի մէջ Ապրիլեան ոգեկոչումի ձեռնարկը, քաղաքակեդրոնի City Hall-ին դիմաց, ներկայութեամբ օտարազգի եւ հայ պատգամաւորներու, թեկնածուներու, հասարակական գործիչներու, միութիւններու եւ պատկան մարմիններու ներկայացուցիչներու եւ հոծ բազմութեան:
Յայտագրի առաջին բաժինը հոգեւոր հովիւներուն աղօթքով հասաւ իր աւարտին, որմէ ետք սկիզբ առաւ քայլարշաւը դէպի թրքական հիւպատոսարան:

9. ՄԻՐՈՅ ՍԵՂԱՆ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ (20 Մայիս, 2025)
Հոգաբարձութիւնս որպէս գնահատանք եւ երախտագիտութիւն, ընթրիքի երեկոյ մը կազմակերպեց ի պատիւ եկեղեցւոյս մէջ գործող բոլոր յանձնախումբերու անդամներուն:
Երեկոյի ընթացքին ներկայացուեցաւ հոգաբարձութեան տարեկան գործունէութեան ծրագիրը:

10. ՀԱՄԲԱՐՉՄԱՆ ՏՕՆ ԵՎ ՃԱՇԿԵՐՈՅԹ (29 Մայիս, 2025)
Քրիստոսի հրաշափառ համբարձման տօնը նշուեցաւ յիշատակելի ու մտերմիկ ընթրիքով մը, որուն ներկայ էին մեր համայնքի աւելի քան 100 հաւատացեալ զաւակները:
Ձեռնարկի ընթացքին ներկաներուն բաժնուեցաւ համբարձման տօնին նուիրուած յատուկ երգարան-գրքոյկ մը, զոր պատրաստուած էր Արժ. Տ. Տաթեւ Ա. քինյ. Միքայէլեանի ջանքերով:

Երեկոն խանդավառեց Ռազմիկ Սրկ Մանասերեան:

11. ՏԻԿՆԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐՈՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ ԱՌԹԻԿ Կիրակի 11 Մայիս 2025-ին, Թորոնթոյի Սուրբ Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ, Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տէր Բարգէն Սրբ. Արք. Չարեանի օրհնութեամբ, Մայրերու Տօնին առթիւ, եկեղեցւոյ պայծառութեան նուիրուած տիկնանց յանձնախումբերու օրհնութեան արարողութիւն կատարուեցաւ:

Օրուան Սուրբ եւ Անմահ Պատարագը մատուցեց եւ քարոզեց՝ Եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գերպ. Տ. Գարեգին Ծ. Վրդ. Շիրտմեան: Օրհնութեան արարողութեան մասնակցութիւն բերին եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Տաթեւ Ա. Քհնյ. Միքայէլեան եւ Սարկաւազաց դասը:

Տօնական այս օրուան առթիւ, եկեղեցւոյ մուտքին բոլոր մայրերուն ծաղիկներ եւ էջադիրներ բաժնուեցան, Մեղրիկ Բարիքեան կրտսերաց դպրաց դասի ծնողաց յանձնախումբին կողմէ: Օրուան ջերմ մթնոլորտը ամբողջացաւ մայրերու նուիրուած հաւաքական երգեցողութեամբ:

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ Ա. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 107-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ԵՒ ԵՌԱԳՈՅՆ ԴՐՕՇԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐՈՒԵՅԱԻ ԹՈՐՈՆԹՈՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՄԷՋ

Նախագահութեամբ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Բարգէն Ս. Արք. Չարեանի, Կիրակի 25 Մայիս 2025-ին, յընթացս Ս. եւ Անմահ Պատարագին, Հայաստանի Ա. Հանրապետութեան անկախութեան 107-ամեակին առիթով Հանրապետական մաղթանք եւ Հայաստանի Հանրապետութեան եռագոյն դրօշի օրհնութիւն կատարուեցաւ, Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

13. ՕՆԹԱՐԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ ՆՇՈՒԵՅԱԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԻՍԸ

Երկուշաբթի 26 Մայիս 2025-ի յետմիջօրէին, Օնթարիոյ խորհրդարանի յարկէն ներս արժանավայել կերպով նշուեցաւ «Հայ Մշակոյթի Ամիս»ին նուիրուած ձեռնարկ մը: Ձեռնարկը կազմակերպած էր Հայագգի երեսփոխան՝ Տիար Արիս Պապիկեան: Ձեռնարկին ներկայ էին Օնթարիոյ Նահանգի Վարչապետ Տակ Ֆորտը, Խորհրդարանի երեսփոխաններ, բարձրաստիճան պաշտօնեաներ, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տէր Տաթեւ Ա. Քհնյ. Միքայէլեան:

14. ԹՈՐՈՆԹՈՅԻ ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԻ ՀԻՄՆԱՐԿԷՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՈՂՕՐՀՆԷՔ

Շաբաթ 24 Մայիս 2025-ին, Թորոնթոյի Հ.Օ.Մ.-ի Ամենօրեայ վարժարանի շրջափակէն ներս տեղի ունեցաւ Հայ կեդրոնի ընդարձակման (ACC Beyond) հիմնարկէքի արարողութիւն եւ հողօրհնէք:

Արարողությունը կը վայելէր ներկայությունը Գանատայի Հայոց Թեմի բարեխնամ Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արքեպիսկոպոս Չարեանի: Առաջնորդ Սրբազան Հօր կողքին էին Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հոգեւոր տեսուչ՝ Գերապատիւ Տ. Գարեգին Ծայրագոյն Վարդապետ Շխրտմեանն ու հոգեւոր հովիւ՝ Արժանապատիւ Տ. Տաթև Աւագ Քահանայ Միքայէլեանը, ինչպէս նաեւ Հոգեշնորհ Տ. Յակոբ Վարդապետ Եագուպեանը եւ Ազգային Վարչութեան անդամներ՝ Պարոն Յարութ Գասապեանն ու Պարոն Նազար Չաթալեանը:

15. ՎԱՐԴԱՎԱՌԻ ԱԻԱՆԴԱԿԱՆ ՋՐԽԱՂ (27 Յուլիս, 2025)

Այս տարի անգամ մը եւս Քրիստոսի Այլակերպութեան տօնը Ս. և անմահ պատարագէն ետք տօնեցինք աւանդական ջրխաղով:

Այս ջրխաղի ձեռնարկին համար կազմուած էր յատուկ յանձնախումբ մը (բաղկացած մօտ 25 կամաւորներէ), որուն պատասխանատու նշանակուեցաւ տիար Կարօ Սրկ.

Մարգիսեանը: Ջրխաղին մասնակից դարձան քաղաքի ոստիկանութիւնն ու հրշէջները, իրենց աշխատակազմով, մեքենաներով ու սարքաւորումներով: Այս տարի Ջրխաղը տեղի ունեցաւ եկեղեցւոյ եւ Հայ Կեդրոնի շրջափակին մէջ, ուր ներկայ էին աւելի քան 700 մասնակիցներ և 25-է աւելի կամաւորներ:

16. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՈՒԽՏԻ ՇԱԲԱԹ ԵՒ ՔԵՆՄԷՍ (11 – 17 Օգոստոս, 2025)

Մեր եկեղեցւոյ անուանակոչութեան եւ Ս. Աստուածածնի Վերափոխման տօներուն առիթով, մեր եկեղեցին ինչպէս ամէն տարի, այս տարի նոյնպէս կազմակերպեց Ս.

Աստուածածնայ ուխտի շաբաթը: Աղօթքի, տիրոջ փառաբանութեան, մատաղի պատրաստութեամբ եւ Աւանդական քերմէսի բաժիններով, մեր հաւատացեալ ժողովուրդին հրամցուեցաւ Քրիստոնէական հաւատքի եւ պաշտամունքի լայն եւ խորհրդաւոր հնարաւորութիւններ:

12 Օգոստոս 2025-ին, Հայ Կեդրոնի Երեցներու Ընկերակցութեան համագործակցութեամբ, տեղի ունեցաւ Ուխտագնացութիւն դէպի Livingston Our Lady of Lebanon, այցելութիւն Windsor-ի Հայ Կեդրոն եւ Հ.Օ.Մ.-ի կողմէ հիւրասիրութիւն, մասնակցութեամբ 85 ուխտաւորներու եւ առաջնորդութեամբ Արժ. Տ. Տաթև Ա. Քհնյ. Միքայէլեանի:

14 Օգոստոս 2025-ին տեղի ունեցաւ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՀԱՄԵՐԳ,

Մասնակցութեամբ Ս. Աստուածածին Հայց. Առաք. եկեղեցւոյ «Ազնաւորեան» դպրաց դասի: Իսկ 15 – 16 Օգոստոս 2025-ին, տեղի ունեցաւ մեր տարեկան Քերմէսը: Երկու օրերու ընթացքին մեր քերմէսը հիւրընկալեց աւելի քան 1,700 հայորդիներ, ուր մեր կամաւորներու թիւը հասաւ 100-ի:

Քերմէսի յաջորդ դրական յատկանիշը հանդիսացաւ այն, որ այնտեղ հրաւիրուած էին պետական եւ քաղաքական գործիչներ, որոնցմէ շատերը գնահատական խօսքեր արտասանեցին ի նպաստ Թորոնթոյի հայ համայնքին:

Նոյն ձեռնարկին առիթով, հոգաբարձութիւնս հրատարակեց «Քերմէս 2025» գրքոյկը, որուն մէջ տպուեցան ծանուցումներ եւ նուիրատուներու անուններ, որմէ կարելի եղաւ ապահովել շօշափելի գումար մը:

Քերմէսի գեղարուեստական բաժնի երաժիշտներն էին՝ Ուրբաթ օրը՝ Ճորճ Սարգիսեանը իր նուագախումբով, իսկ Շաբաթ օրուանը՝ Կարօ Կապուտակեանը իր նուագախումբի անձնակազմով:

Այս տարի Քերմէսի ճաշի պատրաստութիւնը վստահուած էր «Համով Հոտով» Հայ Կեդրոնի ճաշարանին, որոնք բարձր որակի հայկական ճաշատեսակներով զարդարեցին մեր սեղանները: Իսկ անուշեղէններու պատրաստութեան եւ վաճառքի պատասխանատուութիւնը ստանցնած էին մեր եկեղեցւոյ Տիկնանց Յանձնախումբի ազնուափայլ անդամները:

Հարկ է այստեղ նշել որ Քերմէսի ձեռնարկի պատրաստութեան համար կազմուեցաւ յանձնախումբ մը եւ զանազան ենթայանձնախումբեր (Գրքոյկի, Հաշուական, Kids' Zone, Raffle & Scratch Off Tickets, ճաշի, Կամաւորներու), որոնք 4 ամիսներու ընթացքին յաջողութեամբ ծրագրեցին եւ ղեկավարեցին երկօրեայ Քերմէսի հանդիսութեան բոլոր մանրամասնութիւնները:

Քերմէսի յանձնախումբի հոգաբարձական կապն էր՝ Սիլվանա Պապիկեան: 17 Օգոստոս 2025-ին, Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով, բոլոր ներկաներուն բաժնուեցաւ օրհնուած մատաղն ու խաղողը:

17. ՏՕՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՏԱՐՈՒԱՅ ԲԵՐՔԻ (27 Սեպտեմբեր 2025)

Այս տարի, մեր եկեղեցին, Բերքի Օրհնութեան Տօնին առիթով, Շաբաթ 27 Սեպտեմբերի երեկոյեան, եկեղեցւոյ հանդիպակաց բակին մէջ կազմակերպեց հայկական աւանդական սովորութիւններու երեկոյ մը, ուր մեր հաւատացեալ ժողովուրդը առիթը ունեցաւ Հայկական աւանդական մթնոլորտի մէջ գտնուիլ եւ ճաշակել համեղ հայկական ճաշեր, ունկնդրելով հայկական երաժշտութեան գեղեցիկ պատասխիկները, ընտանեկան ջերմ միջավայրի մը մէջ:

Իսկ Կիրակի 28 Սեպտեմբերին, Ս. Պատարագի աւարտին տեղի ունեցաւ Տարուայ Բերքի օրհնութիւնը եւ մատաղի բաշխում:

Այս ձեռնարկի պատրաստութեան համար կազմուեցաւ յանձնախումբ մը, որ բացառիկ յաջողութեամբ կազմակերպեց այս աննախընթաց երեկոն:

Յանձնախումբի անդամներն են՝

- Պաղչեճեան Ծովիկ
- Սարգիսեան Էլօ
- Սիմոնեան Հոռի
- Մարտիրոսեան Գրիգոր
- Աստուրեան Մակի
- Դէպիրեան Մարալ
- Մազեան Շողիկ
- Միսեան Թամար

Ձեռնարկի հոգաբարձական կապն էր՝ Կարօ Սրկ. Սարգիսեանը:

18. Ս. ԾՆՆԴԵԱՆ ՀԱՄԵՐԳ, ԿԱՂԱՆԴԻ ԾԱՌԻ ԼՈՒՍԱԻՈՐՈՒՄ ԵՒ ՏՕՆԱՎԱՃԱՌ (Դեկտեմբեր 5-6, 2025)

Ս. Ծննդեան տօնին նուիրուած համերգը տեղի ունեցաւ 5 Դեկտեմբեր 2025-ին, ուր ելոյթ ունեցաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Մեղրիկ Բարիքեան» կրտսերաց դպրաց դասը, ղեկավարութեամբ՝ խմբավարուհի Հիլտա Գանտահարեանի:

Համերգի ասարտին, լուսաստորումը կատարուեցաւ Կաղանդի Ծառի, մսուռի և զարդարանքի, ձեռամբ Տէր եւ Տիկին Տիգրան Եւ Անի Թորոսեան կողմէ որոնք իրենց նիւթական պատուական նուիրատութեամբ հոգացած էին կաղանդի զարդարանքի բոլոր ծախսերը:

Ապա բացումը կատարուեցաւ Ս. Ծննդեան Տօնավաճառին, որ տեղի ունեցաւ եկեղեցւոյ «Յովնանեան» ներքնասրահին մէջ 2 օրերու տեւողութեամբ (5-6 Դեկտեմբեր, 2025):

Տօնավաճառի բացման ժապաւէնը կտրեց Տիկին Արփի Սալիպեան, որ իր արատաձեռն նուիրատութեամբ մեծապէս նպաստեց տօնավաճառի փայլուն յաջողութեան:

19. ՆԱՄԱԿ ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՅԻՆ

Այս տարի Ս. Ծննդեան եւ նոր տարուան տօնին առիթով, մեր համայնքի հայ մանուկները բացառիկ առիթը ունեցան գրելու իրենց հետաքրքրական նամակները Կաղանդ Պապային: Մեր Կաղանդ Պապան ստացաւ աւելի քան 100 նամակներ, որոնց բոլորին սիրով մէկ առ մէկ պատասխանեց, եւ նոյնիսկ որոշ գնահատական նուէրներ ալ տեղադրելով իր ծրարին մէջ, զանոնք ուղղարկեց հայ մանուկներուն:

20. ԵԿԷՔ ԵՐԳԵՆՔ ՄԻԱՄԻՆ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵՐԳԵՐ - CHRISTMAS CAROLS SING-A-LONG (15 Դեկտեմբեր 2025)

Ուրբաթ 15 Դեկտեմբեր 2025-ին, Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցիէն ներս տեղի ունեցաւ «Եկէք Միասին Երգենք» ելոյթը, կազմակերպութեամբ եկեղեցւոյ Սարկաւազաց դասին եւ մասնակցութեամբ մեր հաւատացեալ ժողովուրդին: Մենքով իրենց մասնակցութիւնը բերին նաեւ Դպրաց դասի անդամները, Դաշնամուրի նուագակցութեամբ Տիկ. Թալին Գլըպոզեան Արթինեանի: Երեկոյթի ընթացքին իրենց խօսքերը փոխանցեցին եկեղեցւոյ Հոգեւոր տեսուչն ու հովիւր:

Օրուան Հիւրասիրութիւնը ներկաներուն բաժնուեցաւ եկեղեցւոյ տիկնանց յանձնախումբին կողմէ:

21. Ս. ԾՆՆԴԵԱՆ ԱԻԵՏՈՒՄ (5 Յունուար 2026)

Այս տարի, 40-է աւելի կամաւորներ (7 խումբեր) շրջեցան մօտ 40 հայ ընտանիքներու տուները, անոնց փոխանցելու Յիսուս մանուկի հրաշափառ ծնունդի մեծ Աւետիսը, եկեղեցւոյ ապահովելով կոկիկ գումար մը:

22. Ս. ԾՆՆԴԵԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ (6 Յունուար 2026)

Յաւարտ Ս. Ծննդեան պատարագին, 6 Յունուար 2025- ի յետմիջօրէին, Հայ Կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ Եկեղեցւոյ Ս. Ծննդեան ճաշկերոյթը, որտեղ համախմբուած էին մեր հաւատացեալները (260 ներկաներով):

Ճաշկերոյթին ելոյթ ունեցան եկեղեցւոյս զոյգ դպրաց դասերէն անդամներ, ինչպէս նաեւ Տիար Լեւոն եւ Արթիւր որոնք իրենց հայկական գեղեցիկ երաժշտութեամբ խանդավառեցին ներկաները:

Այս ճաշկերոյթի պատրաստութեան համար կազմուած էր յանձնախումբ մը, որ բարեյաջող կերպով տարաւ իր աշխատանքը, եւ կարողացաւ իրագործել աննախադէպ գեղեցիկ յայտագիր մը ուր հայ ն օտար քաղաքական գործիչներ, յաջորդաբար յաւուր պատշաճի գեղեցիկ ու տպաւորիչ ելոյթներ ունեցան:

Այս յանձնախումբի հոգաբարձական կապն էր՝ Սիլվանա Պապիկեան:

Դ. ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ

- «ԵԿԵՂԵՑԻ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ

Մինչեւ 2025-ի վերջաւորութիւնը շաբաթական դրութեամբ կը հրատարակուէր «Հովիւին Ձայնը» թերթիկը, Արժ. Տ. Տաթև Ա. Քհնյ. Միքայէլեանի խմբագրութեամբ: Թերթիկին մէջ կը տեղադրուէին հոգեհանգիստները, նուիրատութեանց անուանացանկերը, տօնական օրերու յայտարարութիւնները եւ շաբթուան Սուրբի եւ տօներու անունները:

Յունուար 2025-էն սկսեալ Թորոնթոյի կրօնական մեր «Եկեղեցի» շաբաթաթերթը ստացաւ նոր տեսք ն բովանդակութիւն: Թերթի խմբագիր նշանակուեցաւ Պրն. Խաչիկ Տէտէեան:

Շաբաթաթերթը իր մէջ կը պարունակէ «Հովիւին Ձայնը», որոնք կը պատրաստուին եկեղեցւոյս հոգեւոր տեսուչին ու հովիւին ջանքերով, ինչպէս նաեւ զանազան լուրեր Ս.

Աստուածածին եկեղեցւոյ, Ազգ. Առաջնորդարանի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ

Կաթողիկոսարանի վերաբերեալ: «Եկեղեցի» շաբաթաթերթը նաեւ իր մէջ կ'ընդգրկէ երիտասարդական, ծիսական գիտելիքներու եւ բազմաբնոյթ կրօնական գիտելիքներու էջեր, աղօթքի բաժին, հոգեհանգիստները, նուիրատուներու անուանացանկերը, տօնական օրերու յայտարարութիւնները եւ եկեղեցւոյ յայտարարութիւններն ու ձեռնարկներու թռուցիկները:

Եկեղեցւոյ թերթիկի աշխատանքին նաեւ իրենց կամաւոր մասնակցութիւնը կը բերեն Digital Media Խմբակի անդամները: Տեղին է յիշել որ այս շաբաթաթերթը նաեւ կ'ուղղարկուի մեր հաւատացեալներուն՝ ե-նամակով:

- ՏԱՐԵԿԱՆ ՕՐԱՑՈՅՑԸ 2026

2026-ին, Հայկական եւ Գանատական տօներով յիշատակուած պատի օրացոյցեր հրատարակուեցան եւ բաշխուեցան մեր հաւատացեալ ժողովուրդին: Այս տարի լոյս տեսած է 250 օրացոյցի օրինակներ:

- «ՔԵՐՄԷՍ 2025» ԳՐՔՈՅԿ

Քերմէսի գրքոյկը իր մէջ կը պարունակէ Ս. Աստուածածնայ Վերափոխման ու մեր եկեղեցւոյ անուանակոչութեան կապակցութեամբ պատգամներ ու սրտի խօսքեր, ինչպէս

նաեւ կարելոր տեղեկութիւններ ու շարականներ: Նաեւ Գրքոյկին մէջ տեղադրուած են նուիրատուներու ծանուցումները:

• **ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԳՐՔՈՅԿ/ԵՐԳԱՐԱՆ**

Այս տարի նաեւ տպագրուեցաւ Քրիստոսի Համբարձման տօնին նուիրուած գրքոյկ-երգարան մը, պատրաստութեամբ եկեղեցոյս հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Տաթեւ Ա. Քինյ. Միքայէլեանի:

• **ՀՈՎԻԻ ՔԱԶ ԵՒ ՀՈՎԻԻ ԲԱՐԻ ՅՈՒՇ-ԵՐԵԿՈՅ Ի ՅԻՇԱՏԱԿ Ի ՄԵՂՐԻԿ ԲԱՐԻՔԵԱՆԻ ՎԱԽՃԱՆՄԱՆ Ե. ՏԱՐԵԼԻՑԻՆ**

Սյս տարի, Ս. Աստուածածին Եկեղեցոյ նախկին սիրուած եւ վաստակաշատ հոգեւոր հովիւի եւ Գանատայի Հայոց Թեմի Երկրորդ Առաջնորդ՝ հոգեւոր Ս. Մեղրիկ Եպս. Բարիքեանի վախճանման Ե. տարելիցի առթիւ տեղի ունեցաւ յուշ-երեկոյ Crystal Fountain-ի ճաշարահէն ներս: Ներկայ էր աւելի քան 250 հայորդիներ որ արժանավայել կերպով վար պահեցին նախկին հոգեւոր հովիւի՝ Մեղրիկ Եպիսկոպոսին յիշատակը: Սոյն առթիւ ի յիշատակ Մեղրիկ Եպս. Բարիքեանի վախճանման Ե. տարելիցի առթիւ, երկու գրքի հրատակութիւն տեղի ունեցաւ, առաջին՝ «Հովիւ Քաջ, Հովիւ Բարի» յուշամատեան խմբագրութեամբ՝ Սարգիս Սրկ. Կիտանեանի եւ նաեւ «Ամենօրեայ Խօսակցութիւն Եկեղեցոյ Հայրերուն Հետ» պատրաստութեամբ՝ Նաւասարդ Մարտոյեանի:

5. ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ս. Աստուածածին Եկեղեցոյ կեանքէն ներս կը գործեն 15 մնայուն յանձնախումբեր:

Ա. ՍԱՐԿԱԻԱԳԱՅ ԴԱՍ ԵՒ ԴՊԻՐՔ

Եկեղեցոյս սարկաւագները, կիսասարկաւագներն ու դպիրները կիրակնօրեայ դրութեամբ՝ շարունակական կերպով մեր եկեղեցոյ ծառայութեան ու առաքելութեան մաս կը կազմեն, բժախնդրութեամբ սպասարկելով Ս. Խորանին: Անոնք նաեւ ներկայ կ'ըլլան ժամերգութիւններուն եւ բոլոր եկեղեցական արարողութիւններուն:

Ներկայիս եկեղեցիս ունի 30 Սարկաւագներ, 14 Կիսասարկաւագներ եւ 23 Դպիրներ: Սարկաւագաց դասի հոգաբարձական կապն է՝ Կարօ Սրկ. Սարգիսեանը:

Բ. «ԶԱՐԵՀ ԱԶՆԱԻՈՐԵԱՆ» ԴՊՐԱՅ ԴԱՍ

Զարեհ Ազնաւորեան Դպրաց Դասի վարչութեան անդամներն են.-

- Քարկոցեան Սրկ. Մելքոն (Ատենապետ)
- Տաւուտեան Կիս. Սրկ.Պետրոս (Փոխ ատենապետ)
- Սդման Մեւան (Ատենադպիր)
- Աթանոսեան Սեդա (Գանձապահ)
- Սիմոնեան Հռուօ
- Շահպագեան Սրկ. Արամ

- Սարգիսեան Անի

Հոգաբարձութեան կապն է տիկին Գարոլին Խանամիրեան:

Զարեհ Ազնաւորեան Դպրաց Դասի ղեկավարուհին է տիկին Անուշ Գալստեան: Իսկ դաշնամուրին վրայ կ'ընկերակցին տիկին Թալին Արթինեան-Գըլըպոզեանը եւ ամսուան մէկ շաբաթը Մանօ Սրկ. Ճէնանեանը:

Վարչութիւնը անցած տարեշրջանին գումարած է 12 ժողովներ եւ 4 հանդիպումներ: Ներկայիս Դպրաց Դասի անդամներուն թիւը 50 է: Այս տարեշրջանին 3 նոր անդամներ միացան անոր կազմին: Դպրաց Դասի փորձերը տեղի կ'ունենան ամէն Երեքշաբթի երեկոյեան ժամը 8:30-ին: Անցնող տարիներուն նման, Դպրաց Դասը կը շարունակէ բժախնորոքէն կատարել Կիրակի օրերու Սուրբ Պատարագի երգեցողութիւնը եւ նաեւ մասնակցութիւն կը բերէ տօնական առիթներուն տեղի ունեցած եկեղեցական արարողութիւններուն: Ինչպէս նաեւ կը մասնակցի եկեղեցիէն ներս կատարուող Խորհուրդներու եւ պսակներու երգեցողութեանց:

Կ'ուզենք տեղեկացնել որ վարչութիւնը կատարած է ցաւակցական եւ մխիթարական այցելութիւններ իր անդամներուն, իրենց հարազատներուն մահուան տխուր առիթներով:

Զարեհ Ազնաւորեան Դպրաց Դասի վարչութիւնը միշտ փորձած է ըլլալ քաջալերող ու հոգատար իր Դպրաց Դասի բոլոր անդամներուն նկատմամբ:

Գ. «ՄԵՂՐԻԿ ԲԱՐԻՔԵԱՆ» ԿՐՏՍԵՐԱՅ ԴՊՐԱՅ ԴԱՍ ԵՒ ԾՆՈՂԱՅ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ
 Մեղրիկ Բարիքեան դպրաց դասի ղեկավարուհին է Հիլտա Գանտահարեան:

Տարուան ընթացքին կրտսերաց դպրաց դասը մասնակցած է 12 պատարագներու երգեցողութեան, ամէն ամսուան երկրորդ Կիրակին, ինչպէս նաև զանազան տօնական օրերու արարողութիւններուն (օրինակ.- Ծաղկազարդ... Ճրագալոյց, եւլն): Բարիքեան դպրաց դասը ունի 51 անդամներ, որոնցմէ 6-ը այս տարուան նոր անդամներ են:

Ծնողաց Յանձնախումբի անդամներն են՝

- Թալին Մահսէրէճեան (Ատենապետ)
- Հռութ Սիմոնեան (Հաշուապահ)
- Լենա Յակոբեան
- Ռիթա Վայս
- Մակի Աստուրեան
- Միրնա Պետրոսեան
- Ռիթա Խաչոյեան

Հոգաբարձութեան կապ՝ Սիլվանա Պապիկեան

Ծնողաց Յանձնախումբը գումարած է 12 ժողովներ եւ 7 հանդիպումներ 2024 տարուան ընթացքին:

Դ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐՇԱՐԱՆ

Կիրակնօրեայ վարժարանի Տեսչութեան պաշտօնը կը վարէ Տիկ. Սեւան Զոզեան-Աթանոսեան իսկ փոխ-տեսուչի պաշտօնը կը վարէ՝ Տիկ. Թամար Թոզուն: Կիրակնօրեայ աշակերտութիւնը աւելի քան 80 աշակերտ են:

Կիրակնօրեայ Հաշուապահ՝ Մարալ Օհանէս

Յանձնախումբին անդամներն են: (5 անդամներ)

- Տոք. Պունիքեան Սիլվա
- Աթանոսեան Սեւան
- Թոզեան Թամար
- Պոյաճեան Նարինէ
- Անտոնեան Լիլիթ

Հոգաբարձական կապ՝ Տոքթ. Գրիգոր Սրկ. Պէպէճեան

Ուսուցչական կազմն է:

Թոզեան Թամար,
 Իսաչոյեան Ռիթա,
 Զաաթար Ճէյն,
 Զոզեան Աթանոսեան Սեւան,
 Տէմիրճեան Սարգիսեան Թամար,
 Արգարեան Սեւանա,
 Ռուպինա Քէօզկէրեան:
 Նարինէ Պոյաճեան
 Մարալ Իսաչատուրեան
 Լիտայի Բաշիշնիք
 Առէն Պապիկեան
 Աննա Անտոնեան
 Մարիան Լուսարարեան
 Փաթիլ Սկրտիչեան
 Անի Աստուրեան
 Դաշնամուր նուագողն է Մարիա Տաուտեան Այվազեան

Շարականի ուսուցիչն է Բրշ.Պետիկ Կիս.Սրկ.Տաուտեանը եւ Ժէյն Զաադար:

Ներկայիս օգնական ուսուցչի պաշտօնը կը վարեն՝

Դանիէլ Բաշիշնիք, Փաթիլ Սիմոնեան, Նուշիկ Թոզեան, Մարիամ Օհանէս, Նարօտ Մինասեան, Կասիա Իսաչոյեան, Մարիելլա Յակոբեան, Բալիկ Ասդուր, Մարի Եմենճեան, Նարեկ

Մինասեան, Թանիա Աթամէր, Գարլա, Հրակ, Խաչիկ, Աննա Տոնայեան, Արմէն Շահպազեան Սոֆիա Սապունճեան:

Դասարաններու Անուն եւ Բաժանում:

- Մերոպ Մաշտոց Դասարան՝ Մանկապարտէզի աշակերտներ կոկոն եւ Ճաղիկ դասարան (5 տարեկան)
- Քայանեանց Դասարան՝ 1-2րդ դասարանի աշակերտներ (6-7 տարեկան)
- Հրիբսիմեանց Դասարան՝ 3-4րդ դասարանի աշակերտներ (8-9 տարեկան)
- Գրիգոր Լուսաւորիչ Դասարան՝ 5-6րդ դասարանի աշակերտներ (10-11 տարեկան)
- Կոմիտաս Դասարան՝ 7-8րդ դասարանի աշակերտներ (12-13 տարեկան)
- Նարեկացի Դասարան՝ 9րդ դասարանի աշակերտներ (14-15 տարեկան)

Տարեկան ծրագրուած գործունէութիւն

Ա-Ամէն Կիրակի Ճաշու գիրքի ընթերցում:

Բ-Ս.Ծննդեան եւ Ս.Յարութեան Ճրագալոյցի, Ս.Գրային ընթերցուածներու կատարում:

Գ-Հսկումի ժամերգութեանց ընթացքին«Հաւատով Խոստումանիմք»աղօթքի ընթերցում:

Դ-Աւագ երեքշաբթի օրուայ, Տասը Կուսանացի ժամերգութեան կատարում:

Ե-Աւագ Ուրբաթ օրերու, Քրիստոսի Թաղման կարգի եւ թափօրի պատրաստութիւն եւ մասնակցութիւն:

Զ-Կիրակնօրեայ Դասաւանդութիւն.

Դասաւանդութեան ժամերն են ամէն Կիրակի առաւօտեան ժամը 9:30-11:00:

Աշակերտները կը սորվին աղօթքներ, շարականներ, Հայ Եկեղեցւոյ պատմութիւն, կրօնական եւ ծիսական գիտելիքներ, տօներու եւ սուրբերու յատուկ գիտելիքներ, աւետարանական պատմուածքներ եւ բացատրութիւններ, եւ Ս.Գրային ոսկեղէն համարներ:

Է - ՆՈՐԱԾԻԼ ՀԱԲԱՏՔ, ԹԵՐԹԻԿ

Ուրախութեամբ կը տեղեկացնենք, թէ կիրակնօրեայ դպրոցը ունեցաւ իր երկամսեայ գունագեղ «ՆՈՐԱԾԻԼ ՀԱԲԱՏՔ»ի թերթիկը, առաջին թիւը յոյս տեսաւ 2024-ի Մարտին, մինչ օրս 4 յաջորդական թիւեր յոյս տեսած են, իսկ թիւ 10 եւ 11 ըմբռնողի տակ են: Ուրախալի երեւոյթը այն է, որ մեր թերթիկը նաեւ կը բաժնուի ՀՕՄ-ի ամենօրեայ վարժարանի, 3-6 րդ դասարանի աշակերտութեան տպուած օրինակ նաեւ Ե-նամակի միջոցաւ կը բաժնուի դպրոցի բոլոր աշակերտութեան: Իւրաքանչիւր թիւի տպաքանակն է 300-օրինակ:

Ը-Ամառնային Ս.Գրքի Ճամբար.

- Չորրորդ տարին ըլլալով կ'իրականացնենք մեր ամառնային հնգօրեայ ճամբարը: Սոյն Ճամբարին կրնան մասնակցիլ Թորոնթոյի աշակերտները անխտիր 5-14 տարեկան:
- Ճամբարի դասաւանդութեան կը մասնակցին, եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւներն ու ուսուցչական կազմը իրենց օգնականներով եւ կամաւորներով:
- Ճամբարը կ'ունենայ իր տարեկան թեման. 2025-ի թեման էր, «Աստուծոյ ծանօթանալ 5 զգայրանքներով»:

- Ճամբարէն ներս, աշակերտները կը սորվին.
- Հայց.Առաքելական Եկեղեցւոյ վերաբերեալ գիտելիքներ, Ս.Գրային հատուածներ, խաղեր, անոնց կը բաժնուի նախաճաշ եւ ճաշ, եկեղեցւոյ տիկնանց յանձնախումբի կողմէ տրամադրուած:
- Ճամբարը տեղի կ'ունենայ Օգոստոս ամսուայ վերջին շաբաթը, ժամերն են, առաւօտեան ժամը 9-էն մինչեւ երեկոյեան 5:

Միամեայ Տեղեկագիր

- Մարտ 2025-ին Նարեկացի դասարանը ունեցաւ Movie night:
- Ապրիլ ամսուայ ընթացքին «Ծաղկագարդի» մոմերու պատրաստութիւն եւ վաճառ:
- Յունիս 1 2025-ին, ամավերջին հանդէս տեղի ունեցաւ եկեղեցւոյ մէջ:
- Ս.Աստուածածնայ Վերափոխման Տօնին առիթով, կատարուած քերմէսի մասնակցեցան մեր ուսուցչական կազմը եւ կամաւորները:
- Սեպտեմբեր 2025-ին, Առաջնորդանանի կողմէ պատրաստուած նոր դասագրքերու գործածութիւնը սկիզբ առաւ, Կիրակնօրեայ դպրոցըն ներս:
- 25-31 Օգոստ.2025-ին, Տարեկան Ճամբարի մասնակցութիւն:
- Կիրակնօրեայ դպրոցի պաշտօնական բացումը կատրուեցաւ Կիրակի 21 Սեպտ.2025-ին:
- Դեկտեմբար 6, 2025 Կիրակնօրեայ դպրոցի ուսուցչական կազմը իր մասնակցութիւնը բերաւ Եկեղեցւոյ տարեկան տօնավաճառին:
- Դեկտեմբեր 22.2025-ին, Կիրակնօրեան ունեցաւ իր նոր տարուան տօնակատարութիւնը:

«ԻՄ ԳԵՏԱԿՍ» ՍՈՒՐԲ ԳՐԱՅԻՆ ՃԱՄԲԱՐ

«ԿՐԹԷ ՄԱՆՈՒԿԸ ԻՐ ՃԱՄԲԱՆ ՍԿՍԱԾ ԱՏԵՆԸ, ՈՐՊԷՍՉԻ ԻՐ ԾԵՐՈՒԹԵԱՆ ԱՏԵՆՆ ԱԼ ԱՆԿԷ ՉԽՈՏՈՐԻ» (ԱՌԱԿԱՅ 22:6):

Հովանաւորութեամբ Գանատայի Հայոց Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Բարգէն Արքեպիսկոպոս Չարեանի եւ կազմակերպութեամբ Ազգային Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքին, Կիրակի, 7 Փետրուար 2026-ին, (35 նասնակցող 6-13 տարեկան) տեղի ունեցաւ «ԻՄ ԳԵՏԱԿՍ» Սուրբ Գրային Ճամբարը, Թորոնթոյի Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ «Յովնանեան» սրահէն ներս: Ճամբարը սկիզբ առաւ Եկեղեցւոյ մէջ՝ Տէրունական աղօթքի եւ Կիրակնօրեայի մաղթերգի երգեցողութեամբ: Բաժանմունքի Վարիչ՝ Հոգեշնորհ Տ. Յակոբ Վրդ. Եագուպեան կատարեց ճամբարի բացումը եւ բարի գալուստ մաղթեց բոլոր երեխաներուն: Հայր Սուրբը ներկայացուց օրուան թեման եւ բացատրեց ծրագրի հանգրուանները:

8 Փետր.2026-ին, Կոմիտաս եւ Նարեկացի դասարաններու աշակերտներ ընկերակցութեամբ ուսուցիչներու այցելեցին, շրջանիս թիւ 244 Հրէջներու կեդրոն եւ նուիրեցին 30 պայուսակներ, որ իր պարունակէր կենցաղային իրեղեններ, որպէսզի անոնք իրենց կարգին նուիրէն անտուն մարդոց:

Յառաջիկայ տարուան ծրագիրներ.

1-Pixton յայտագրով պիտի կատարենք մեր պատուական դասաւանդութիւնը **ՆՈՐԱԾԻԼ**

ՀԱԲԱՏՔ, ԹԵՐԹԻԿԻՆ մէջ:

2-Ապրիլ 12-ին, այցելութիւն դէպի ազարակ մը:

3-Ապրիլ 18-ին, ուսուցչական կազմը եւ օգնականները պիտի այցելեն «Երաժշտական» սրահ:

Այս առթիւ Կիրակնօրեայ դպրոցի, տեսչութիւնը, ուսուցչական կազմը եւ աշակերտութիւնը, խորին շնորհակալութիւն կը յայտնեն, եկեղեցւոյ Հոգեւոր Հայրերուն, Հոգաբարձական կազմին, որոնք միշտ նիւթաբարոյեական իրենց օժանդակութեամբ սատար կը հանդիսանան կիրակնօրեայ դպրոցին վերելքին եւ յառաջդիմութեան:

Ե. ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Թորոնթոյի Սուրբ Աստուածածին Հայոց Առաքելական եկեղեցւոյ Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբը վերակազմուեցաւ Մայիս 2025-ին, առաջնորդութեամբ Հայր Գարեգին Ծ. Վրդ. Շիրտմեանի, Տէր Տաթև Ա. Քահանայ Միքայէլեանի եւ հոգաբարձութեան:

Յանձնախումբի անդամներն են՝

Աննա Սըղման- Ատենապետ

Ալին Քարկոցեան - Հաշուապահ եւ Գանձապահ

Ռիթա Խաչոյեան- Ատենադպիր

Ռաֆայէլ Առաքելեան

Սահակ Քերմենեկեան

Հուրինա Պերպերեան

Գրիգոր Արթինեան- Հոգաբարձական կապ

Յանձնախումբը կ'առաջնորդէ եկեղեցւոյ հոգեւոր տեսուչ՝ Հայր Գարեգին Վարդապետ Շիրտմեան:

Յանձնախումբը վերսկսաւ իր գործունէութիւնը 19 Մայիս 2025-ին: Ժողովները կը գումարուին շաբաթական դրութեամբ, սովորաբար երկուշաբթի երեկոյեան, ժամը 8:30-էն սկսեալ:

Ծրագիրները հետեւեալն են՝

1. Մշտական ծրագիրներ

Ա. Սուրբ Գրքի Սերտողութիւն (18–40 տարեկաններու համար)

Սերտողութիւնը տեղի կ'ունենայ ամսուան երրորդ Չորեքշաբթի երեկոյեան, ժամը 8:30-էն սկսեալ, Յովնանեան սրահէն ներս:

Սերտողութեան աւարտին, յանձնախումբը կը պատրաստէ հիւրասիրութիւն եւ կը կազմակերպէ ընկերային յայտագիրներ, ինչպէս՝ քարաոքէ, պինկօ, կրակի շուրջ հաւաք, խաղեր, փոթլաք, ազատ զրոյց եւ այլն:

Առաջին սերտողութեան հաւաքը տեղի ունեցաւ 18 Յունիս 2025-ին, եւ մինչեւ օրս տեղի ունեցած են ինը սերտողութեան հանդիպումներ, առաւելագոյն ներկայութեամբ 38 մասնակիցներու:

Բ. Յիսուսի Փոքրիկները — Պատմութեան ժամ՝ յատկացուած 2-5 տարեկան փոքրիկներուն:

Ծրագիրը տեղի կ'ունենայ երկշաբաթեայ դրութեամբ՝ շաբաթ օրերը առաւօտեան ժամը 10-11:00:

Հանդիպումները կը կատարուին եկեղեցւոյ Յովնանեան սրահին մէջ, ուր փոքրիկները իրենց ծնողներուն հետ միասին կը լսեն Սուրբ Գրքի պատմութիւն, կը կատարեն ձեռնարկն աշխատանքներ եւ տեղի կ'ունենայ հիւրասիրութիւն: Առաւելագոյն մասնակցող փոքրիկներուն թիւը հասնելով 36-ի:

Ծրագիրը լոյս տեսաւ 13 Սեպտեմբերին, եւ մինչեւ այսօր ունեցած ենք 12 պատմութեան հաւաքներ:

2. Յատուկ ձեռնարկներ

Տարուան ընթացքին կը կազմակերպուին նաեւ յատուկ ձեռնարկներ՝ տարբեր առիթներով: Սուրբ Ծննդեան առիթով ունեցած ենք տասներկու տարբեր նախաձեռնութիւններ, որոնք են՝

1. Եկեղեցւոյ Զարդարանք:
2. Ծառի Լուսաւորում եւ Շաքանակի Բաժանում:
3. Սուրբ Գրքի Սերտողութիւն եւ Հաւաքոյթ:
4. «Յիսուսի Փոքրիկներ»ու Սուրբ Ծննդեան Յատուկ Հաւաք:
5. Ծառայութիւն Daily Bread Food Bank-ին մէջ:
6. Ծերանոցի Այցելութիւն:
7. Սուրբ Պատարագ՝ ժողովուրդի Մասնակցութեամբ եւ Երգեցողութեամբ:
8. «Եկէք Միասին Երգենք» (Sing-Along) Հոգեւոր Երգեցողութեան Երեկոյ:
9. Աւետիսի Երգեցողութիւն:
10. 33-րդ Բաժանմունքի Ոստիկանութեան Խաղալիքներու Հաւաք:
11. Նամակ Կաղանդ Պապային:
12. Չփչացող Սննդամթերքի Հաւաք:

Զ. ՏԻՎՆԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Ս. Աստուածածին եկեղեցւոյ Տիկնանց Յանձնախումբի անդամներն են

- Սալիպեան Արփի
- Վեսոյեան Արփի
- Զաքարեան Ալիս
- Պետրոսեան Սեդա
- Ուզունեան Մայտա
- Ալեքսանեան Մայտա

Հոգաբարձութեան կապն է՝ Սիլվանա Պապիկեան:

Տիկնանց Յանձնախումբը հոգաբարձութեան կողքին աշխատելով կը սատարէ եկեղեցւոյ նիւթական եւ վարչական աշխատանքային շատ մը կարիքներուն:

Կը ներկայացնենք Տիկնանց յանձնախումբի գործունէութիւնը.-

- Տարիներու սովորութեան համաձայն տիկնանց յանձնախումբի նուիրեալ տիկնայք, անխափան կը շարունակեն կատարել կիրակնօրեայ սուրճի եւ անուշեղէնի սպասարկութիւնը, ինչպէս նաեւ թաղման առիթներով հոգեճաշի սպասարկութիւնը:
- Այս տարի Ս. Սարգիսի Տօնին առիթով, Առաւօտեան ժամերգութենէն ետք, յանձնախումբը կազմակերպեց նախաճաշի հիւրասիրութիւն մը բոլոր ներկաներուն համար: Նաեւ ներկաներուն բաժնուեցաւ Ս. Սարգիսի հալվան:
- Բազմաթիւ անգամներ տարուան ընթացքին, յանձնախումբը պատրաստած է պանիրով պոռակ եւ Թահինով հաց ու զանոնք վաճառելով նիւթական կոկիկ եկամուտ ապահոված է մեր եկեղեցոյ:
- Ս. Ծննդեան, Զատիկուան եւ Աստուածածնայ տօներուն առիթով յանձնախումբի անդամները եկեղեցոյ գաւիթին մէջ կանգնած գոգարթները զետեղած են եկեղեցոյս հաւատացեալներուն լամբակներուն վրայ:
- Ս. Ծննդեան ճաշկերոյթին, պատրաստեցինք պանիրով պոռակ եւ հիւրասիրեցինք ներկաները:
- Աւագ Ուրբաթ օրուան պատարագէն ետք, յանձնախումբը ներկաները հիւրասիրեց պահքի յատուկ ոսպ-քուֆթայով եւ աղցանով:
- Յանձնախումբը իր ներդրումը բերած է Ս. Աստուածածնայ Վերափոխման Տօնին առթիւ տեղի ունեցող երկօրեայ Քերմէսի աշխատանքներուն:
- Ճաշի սպասարկութիւն Ս. Խաչի Տօնին առիթով, եւ Մոնթրէալէն դէպի Գեմպրիճ գացող ուխտաւորներուն համար:
- Միջինքին պատրաստեցինք պահքի ճաշեր եւ վաճառեցինք – (Food Sale)
- Եկեղեցոյս տարեկան տօնավաճառին առիթով որ տեղի ունեցաւ 6 Դեկտեմբերին եւ 7-ին պատրաստեցինք ճաշեր եւ վաճառեցինք գոյացնելով կոկիկ գումար:

Է. ԼՈՒՍԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այս յանձնախումբը պատասխանատու է Եկեղեցոյ մաքրութեան եւ Ս. Խորանի կոկիկ դասաւորման ու զարդարման:

Անոնք ամէն շաբաթ, տօնական օրերուն եւ հարսանիքներէն ետք, մեծ հոգատարութեամբ ու բժախնդրութեամբ կ'ապահովեն մեր Եկեղեցոյ ամբողջական մաքրութիւնն ու կոկիկութիւնը:

Այս յանձնախումբի անդամներն են՝

- Գաւասեան Մարալ
- Ճամճէքեան Մարալ
- Աթանոսեան Սեւան
- Իշխանեան Վիքթօրիա
- Մուրատեան Մանուշ
- Արթին Էլիզ
- Սիմոնեան Հռութ
- Կարապետեան Անի

- Աւագեան Աննա

Իսկ Հոգաբարձութեան կապն է՝ Տիար Տարօն Տէրտէրեան:

Ը. ԲԱՆԿԱԼԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Այս յանձնախումբի պարտականութիւնն է Կիրակի օրերը հսկել Եկեղեցւոյ գաւիթը, ապահովել մոմերը, եւ «ՄԱՍ»ի բաշխումը ներկայ հաւատացեալներուն:

Բանկալի յանձնախումբի անդամներն են՝

- Մարտիրոսեան Գրիգոր
- Մարտիրոսեան Շանթ
- Պետրոսեան Սեւան
- Խաչօ Ժան
- Արթին Յարութ
- Աւետիս Աւետիս
- Պոյաճեան Առէթ
- Օհանէս Խաչիկ
- Աբրահամ Ջուլճեան

Հոգաբարձական կապ՝ Կարօ Սրկ. Սարգիսեան

Թ. ԸՆԿԵՐԱՅԻՆ ՑԱՆՑԵՐՈՒ ՑԱՆՁՆԱԽՈՒՄԲ – (DIGITAL MEDIA)

Ընկերային ցանցերու այս յանձնախումբի երիտասարդ աշխատակազմը շաբաթական դրութեամբ կը տանին պատասխանատու, բժախնդիր և մասնագիտական աշխատանքներ, ներկայացնելով մեր եկեղեցին համացանցի վրայ:

Կը ներկայացնենք այս յանձնախումբի գործունէութիւնը՝

- Առցանց սփռել եկեղեցիէս ներս կատարուած Պատարագները, արարողութիւնները և ձեռնարկները հետեւեալ ցանցերուն վրայ.- Facebook, Youtube, Instagram.
- Հրատարակել եկեղեցիէս ներս տրուած Քարոզներու տեսերիզները
- Ուղղարկել «Եկեղեցի» շաբաթաթերթիկը ե-նամակով մեր հաւատացեալներուն
- Ուղղարկել այլ ե-նամակներ (յայտարարութիւններ, մահազոյներ, ելն...)

Այս յանձնախումբը կ'օգտագործէ հետեւեալ ցանցերը եւ միջոցները, հասցնելու համար մեր առաքելութիւնը աշխարհին.- Facebook, Youtube, Mailchimp + MS Word, Instagram, Wordpress, Google Workspace, Photoshop + Wikipedia, Twitter, LinkedIn, Restream, paypal եւ Square-ին վրայ:

Այս յանձնախումբի Հոգաբարձական կապն է՝ Արթիւր Սրկ. Սէրգիս:

Յանձնախումբի անդամներն են ըստ իրենց մասնագիտութեան՝

- Տանայեան Արագ (Mailchimp)
- Պէրպէրեան Լորի (Mailchimp)
- Թորոսեան Նաթալի (Mailchimp)
- Տէրտէրեան Տարօն (Mailchimp, facebook, google workspace)
- Ճէնանեան Մանօ (Facebook, Youtube, Restream)

- Սարգիսեան Արաքս (Facebook)
- Մուրատեան Նովա (Facebook)
- Սէրգիս Արթիւր (Wordpress, Youtube, Restream)
- Կիրակոսեան Յակոբ (Wordpress, MS Word/Print, Website)
- Աթանոս Նորհայկ (Restream, MS Word/Print)
- Կիտանեան Սարգիս (Facebook, Paypal, Twitter, LinkedIn, Wikipedia)
- Թասկօղլու Անէթ (Photoshop)
- Աթանոս Այգ (Website)
- Ֆրէնտեան Նիգրլլու (Website)

Լուսանկարչութեան պատասխանատու անդամներ՝

- Մուրատեան Նովա
- Աթանոսեան Նորհայկ

Կենդանի սփռումներու պատասխանատու անդամներ՝

- Ճէնանեան Սանօ
- Տէրտէրեան Տարօն
- Կիրակոսեան Յակոբ
- Աթանոսեան Նորհայկ

Մեր եկեղեցոյ կրնաք հետեւիլ համացանցի վրայ հետեւեալ կապերով.-

Email: office@stmarytoronto.ca

Website: www.stmarytoronto.ca

Facebook page: <https://www.facebook.com/stmarytoronto/>

Youtube Page: <https://www.youtube.com/user/stmarytoronto>

Instagram page: <https://www.instagram.com/stmarytoronto/>

Twitter page: <https://twitter.com/stmarytoronto>

Wikipedia page: https://en.wikipedia.org/wiki/St._Mary_Armenian_Apostolic_Church

Եկեղեցոյ **Է-նամակները և Էլէքտրոնային Թերթիկը** ստացողներու ներկայի թիւն է **1,375** (բաղդատմամբ 1,375-ի 2023 տարուայ աւարտին), որոնցմէ միջին եզրով **567**-ը

հետեւողական կերպով կը բանան Է-նամակի բովանդակութիւնը (unique opens **41%**):

Եկեղեցոյ **Youtube**-ի էջի արձանագրուողներու ներկայի թիւն է (**1,140**), բաղդատմամբ 1,140-ի 2023 տարուայ աւարտին ... (յաւելումը... **25.8%** է):

Եկեղեցոյ **Facebook**-ի էջի արձանագրուողներու ներկայի թիւն է (**6,763**), բաղդատմամբ 6,763-ի 2023 տարուայ աւարտին (յաւելում **14.8%**):

Եկեղեցոյ **Instagram**-ի էջի արձանագրուողներու ներկայի թիւն է (**837**), բաղդատմամբ 837-ի 2023 տարուայ աւարտին (յաւելում **55.2%**):

Ժ. «ՄԱՍ»-Ի ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Այս յանձնախումբի անդամներն են:-

- | | |
|---------------------|------------------|
| • Սարգիսեան Նորա | • Պետրոսեան Սեդա |
| • Զաքարեան Վրէժուհի | • Զաքարեան Անժէլ |

- Տարագճեան Մարի
- Զարբարեան Անահիտ
- Գաբրիէլեան Մարալ
- Շաննաքեան Մարալ
- Ուզունեան Մայտա
- Խարման Արաքսի
- Գաբրիէլեան Նազիկ
- Քէօսէյեան Զեփիւտ
- Խաչատուրեան Սիրվարդ
- Օհաննէսեան Լօրիս
- Ճանսրգեան Թագուհիս

Ամիսը մէկ անգամ, կամ ի պահանջել հարկին, կը պատրաստուի «ՄԱՍ»-ը եկեղեցոյս մէջ: Իսկ եկեղեցոյ Նշխարը կը պատրաստէ մեր սիրելի երեցկինը՝ համեստափայլ տիկ. Սօսի Միքայէլեանը:

ԺԱ. ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՀՈՂԱՇԵՐՏԵՐՈՒ ՎԱՃԱՌՔԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Այս Յանձնախումբի անդամներն են՝

- Յարութ Մաթոսեան
- Մոմճեան Ժան
- Գասապեան Յարութ
- Շիթիլեան Գրիգոր
- Մաֆարեան Արմիկ
- Արթիւր Սրկ. Սերգիս
- Ասպէտ Կիս. Սրկ. Սդման

Հոգաբարձութեան կապ՝ Տիար Արմենակ Գալուստեան

- Եկեղեցին ունի գերեզմանատան հողաշերտեր 3 վայրերէ- Եորք (York) Գերեզմանատուն, Pickering-ի Duffin Meadow գերեզմանատուն, Elgin Mills գերեզմանատուն: Այս բոլոր գերեզմանատուներու մէջ ունինք հողաշերտերու քանակ մը որ մինջ օրս փոփոխութեան ենթարկուելուն պատճառով ճղգրիտ քանակը պիտի ներկայացուի Անդամական Ընդհանուր Ժողովին:
- Նայելով աճը մեր գաղութին, Հոգաբարձութիւնս որոշած է յաւելեալ հողաշերտեր գնել ապահովելու մեր գաղութի պետքերը որ պիտի ներկայացուի եւս Անդամական Ընդհանուր Ժողովին:

ԺԲ. ԱՆԴԱՄԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Յանձնախումբի անդամներն են՝

- Նաճարեան Հուրի (Ատենապետ)
- Խաչօ Մարինա (Ատենադպիր)
- Սիմոնեան Հռութ
- Տէր Յակոբեան Աննա

- Արթին Ատրինե
- Փափազեան Նշան

Հոգաբարձության Կապ` Տիար Գրիգոր Պեպեճեան

Անդամական յանձնախումբը այս տարեշրջանին գումարեց 6 ժողովներ և 3

աշխատանքային հանդիպումներ և անոնց ընթացքին ծրագրեց և իրագործեց յանձնախումբին աշխատանքները:

Կը ներկայացնենք 2025-2026 տարեշրջանի անդամական յանձնախումբի գործունեութիւնը.-

Անդամարշաւ: Այս յանձնախումբի հիմանական աշխատանքներէն մէկն է ներգրաւել նոր տրատու անդամներ և բացատրել անոնց եկեղեցւոյս անդամակցութեան կարեւորութիւնը: Յանձնախումբս տարուայ ընթացքին շարունակեց տանիլ անդամարշաւի աշխատանքը, ներկայ ըլլալով և դիմումնագրեր բաժնելով եկեղեցւոյ գաւիթէն ներս իւրաքանչւր ամսուայ երկրորդ Կիրակին: Նաեւ փետրուար ամիսը հոչակուեցաւ անդամարշաւի ամիս և յանձնախումբիս անդամները ներկայ էին գաւիթէն ներս ամէն Կիրակի Յունուար ամսունէ սկսեալ մինչեւ Փետրուարի վերջը:

Յանձնախումբս քաջալերեց և ջանաց եկեղեցւոյս յանձնախումբերու և դպրաց դասերու անդամներուն դարձնել տարատու անդամներ իրագործելու թեմիս կանոնագրութեան յօդուած 89-ն:

Անցեալ տարուայ ընթացքին յանձնախումբիս անդամները նաեւ աշխատանք տարին մօտենալու զանազան անհատներու հրաւիրելու զանոնց որպէսզի դառնան տրատու անդամ, ի մասնաւորի թիրախ ունենալով անձերու որոնք կրնան յետաքրքրուած ըլլալ յառաջիկային վարչական պաշտօններ ստանցնել մեր եկեղեցիէն ներս:

Յանձնախումբս շարունակեց **տրատու անդամացանկի** յարատեւ ստուգումն ու վերադասաւորումը:

- Ներկայիս ունինք 875 տրատու անդամներ անդամացանկին վրայ, որոնցմէ մօտ 360-ը կը նկանենք գործոն:
- 15 անդամներ որոնք մահացած են 2025 տարուայ ընթացքին:
- 10 նորագիր տրատու անդամներ այս տարեշրջանին ընթացքին
- Յանձնախումբս կը շարունակէ հետեւողականօրէն թարմացնել **Եկեղեցւոյ Ընդհանուր անդամներու ցանկը (Database)**
- 22 Փետրուար, 2026-ին տեղի ունեցաւ նորագիր տրատու անդամներու **ծանօթացման հանդիպում**ը հոգեւոր հովիւներու հետ: Նորագիր անդամները ստացան իրենց Անդամական վկայագիրերը:

- Յանձնախումբիս առաջարկով և ջանքերով, տպագրուեցան **250 գունազարդ պահարաններ (envalops)** որոնք պիտի պարունակեն իրենց մեջ տեղեկություններ եկեղեցւոյ գործունէութեան, գրասենեակին և հոգեւոր գործունէութեան մասին, ինչպէս նաեւ եկեղեցւոյս անդամ դառնալու դիմումագիրք: Ծրագրուած է որ այս պահարանները տրուին նորապսակ զոյգերուն և մկրտուող մանուկներու ծնողներուն:

«Ազգակերտում» Դասախօսական Ցերեկոյթ

Հովանաւորութեամբ Գանատայի Հայց Թեմի Առաջնորդին, Կիրակի, 9 Նոյեմբեր 2025-ին, Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցիէն ներս յանձնախումբս կազմակերպեց «Ազգակերտում» խորագրով դասախօսական ցերեկոյթ մը:

Ձեռնարկին ներկայ էին Թորոնթոհայ գաղութի միութիւններէ և ազգային մարմիններէ բաղկացած բազմութիւն մը:

Օրուան առաջին հիւր դասախօսն էր՝ Տիար Համբիկ Գարայեանը, որ յատուկ ժամանած էր Մոնթրէալէն: Պրն. Գարայեան իր յատուկ ու գրաւիչ ոճով ներկաներուն փոխանցեց «Հայակերտում ու Ազգային ինքնութեան պահպանում» թեմայով ներկայացումը եւ աւարտին պատասխանեց ներկաներուն հարցումներուն:

Ինկ Երկրորդ հիւր դասախօսն էր Տիար Խաչիկ Տէտէանը, որ ներկայացուց «Հայ Առաքելական Եկեղեցւոյ Ազգային Դիմագիծն ու Նկարագիրը» այժմեական կարեւորագոյն թեման:

Ցերեկոյթի Բեմավարն էր Տոքթ. Գրիգոր Սրկ. Պէպէճեան: Իսկ գեղարուեստական ընդմիջման յայտագիր ներկայացուց Տիար Նշան Փափազեան իր ջութակով:

Ձեռնարկի աւարտին, եկեղեցւոյս Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Տաթեւ Ա. Քահանայ Սիքայէլեան փոխանցեց իր եզրափակիչ խօսքը եւ աղօթքով յայտարարեց միջոցառման աւարտը: Ապա, Անդամական Յանձնախումբի անդամները, Տէր հօր գլխաւորութեամբ, գնահատական յուշնուէրներով պարգեւատրեցին օրուան դասախօսները:

- Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաք. Եկեղեցւոյ Ընդանուր Գործունէութեան Հարցախոյզ (2026) St. Mary Armenian Apostolic Church of Toronto Survey on Operations and Community Engagement (2026)

Յանձնախումբս նախաձեռնած է պատրաստած է առցանց հարցախոյզ մը, իմանալու Թորոնթոհայ գաղութի տեսակէտերը եւ կարեւոր դիտարկումները՝ մեր եկեղեցւոյ ներկայ գործունէութեան եւ անոր ապագայի տեսլականին մասին:

Հարցախոյզը ուղղարկուեցաւ 3 հիմնական խումբերու՝

1. Եկեղեցւոյ յանձնախումբերու և դասերու անդամներուն (մօտաւորապէս 150 անձերու)

2. Թորոնթոյի Հայ Կեդրոնի միութիւններու վարչութիւններու անդամներուն (մօտաւորապէս 150 անձերու)
3. ՀՕՄԻ ամէնօրեայ վարժարանի հայ ուսուցիչներուն (մօտաւորապէս 50 անձերու)

Այս հարցախոյզը կը միտի հասկնալու մեր անդամներուն եւ համայնքին ընկալումները մեր եկեղեցւոյ ծրագիրներուն, հաղորդակցութեան միջոցներուն, հոգեւոր ծառայութեան, ձեռնարկներուն եւ ընդհանրապէս մեր առաքելութեան նկատմամբ:

Հայցախոյզը երկլեզու է ու անանուն: Հարցախոյզը ուղղարկուեցաւ Փետրուար 2026-ի սկիզբը:

Յանձնախումբս կը միտի այս հարցախոյզի արդիւնքները ներկայացնել յառաջիկային, հոգաբարձութեան հայեցողութեամբ կազմակերպուած հաւաքի կամ անդամական ժողովի մը ընթացքին:

Յաջորդ տարեշրջանի համար յանձնախումբիս նախատեսած ծրագիրները-

- Շարունակել անդամարշաւի աշխատանքը և ներգրաւել նոր տրատու անդամներ:
- Կազմակերպել դասախօսութիւն ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառի հռչակած «Հոգեւոր կեանքի վերանորոգման» տարուայ մասին:
- Թարմացնել և յաւելացնել Յանձնախումբիս անդամներու թիւը

ԺԳ. ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Կրթաթոշակի Յանձնախումբը, նշանակուած 2024 թուականին, շարունակեց իր երկրորդ տարուան աշխատանքը եւ կազմեց իր դիւանը հետեւեալ ձեւով՝

Դոկտ. Սոնա Սարգիսեան – Ատենապետ

Տիկ. Խաթուն Մելիքեան – Քարտուղար

Բրշ. Միրան Սրկ. Թոնամեան – Խորհրդական

Բրշ. Կարօ Սրկ. Սարգիսեան - Հոգաբարձութեան Կապ

Յանձնախումբս իր տարեսկիզբի հանդիպումներու ընթացքին վերատեսութեան ենթարկեց երկլեզու կրթաթոշակի յայտարարութիւնը, ինչպէս նաեւ կրթաթոշակի դիմումնագիրը, աւելցնելով «Բուչիկեան Ընտանիքի Համալսարանական Մրցանակ-Կրթաթոշակ»ը որ հաստատուած է նուիրուած էր 2024 թուին, Եկեղեցւոյ Հոգաբարձութեան մէկ կրթաթոշակի կողքին:

Կրթաթոշակի յայտարարութիւնները սկսան 30 Մայիս 2025-ին եւ դիմումնագրի ժամկետն էր 30 Հոկտեմբեր, 2025: Կրթաթոշակի յայտարարութիւնները սփռուեցան այլազան միջոցներով:

Յանձնախումբս ստացաւ եօթը դիմումնագրեր:

Բոլոր դիմումնագրերը բժախնդրօրէն սերտուեցան յանձնախումբին կողմէ, նկատի առնելով կրթաթոշակի հետեւեալ պայմանները՝

- «Թեկնածուն պետք է արձանագրուած ըլլայ Օնթարիօ նահանգի համալսարանի մը մէջ որպէս երկրորդ, եւ կամ աւելի բարձր տարուայ ուսանող:
- Թեկնածուն պարտի ամբողջացնել դիմումնագիրը եւ կցել հետեւեալ փաստաթուղթերը.-
 - Համալսարան ընդունման եւ արձանագրուած համապատասխան հաստատագիր:
 - Համալսարանի նիշերու վիճակացոյց:
 - Երկու յանձնարարագրեր՝ մէկը Համալսարանէն, իսկ երկրորդը՝ հայկական կազմակերպութենէ մը Թորոնթոյի մէջ:
- Ուսանողներու ընտրութիւնը կը կատարուի բարձրագոյն նիշերու (GPA 3.0 եւ աւելի միջին), ինչպէս նաեւ եկեղեցոյ եւ կամ գաղութէն ներս շարունակական կամաւոր ծառայութեան հիման վրայ:»

Յանձնախումբս Եկեղեցոյ հովիւներուն եւ հոգաբարձութեան կը ներկայացնէ հետեւեալ չորս ուսանողներու անունները, իբր այս տարուան համալսարանական կրթաթոշակի հաւանական թեկնածուներ (եթէ նիւթապէս հնարաւոր է), որոնք ամբողջացուցած են վերոյիշեալ բոլոր պայմանները՝

- 1) Մեսրոպեան Վարագ
- 2) Արթունեան Անուշ
- 3) Պետրոսեան Արմէն
- 4) Նաճարեան Մարի-Լիլիթ
- 5) Սիմոնեան Փաթիլ

Յանձնախումբս իր շնորհակալութիւնները կը յայտնէ՝

- Հոգաբարձութեան եւ յանձնախումբի կապ՝ Բրշ. Կարօ Սրկ. Սարգիսեանին, իր օգտակարութեան համար,
- Տիկ. Սինդիա Սարգիսեանին՝ կրթաթոշակի յայտարարութեան պատրաստութեան համար,
- Բրշ. Արթուր Սրկ. Սերգիսին՝ դիմումնագրի պէտք եղած փոփոխութեան եւ կայքէջի վրայ զետեղման համար:

ԺԴ. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Այս յանձնախումբը կը զբաղուի եկեղեցոյս շէնքի նորոգութեան հարցերով:

Յանձնախումբի անդամներն են՝

- Սարգիսեան Ռաֆֆի Սրկ.
- Շիրիլեան Գրիգոր
- Մարտիրոսեան Գրիգոր
- Վարդապետեան Հրակ
- Ակոբեան Հայկ
- Սարգիսեան Նուշիկ
- Պէպէճեան Գրիգոր Սրկ.
- Սարգիսեան Կարօ Սրկ.

Հոգաբարձական կապ՝ Տարօն Կիս. Սրկ. Տէրտէրեան

Յանձնախումբը կը ջանայ ամսական դրութեամբ կատարել իր ժողովները կամ աշխատանքային հանդիպումները:

Յանձնախումբը իր տարուայ ծրագիրը բաժնեց 4 մասերու, իւրաքանչիւրը 3 ամսուայ համար: Այս բաժնին մէջ կը ներկայացնենք 2025 տարուան ընթացքին Շինարարական յանձնախումբի տարած աշխատանքները:

2025-2026 Տարեշրջանին ընթացքին տեղի ունեցած նորոգութիւններ՝

- Եկեղեցոյ բոլոր դռներու կղպանքներու փոփոխութիւն (ոգտագործելով Anti Hate կառավարական նպաստը)
- Եկեղեցոյ ներքնայարկի գրասենեակներու, սրահի եւ անցքերու լոյսերու փոփոխութիւն (որոնց ապրանքը որպէս նուէր ստացանք)
- Գրասենեակի Հեռաձայններու փոփոխութիւն (Voip phones), որոնցմով պիտի կարողանանք եկեղեցոյ գրասենեակի ստացուած հեռաձայները աւելի գործնական ձեւով բաժնել պաշտօնէութեան վրայ եւ նաեւ փոքր խնայողութիւնն մըն ալ ընել ամսական հեռաձայնի ծախսէն:
- Ըստ նախորդ տարեշրջանի Sysco Mechanics Inc. Ընկերութեան հետ համաձայնագրի ստորագրութեան եկեղեցոյ մայր յարկի եւ յետ քննարկումի փոփոխութիւնը կատարուեցաւ նաեւ գրասենեակներու HVAC-ի մեքենաներու: Բոլոր մեքենաները Եկեղեցոյ շինութեան օրէն ի գործի դրուեցան (35 տարի)եւ կարիքը ունէին փոխուելու:
- Տանիքի ամբողջական նորոգութեան համաձայնագիրը ստորագրուեցաւ մասնագէտ խորհրդատուի (W. Allen Partners) խորհրդակցելէ ետք, որը կազմակերպեց յարմարագոյն գինի առաջարկի մրցոյթ մը, մի քանի հանրաձայնօթ տանիքի նորոգութեան ընկերութիւններու միջեւ: Գործը շնորհուեցաւ Skyluxe Roofing Ընկերութեան, որպէսզի մեծածաւալ աշխատանքը սկսի 2025-ի աշնան, նայելով Վեհափառի այցին եւ դպրոցի վերամուտին հետ խաչաձեւում չառաջացնելու պատճարով: Գործը սկսաւ Նոյեմբեր 2025ին ու աւարտը կը սպասուի 2026-ի Մեծ Պահքի աւարտէն առաջ: Պահելով հիմնական շինարարութեան նպատակը եւ այն ճարտարապետութեան տեսլականը որ կար եկեղեցոյ շինութեան բնագրին մէջ՝ լրիւ տանիքը պիտի վերափոխուի նոր տախտակէ հիմքով, նոր ջրապաշտպան մաշկով, նոր սեւ հերձաքարի պատումով՝ ջրատարներու ամբողջական վերափոխումով ու արտաքին պատերու լուացումով:

Ծանօթ: Հոգաբարձութիւնս նամակով տեղեկացուցած է Թեմիս Ազգային Վարչութիւնը և Առաջնորդարանը մեծածաւալ ու ծախսալից այս նորոգութիւններու մասին եւ ստացած անոնց վաւերացումը, իր լրումին հասցնելու համար այս անհրաժեշտ նորոգութիւնները:

ԺԵ. ՀԱՇՈՒԱՊԱՀԱԿԱՆ ԽՄԲԱԿ – DATA ENTRY AND BOOK KEEPING GROUP

Այս խմբակը կազմուեցաւ օժանդակելու հոգաբարձութեան հաշուապահին, կատարելու եւ ստուգելու համար հաշուական արձանագրութիւններ, հոգաբարձութեան անմիջական հսկողութեամբ եւ պատասխանատութեամբ:

Այս խմբակի անդամներն են՝

- Սարգիսեան Նորա (Credit card and Dignats bookkeeping)
- Սղման Կիւ. Սրկ. Ասպէտ (Cemetery Bookkeeping)
- Արմոեան Ժանօ (Data Entry)
- Պոյաճեան Առէթ (Data Entry)
- Կիրակոսեան Սրկ. Յակոբ (Digitizing and scanning expenses receipts)

Հոգաբարձական կապ՝ Արթիւր Սրկ. Սերքիս (Հոգաբարձութեան կապ)

Ծանօթ.- Այս խմբակի անդամները չունին իրաւաստութիւն կամ լիազօրութիւն տեղեկանալու եկեղեցւոյ ընդհանուր հաշիւներուն կամ որեւէ այլ ազդեցիկ մանրամասութիւններու մասին:

Հոգաբարձութեան կազմի հաշուապահի առաջնորդութեամբ, այս խմբակը հանդիպում ունեցաւ եկեղեցւոյս պաշտօնական հաշուապահ՝ Տիար Էտի Զին հետ եւ անոր հետ արծարծեցին հաշուական զանազան մանրամասն նիւթեր: Այս տարի նաեւ կիսամեայ վճարովի՝ տօմարակալ բերած օգտակար դառնալու տարուայ առօրեայ ծախսերը տօմարի անցնելու համար:

6. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱԼՈՒԱԾՆԵՐ

Եկեղեցին ունի երկու յարկաբաժիններ 2721 Victoria Park շէնքի մէջ:

Ներկայիս այս կալուածներէն մէկուն մէջ կը բնակի Գերայ. Տ. Գարեգին Ծ. Վ. Շիրտմեանը, իսկ միւսին մէջ՝ Տ. Տաթեւ Ա. Քինյ. Միքայէլեանը:

7. ԿՏԱԿԱՐԱՐՆԵՐ

Յարդ, Ս. Աստուածածին Եկեղեցին ունեցած է 13 կտակարարներ:

- | | |
|----------------------------------|------------------------------------|
| • Հանգուցեալ Յարութիւն Պոտուրեան | • Հանգուցեալ Սալի Խոսրովեան |
| • Հանգուցեալ Վերոնիքա Թանաշեան | • Հանգուցեալ Եօլանդ Պուտազեան |
| • Հանգուցեալ Սիւրբի Փամպուրճեան | • Հանգուցեալ Գուրգէն Գըրգ Մակարեան |
| • Հանգուցեալ Նուարդ Դաւիթեան | • Հանգուցեալ Յարութիւն Եսայեան |
| • Հանգուցեալ Երուանդ Պապոքեան | • Հանգուցեալ Մանիակ Վարդանեան |
| • Հանգուցեալ Լուիզա Անտրիքեան | • Հանգուցեալ Աղանի Լանթոս |
| • Հանգուցեալ Ռուբէն Գասնաքեան | |

Սոյն հանգուցեալներուն հոգեհանգստեան յատուկ արարողութիւն կը կատարենք ամէնտարի Փետրուար ամսուն: Թող Աստուած երկնային խաղաղութեան մէջ հանգչեցնէ անոնց հոգիները եւ անոնց արդար յիշատակը օրհնութեամբ ըլլայ:

Այս տարի չունինք նոր Կտակներ:

8. ՆԻԻԹԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Եկեղեցիս 2025-2026 տարեշրջանի իր նիւթական պարտաւորութիւնները լիովն կատարած է: Ամբողջութեամբ փակած ենք Առաջնորդարանի եւ Հայ Կեդրոնի մեր նիւթական պարտաւորութիւնները:

Հակառակ անոր, Եկեղեցիս կ'անցնի նիւթական բաւականին ծանրաբեռնուած իրավիճակէ: Եկեղեցւոյ վրայ դրուած նիւթական պարտաւորութիւնները յարատեւ յաւելումի մէջ են (Հայ Կեդրոնի վարձքի աճ, Ազգ. Առաջնորդարանի շրջանիս սակի աճ...) որուն հետ չի համապատասխանէր եկեղեցւոյս եկամուտի աճը, հակառակ եկեղեցւոյս հասութեաբեր ձեռնարկները աւելցնելու մեր բոլոր ճիգերուն:

Այստեղ նաեւ հարկ է նշել, որ մեր եկեղեցին դեմ հանդիման կը գտնուի հսկայական անխուսափելի նորոգութիւններու դիմաց, ըլլայ այդ տանիքի փոփոխութիւնը, օդիպայմանաւորիչի մեքենայի փոփոխութիւնը, յարկաբաժիններու նորոգութիւնը, եկեղեցւոյ գետնի գորգերու փոփոխութիւնը, Պահեստարանի նորոգութիւնը, հաշմանդամներու զուգարանի նորոգութիւնը... եւլն:

Այս մեծածաւալ ծախսերը դիմագրաւելու համար հարկ է ապահովել նիւթական եկամուտի այլ աղբիւրներ (հանգանակութեան նոր ձեռնարկներ, Կառավարական նոր նպաստներ ստանալու հնարաւորութիւններ եւ հասութեաբեր ժողովրդային այլ ձեռնարկներ կազմակերպելու միջոցներ..)

Իսկ շինարարական ծախսերը հոգալու միտումով, հանգանակութեան յանձնախումբ մը կազմուեցաւ որ 2025-2026ին կազմակերպէ մեծածաւալ հանգանակութիւն, դիմելով գաղութէս ներս գտնուող բարերարներու եւ նուիրատուներու բազմազան ձեռնարկներ իրականացնելու միջոցաւ:

9. ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԽՕՄՔ

Փակելէ առաջ Եկեղեցւոյս միամեայ գործունէութեան տեղեկագիրը, պարտք կը համարենք մեր սրտաբուխ շնորհակալութիւնները յայտնել Թեմիս Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Բարգէն Արք. Չարեանին, իր հայրական հոգածութեան ու հայրական աջակցութեան համար:

Շնորհակալութիւն նաեւ Ազգային Առաջնորդարանի աշխատակազմին եւ Ազգային Վարչութեան անդամներուն, իրենց համագործակցութեան եւ օժանդակութեան համար:

Մեր երախտագիտութեան յատուկ խօսքը նաեւ մեր եկեղեցւոյ հոգեւոր հովիւներուն, իրենց նուիրեալ եւ ժրաջան ծառայութեան համար:

Շնորհակալութիւն Եկեղեցւոյս յարկին տակ գործող բոլոր յանձնախումբերու անդամներուն, ինչպէս նաեւ Ս. Խորանին սպասարկող սարկաւազներուն, կիսասարկաւազներուն, դպիրներուն, դպրաց դասերու անդամներուն և բոլոր ծառայասէր ու նուիրեալ կամաւորներուն:

Մասնաւոր շնորհակալութիւն մեր բոլոր նուիրատուներուն եւ բարերարներուն:

9- ՎԵՐՋՍԱԲԱՆ ԵՒ ՓԱԿՈՒՄ

Արդ, սոյն միամեայ նիւթաբարոյական ամփոփ տեղեկագրով, գոհունակութեան ու հոգեկան բաւարարութեան որոշ ապրումներով, խոնարհաբար կը ներկայանանք

Եկեղեցւոյս պատկառելի անդամական 72-րդ հաշուառու ընդհանուր ժողովին, լսելու համար ձեր բարի ու արդար գնահատականները, մեր կատարած ու չկատարած բոլոր գործերուն նկատմամբ:

Թող Աստուած օրհնէ ու անսասան պահէ մեր եկեղեցին, ու անոր նուիրեալ ծառայողները եւ համայն մեր հաւատացեալ ժողովուրդը:

Ի դիմաց Ս. Աստուծածին եկեղեցւոյ Հովիբ և հոգաբարձութիւն:

Կարօ Սրկ. Սարգիսեան
Ատենապետ

Սարգիս Սրկ. Կիտանեան
Ատենադպիր

Գարեգին Ծ. Վրդ. Շիրտմեան
Նախագահ

Զեկոյց ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Ընտրողական յանձնախումբս բաղկացած 5 անդամներէ, ընտրուած Ս. Աստուծածին Եկեղեցւոյ 71-րդ Տարեկան Ընդհանուր ժողովին կողմէ, Շաբաթ, 01 Մարտ 2025ին, անդամներն են՝ Հուրի Նաճարեան, Օսիկ Մխսիարթիսեան, Իռէն Թիլիմեան, Տոքթ. Ռազմիկ Պէպէճեան եւ Մելքոն Քարկոցեան: Մելքոն Սրկ. Քարկոցեան իր թեկնածութիւնը

առաջադրուելու պատճառով, 2-րդ ժողովին հրաժարեցաւ ընտրողական յանձնախումբի անդամ ըլլալէ: յանձնախումբը չորս հոգիով շարունակեց իր աշխատանքը:

Յանձնախումբս հոգաբարձութեան կողմէ աշխատանքի հրաւիրուեցաւ 3 Դեկտեմբեր 2025-ին: Յանձնախումբս ունեցաւ վեց առկայ ժողովներ եւ աշխատանքը շարունակեց նաեւ հեռաձայնային եւ առցանց միջոցով:

Եկեղեցւոյս հոգաբարձութեան եւ գրասենեակին կողմէ մեզի փոխանցուած տեղեկութիւններու հիման վրայ կազմուեցաւ հոգաբարձութեան եւ երեսփոխաններու ընտրութեան հաւանական թեկնածուներու ցանկերը, ստուգուեցաւ անոնց տրատու անդամ ըլլալու եւ ըստ կանոնադրութեամբ սահմանուած օրէնքներու համապատասխան անդամակցութեան տարիները, հեռաձայնային եւ անձնական հանդիպումներով ստացանք թեկնածուներու հաւանութիւնը կազմելու ցանկերը:

Այս աշխատանքին համար կապուած ենք աւելի քան 25 տրատու անդամներու հետ, հոգաբարձական կազմին եւ երեսփոխանական թեկնածուներու ցանկերը համալրելու համար:

Ա. Հոգաբարձութեան ընտրութիւն:

Ներկայ հոգաբարձական 9-ը անդամներէ բաղկացած կազմը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը:-

Իրենց շրջանը կը շարունակեն:-

Գալուստեան Արմենակ	Գ. Շրջան	(ընտրուած 2025)
Տերտէրեան Տարօն Կիւ. Սրկ.	Գ. Շրջան	(ընտրուած 2025)
Կիտանեան Սարգիս Սրկ.	Բ. Շրջան	(ընտրուած 2025)
Պապիկեան Սիլվանա	Բ. Շրջան	(ընտրուած 2025)
Սարգիսեան Կարօ Սրկ.	Բ. Շրջան	(ընտրուած 2025)

Վերընտրելի են:-

Պէպէճեան Գրիգոր Սրկ.	Գ. Շրջան
Խանամիրեան Գարօլ	Գ. Շրջան
Սէրգիս Արթիւր Սրկ.	Գ. Շրջան

Արթիւրեան Գրիգոր 3-րդ շրջանը կ'աւարտէ եւ վերընտրելի չէ:

Հոգաբարձական լրացուցիչ կազմին համար պէտք է ընտրել 4 թեկնածուներ, որոնց ընտրութեան համար կը ներկայացնենք հետեւեալ երկպատիկ ցանկը այբենական կարգով:

Խանամիրեան Գարօլ	Գ. Շրջան	(վերընտրելի)
Սէրգիս Արթիւր Սրկ.	Գ. Շրջան	(վերընտրելի)
Պէպէճեան Գրիգոր Սրկ.	Գ. Շրջան	(վերընտրելի)
Գրճալեան Յակոբ	Ա. Շրջան	

Թաշճեան Շահէ	Ա. Շրջան
Տաւուտեան Պետիկ Կիս. Սրկ.	Ա. Շրջան
Տէր Յակոբեան Աննա	Ա. Շրջան
Փափագեան Նշան Դպիր	Ա. Շրջան

Երեսփոխանական ընտրութիւն:

Ներկայ երեսփոխանական կազմը կը բաղկանայ 9-ը անդամներէ:-
Իրենց Բ. Շրջանը կաւարտեն եւ վերընտրելի չեն

Գասապեան Յարութ	Բ. Շրջան	(ընտրուած 2022)
Չաթալեան Նազար	Բ. Շրջան	(ընտրուած 2022)
Սարգիսեան Ռաֆֆի Սրկ.Բ.	Շրջան	(ընտրուած 2022)

Իրենց շրջանը կը շարունակեն:-

Գըլպոզեան Թալին	Ա. Շրջան	(ընտրուած 2024)
Մաթոսեան Յարութ	Ա. Շրջան	(ընտրուած 2024)
Նաճարեան Հուրի	Ա. Շրջան	(ընտրուած 2023)
Շիրիլեան Գրիգոր	Բ. Շրջան	(ընտրուած 2025)
Պէպէճեան Ռազմիկ Սրկ.	Ա. Շրջան	(ընտրուած 2024)
Օհաննէսեան Թամար	Ա. Շրջան	(ընտրուած 2023)

Այս տարեշրջանին համար պէտք է ընտրել 3 երեսփոխաններ. Յանձնախումբս կը ներկայացնէ հետեւեալ երկպատիկ ցանկը այբենական կարգով:-

Աստուրեան Գրիգոր
Հրեշտակեան Արմէն
Պարսամեան Վարանդ
Պէպէճեան Գրիգոր Սրկ.
Սարգիսեան Սոնա
Քարկոցեան Մելքոն Սրկ.

Ստորգրուած՝ Ընտրողական Յանձնախումբի Անդամներ
Հուրի Նաճարեան
Տոքթ. Ռազմիկ Սրկ. Պէպէճեան
Օսիկ Մխսիարթիւնեան
Իոն Թիլիմեան
Մելքոն Սրկ. Քարկոցեան (հրաժարած)